

Սուսան Մարկոսյան

Հայոց լեզու

VI դասարանցիների համար

ԵՐԵՎԱՆ 1996 ՇԱՂԻԿ

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, որպես ՀՀ միջնակարգ հանրակրթական դպրոցի դասագիրք:


ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնչյունաբանություն
Հնչյուն և տառ

1. Բառերն այբբենական կարգով դասավորի՛ր:

Դափնեվարդ, դժոխք, դաշույն, դոդդոջույն, դադար, դարձյալ, դաղձ, դաշունահար, դողէրոցք, դդում, դյութել, դժվարըմբռնելի, դարպասապահ, դղրդյուն:

2. Այբբենական կարգով դասավորիր՝

ա) ուսուցիչներիդ անունները,
բ) դպրոցում գործածվող առարկաների անունները,
գ) անուններն այն առարկաների, որոնք կուզենայիր ունենալ:

3. *Տրված բառերի մեջ մտնող հնչյունները գրի՛ր (փակագծում տրված է, թե քանի հնչյուն կա):*

Օրինակ՝
եղննի (7) - յ, ե, ղ, ե, վ, ն, ի:
Տաթե (5), ամենաերկար (11), երեալ(7), որևէ (6), երանգավորել (12), որկոր (6), անողնաշար (9), ամենաողորմելի (14):

4. Հաշվի՛ր, թե տրված բառերի մեջ քանի տառ, քանի հնչյուն կա:

Օրինակ՝
երկրպակու - 8 տառ, 9 հնչյուն:

Չնաշխարհիկ, սերկևիլ, շնորհակալ, եռատերև, քարայր, Եվրոպա:

5. *Ուղղագրական բառարանից դուրս գրի՛ր բառեր, որոնք բավարարեն տրված պայմաններին*:

Օրինակ՝
5 տառ, 6 հնչյուն - երանգ:
4 տառ, 6 հնչյուն: 5 տառ, 6 հնչյուն: 6 տառ, 7 հնչյուն: 8 տառ, 10 հնչյուն:

6. Նախադասությունները լրացրո՛ւ:

Հայերենի ձայնավոր հնչյուններն են՝ ...:

Հայերենի բաղաձայն հնչյուններն են՝ ...:

7. Գրի՛ր բառեր, որոնց մեջ

ա) ***բ***-ից հետո գրվում է դ
բ) ***բ***-ից հետո գրվում է թ:

8. Գրի՛ր բառեր, որոնց մեջ

ա) ***բ*** -ից հետո գրվում է գ.
բ) ***բ*** -ից հետո գվում է ք:

9. Գրի՛ր բառեր, որոնց մեջ

ա) ***բ*** -ից հետո գրվում է բ.
բ) ***բ*** -ից հետո գրվում է փ:

10. Գրի՛ր բառեր, որոնց մեջ

ա) ***բ*** -ից հետո գրվում է ձ.
բ) ***բ*** -ից հետո գրվում է ց:

11. Գրի՛ր բառեր, որոնց մեջ

ա) ***բ*** -ից հետո գրվում է ջ.
բ) ***բ*** -ից հետո գրվում է չ:

12. *Ուշադրություն դարձրո՛ւ առաջին շարքի բաղաձայնների արտասանությանը և փորձի՛ր կետերը փոխարինել համապատասխան հնչյուններով:*

բ, պ, փ
., կ, ք
դ, ., թ
., ձ, ց
ջ, ճ, .

13. Տրված բաղաձայնները զույգ-զույգ խմբավորի՛ր՝ ըստ օրինակի: Ո՞ր հնչյունը զույգ չունեցավ:

Օրինակ՝

զ-ս:
Վ, շ, դ, ս, ժ, խ, գ, հ, ֆ:

14. Գրի՛ր 12-րդ և 13-րդ վարժություններում ստացած բաղաձայնների շարքերը: Փորձի՛ր գտնել իրար համապատասխանող շարքերը:

15. Գրի՛ր այն բաղաձայնները, որոնք նախորդ վարժության բաղաձայնական շարքերում չկան: Դրանք ո՞ր խմբին կավելացնես:

16. Կետերի փոխարեն գրի՛ր ***ձայնեղ*** և ***խուլ*** բառերը:
Յ, մ, ն, լ, ր, ռ, վ, ղ, զ, ժ, բ, գ, դ, ձ, ջ հնչյունները ... բաղաձայններ են:
Ֆ, խ, ս,շ, հ, պ,փ, կ,ք, տ, թ, ծ, ց, ճ, չ հնչյունները ...բաղաձայններ են:

Վանկ

17. Ա և Բ խմբերի բառերը համեմատի՛ր (ուշադրություն դարձրո՛ւ, թե յուրաքանչյուր բառը քանի՞ վանկից է բաղկացած):

Ա. Տուն, սյուն, ձյուն, դիրք, զենք, մարդ:
Բ. Ատամ, արդյունք, ավազ, կառապան, հեռախոս, կառավարել, հեռուստացույց, կենդանաբանություն:

18. Տրված բառերը վանկատի՛ր (փակագծում տրված է վանկերի թիվը): Պարզի՛ր Ա և Բ խմբերի բառերի տարբերությունը (ուշադրությո՛ւն դարձրու վանկարար ձայնավորներին):
Օրինակ՝
սեղան (2) - սե-դան:
Ա. Անձավ (2), տախտակ (2), հարցնել (2), վերցնել (2), բարձրացնել (3), վարձու (2), դարձնել (2), ենթարկել (3), արկած (2), աստղիկ (2),արծվային (3), թարգմանել (3), առանցքներ (3):
Բ. Գնացք (2), աղմկարար (4), արկածախնդիր (5), կտրտել (3), մտրակել (3), կրկնել (2), սննդամթերք (5), շղթայված (3), գրական (3), խնդրագիրք (3), խնդագին (3), մրցում (2):

19. Տրված բառերը վանկատի՛ր: Ա և Բ խմբերի բառերն ինչո՞վ են տարբերվում (ուշադրությո՛ւն դարձրու **եվ** *հնչյունակապակցությանը):*

Ա. Ձևացնել (3), ձևաբանություն (5), երկթևանի (4), թեթևանալ(4), անձրևոտ (3), արևաշող (4), Երևան (3), սևակնած (3):

Բ. Տձև (2), մկրատաձև (4), թեև (2), վերև (2), անկեղև (3), ոսկեթև (3), արևկող (3), այնուհետև (4), երկարատև (4):

20. Համեմատի՛ր Ա և Բ խմբերի ընդգծված վանկերը, ուշադրությո՛ւն դարձրու բաղաձայն + **յ** *(թյ, րյ, դյ և այլն) հնչյունակապակցությանը:*

Ա. Ա-դյուս, ար-դյունք, ա-լյուր, աղ-բյուր, հա-ղյուր, գը-ղու-թյուն:
Բ. Աղ-յուս, արդ-յունք, ալ-յուր, աղբ-յուր, հար-յուր, դը-ղութ-յուն:

21. Տրված բառերը վանկատի՛ր երկու ձևով (ուշադրությո՛ւն դարձրու բաղաձայն +**յ** *հնչյունակապակցությանը):*

Անկյուն, բարդություն, մատյան, հոբելյար, գոչյուն, գիտություն, սենյակ, մանյակ,Հակոբյան, առյուծ:

22. Վանկատված բառերը վերականգնի՛ր և փորձի՛ր հասկանալ, թե գաղտնավանկի **ը** *հնչյունը ո՛ր դեպքամ է բառի սկզբում լինում:*

Ա. Սըր-բել, սըխ-տոր, սը-լա-նալ, զըր-կել, զը-մըռ-սել, շը-վա-ղել, շը-նոր-հել:
Բ. Ըս-կիզբ, ըսկ-յուռ, ըս-պսա-սել, ըս-սպի-տակ, ըս-տա-նալ, ըս- տու-գել, ըզ-բաղ-մունք, ըզ-բո-սանք, ըզ-գալ, ըզ-գույշ:

23. Տրված բառերը վանկատի՛ր:

Զբաղմունք, զգացմունք, զզայական, սկսել, սպառնալ, ստուգողական, ստվեր, շտեմարան:

Յ, մ, ն, լ, ր, ռ, վ, ղ, զ, ժ, բ, գ, դ, ձ, ջ հնչյունները ձայնեղ բաղաձայններ են:
Ֆ, խ, ս, շ, հ, պ, փ, կ, ք, տ, թ, ծ, ց, ճ, չ հնչունները խուլ բաղաձայններ են:

Երկու ձայնավորների միջև եղած երկու և ավելի բաղաձայններից միայն մեկն է անցնում հաջորդ վանկ: Բայց եթե երկրորդ բաղաձայնը ***յ-ն*** է, նրան նախորդողը կարող է ***յ-ի*** հետ անցնել հաջորդ տող (օրինակ՝ ա*ր-յ*ուն, բայց՝ ա-*ր յ*ուն):

Վանկատման ժամանակ **և**-ով գրվող **եվ** հնչյունակապակցությունը երկու տառով է արտահայտվում, եթե նրա մեջ մտնող հնչյունները՝ ***և***-ն և ***վ***-ն, տարբեր վանկերի կազմում են լինում: Եթե դրանք նույն վանկի կազմում են, և տառով են արտահայտվում:

Տողադարձ

24. Տրված բառերը բոլոր հնարավոր ձևերով տողադարձի՛ր:

Օրինակ՝

աշակերտ – ա-շակերտ, աշա-կերտ:

Բարեկամաբար, կառավարել, արդուկ, դեղատուն, հարավային, հեռախոս, բարձրացնել, անցկացնել, հարթեցնել:

*25. Տրված բառերը բոլոր հնարավոր ձևերով տողադարձի՛ր (ուշադրությո՛ւն դարձրու գաղտնավանկի **ը -ի** գրությանը):*

Օրինակ՝

հետաքրքրական – հե-տա*քրքր*ական, հետա-*քրքրքր*ական, հետա*քրքրք-ր*ական, հետա*քրքրա*-կան:

Բնություն, խստաշունչ, հանգստաբեր, բնակավայր, ստուգել, զգուշորեն:

26. Տրված բառերը բոլոր հնարավոր ձևերով տողադարձի՛ր (ուշադրությո՛ւն դարձրու ***եվ*** հնչյունակապակցության գրությանը):

Օրինակ՝

արևելյան - ա-ր***և***ելյան, ար***և-վ***ելյան, ար***և***ե-լյան:

Ձևավորել, արևադարձային, հետևել, մակերևույթ, կեղևակալել, հևիհև, թեթևակի:

27. Տրված բառերը բոլոր հնարավոր ձևերով տողադարձի՛ր:

Հսկայական, տեղատվություն, սկսել, դպրոցական, մրցանակ, բևեռային, անձրևային:

28. Տրված բառերը բոլոր հնարավոր ձևերով տողադարձի՛ր:

Արևմտյան, թեթևացնել, կրկնակի, պարգևատրել, ձևականություն, յուրաքանչյուր, ձմեռնամուտ, մագաղաթյա:

Տողի վերջում գրվող բառը կարող է բաժանվել երկու մասի ***տողադարձվել***: ***Տողադարձը*** վանկատման հիման վրա է կատարվում:

Տողադարձի ժամանակ գաղտնավանկի ***ը*** հնչյունը գրվում է միայն այն դեպքում, երբ տողադարձվող բառի առաջին մասի վերջին վանկում է, կամ երկրորդ մասի առաջին վանկում:

Տողադարձի ժամանակ ***և***-ով գրվող ***եվ*** հնչյունակապակցությանը երկու տառով է արտահայտվում միայն այն դեպքում, երբ տողադարձի եզրի վանկերի

մեջ է:

Հնչյունափոխություն

29. Տրված բառազույգերում ընդգծված արմատները համեմատի՛ր և գրի՛ր, թե ի՞նչ փոփոխություն է կատարվել:

Օրինակ՝
տպա***գիր***, ***գրա***ճանաչ - **ի**-ն դարձել է **ը**:

Հայրենա*սեր*, *սիր*ալիր: Սպառա*զեն զին*ավառ: Ան*հղձ*, *ըղձ*ալի: Լայնա*սիրտ*, *սրտ*ագին: Մեծա*տուն*, *տն*ական: Բազմա*գույն*, գունագեղ: Հետա*խույզ*, հետա*խուզել*:

30. Գրի՛ր, թե ընդգծված արմատների մեջ ինչ փոփոխություն է կատարվել (փոփոխությունը տեսանելի դարձնելու համար բառը վանկատի՛ր):

Օրինակ՝
կես - *կի*սատ (կի-սատ) – **ե**-ն դարձել է **ի**:
Թիվ-*թվ*անշան(թըվա-նը-շան)-**ի-**ն դարձնել է **ը**:
Անասուն - *անաս*նապահ (**ու**-ն դուրս է ընկել, **սղվել** է:

Տեր - տիրանալ, էջ-իջնել, ինձ- ընձուղտ, գիծ - գծել, աղավնի - աղավնյակ, կաղնի - կաղնուտ, հուր - հրեղեղեն, հիսուն - հիսնամյա, առու - առվակ, աստղ - աստղային:

31. Գրի՛ր, թե ընդգծված արմատների մեջ ի՞նչ փոփոխություն է կատարվել:

Օրինակ՝
վայրկյան - *վայրկեն*ական - ***յա***-ն դարձել է ***և***:
Զյուն - ***ձն***հալ – ***յու***-ն դարձել է ***ը***:
Մատյան -*մատեն*իկ, սառույց -*սառց*ահատ, կառույց - *կառուց*ել, կույտ - *կուտ*ակել:

32. Հնչյունափոխություն բառը բաղադրիչների բաժանի՛ր և դրանց օգնությամբ բացատրիր:

33. Տրված բաղադրիչներով բառեր կազմի՛ր և նշի՛ր, թե ինչ հնչյունափոխություն է կատարվել:

Ոսկի + ա + գույն, փոշի + ա + կուլ, տարի + ա + վերջ, այգի + ա + պան, բարի + ա + կամ:

34. Յուրաքանչյուր շարքից մի բաղադրիչ ընտրի՛ր և բաղադրյալ բառեր կազմի՛ր: Նշի՛ր, թե ի՞նչ հնչյունափոխություն է կատարվել:

Օրինակ՝

գգույշ + անալ - գգուշանալ (*ույ*-ը՝ու):
Ա. Բազում, ամուր, բույր, կապույտ, բույս, ողջույն, որդի, ոսկի.
Բ. -պատիկ, -անալ, -ավետ, -ական, ակ, յա:

35. Տրված բառերին ավելացրո՛ւ **-եր (-ներ), ի, -ով, -ից** *վերջավորությունները: Հնչյունափոխված բառերն առանձնացրո՛ւ և նշի՛ր, թե ինչ հնչյունափոխություն է կատարվել:*

Գիրք, առու, ծաղիկ, լուսին, երկինք, ջուր, հեռագիր:

Միավանկ բառին (արմատին) **արմատ, ածանց** կամ **վերջավորություններ** ավելանալիս նրա մեջ մտնող **ձայնավորը** կամ **երկհնչյունը** կարող է փոփոխվել կամ սղվել, այսինքն՝ **հնչյունափոխվել** (օրինակ՝ սիրտ - **սրտ**ամոտ, **սրտ**ոտ, **սրտ**եր):

Եթե արմատ, ածանց կամ վերջավորություն ավելանում է **բազմավանկ** բառին, հնչյունափոխության ենթարկվում է նրա **վերջին վանկի ձայնավորը** կամ **երկհնչյունը** (օրինակ՝ դարբին - **դարբն**ոց, **դարբն**ի):

Ուղղագրություն և ուղղախոսություն

36. Պազի՛ր, թե ուղղախոսական ինչ սկզբունքով են ընտրված յուրաքանչյուր շարքի բառերը, և որ բառը դրան չի համապատասխանում:
Ա. Հարթել, մեղավոր, մանրել, կարպետ, սեր, թերի, ամենաեռանդուն, թելել, կերակուր:
Բ. Թեյել, վայելուչ, վայելչակազմ, վրաերթ, բայեր, հայհոյել, մայել, վկայել:

37. Պարզի՛ր, թե ուղղագրական կամ ուղղախոսական ի՛նչ սկզբունքով են ընտրված յուրաքանչյուր շարքի բառերը, և ո՛ր բառը դրան չի համապատասխանում:

Ա. Աներազ, մեներգ, աներևույթ, երեսուներեք, խուռներամ, ամենաերազկոտ,

աներևակայելի:
Բ. Առէջ, ելևէջ, ուրևէ, ովևէ, մանրէաբանության, քառասուներկու, ինչևէ:

38. Ուղղագրական կամ ուղղախոսական ի՞նչ սկզբունքով են ընտրված յուրաքանչյուր շարքի բառերը, և ո՛ր բառը դրան չի համապատասխանում:

Ա. Միջօրե, օրեցօր, անօգնական, կանխորոշում, կեսօր, անօգուտ, ապօրինի, անօրինակ:
Բ. Անորակություն, հազարոտնուկ, եղբորորդի, ամենաորոշակի, անորոշություն, անողնաշար:

39. Գրի՛ր բառեր, որոնց մեջ
ա) ***ղ***-ից հետո գրվում է ջ.
բ) ***խ***-ից հետո գրվում է չ:

*40. Գրի՛ր բառեր, որոնց մեջ **ր**-ից հետո գրվում է **ջ**:*

41. Տրված բառերը գործածելով՝ հորինի՛ր պատմություն:

Աշխարհ, շնորհք, ճանապարհ, խոնարհ, արհամարհել:

42. Պարզի՛ր, թե ինչի՛ հիման վրա է կազմվել բառաշարքը և ավելացրո՛ւ նոր բառեր:

Աշխարհեաշխարհ, աշխարհակալ, շնորհավորել...

43. Գրի՛ր բառեր, որոնց մեջ **և-ը** *արտահայտված լինի երկու տառով (ե, վ) և հիմնավորի՛ր գրության այդ ձևը:*

44. Տրված բառերը գործածելով՝ պատմություն հորինի՛ր:

Բամիա, խավիար, Մարիամ, Սուքիաս, հեքիաթ, դաստիարակ, փասիան, կրիա, օվկիանոս:

45. Տրված բառերը գործածելով՝ հորինիր պատմություն:

Մատյան, մետաղյա, հրեա, էներգիա, Անդրեաս, քվեարկել:

46. Կետերի փոխարեն գրի՛ր ***յա, իա*** կամ ***եա***: Բառարանով ստուգի՛ր՝ ճի՞շտ ես

գրել:

Միմ..նց, քվ..րկություն, որդ..կ, ..սաման, քիմ..ական, հեք..թային, ոսկ.., հր..կան, դաստ..րակություն, սեն..կ, կր.., Անդր..ս, Եղ..զարյան, կ..նք:

47. Տրված բառերը գործածելով՝ պատմությունն հորինիր:

Հիանալ, էական, ծիածան, ձիարշավ, ռոպեական, գնչուական:

48. Որտեղ պետք է, կետի փոխարեն յ գրի՛ր: Ո՞ր դեպքում գրեցիր յ-ն:

Հա.ացք, հա.ելի, հո.ակապ, մի.ացում, ձի.արշավ, տի.եզերական, փակե.ի, կա.արան, խաբե.ություն, է.ի, գնա.ի, բու.եր, տղա.ի, Մարո.ի:

49. Կետերի փոխարեն գրի՛ր տրված բառերից մեկը:

Շոշափեց ու տեսավ, որ խեղճ կենդանու... կոտրվել է: (ող, ոխ)
... սրտում որ մնա, թույն կդառնա, կքայքայի սիրտը: (ող, ոխ)
Երբ երեկոյան հետ թռան, տեսան, որ իրենց .... գրավել է անծանոթ մի թռչուն: (բույն, բուն)
Մի քանի հողի ձեռք-ձեռքի էին տվել ու փորձում էին գրկել հինավուրց ծառի վիթխարի ...: (բույն, բուն)
Մոտակայքում ապրողներն այնքան են վարժվել... շառաչին, որ դրան էլ ուշադրություն չեն դարձնում: (Վիկտորիա, Վիկտորյա)
Տնեցիներն այնքան են վարժվել ... անտեղի լացուկոծին, որ դրան էլ ուշադրություն չեն դարձնում: (Վիկտորիա, Վիկտորյա)

50. Կետերի փոխարեն գրի՛ր տրված բառերից մեկը:

Քո չքնաղ ծաղկի ... է ինձ այստեղ բերել: (բույր, բյուր)
Անթիվ ու ... են աստղերը: (բույր, բյուր)
... երբևէ կհանգստանա՞ պատերազմներից: (Ասիա, Ասյա)
... երբևէ կհանգստանա՞ իրեն այդքա՛ն հուզող մտքից: (Ասիա, Ասյա)
... գեղեցիկ ու հյուրընկալ քաղաք է: (Սոֆիա, Սոֆյա)
... գեղեցիկ ու նրբանկատ աղջիկ է: (Սոֆիա, Սոֆյա)

51. Տրված բառերը գործածելով՝ պատմությունն հորինիր:

Ուռկան, ուռչել, կառչել, փառք, հռչակ, կռվել, խռպոտ:

52. Տրված բառերը գործածելով՝ պատմություն հորինի՛ր:

Գոռգոռալ, դոդոալ, մռմռալ, հռհռալ, կոկռալ, ճռճռալ:

53. Կետերը փոխարինի՛ր ***բ*** *կամ* ***ռ*** *տառով (հարկ եղած դեպքում օգտվի՛ր ուղղագրական բառարանից):*

Ա.ծիվ, ա.յուծ, հու.թի, մ.մու., մա.մա., մ.մ.ոց, փ.փ.ել, բա.բա.ել, ա.համա.հել, բա.ձ, պա.կել:

54. Ընդգծված բառերը փոխարինի՛ր հոմանիշներով: Ընտրածդ բառերի գրությունը ճշտի՛ր բառարանի օգնությամբ:

Մի *ցատկով* բռնեց հանդուգնին:
Նոր *վզկապը* բաճկոնիդ հետ գեղեցիկ է դիտվում:
Ինչո՞ւ *քամահրանքով* նայեցիր ու դուրս եկար:
Սկսել էր *փոշմանել*, որ երեկոն անցկացրել էր տանը՝ ընկերներից հեռու:
Վերջապես մտավ մի *մեծ* դահլիճ:

55. Կետերի փոխարեն գրի՛ր նախադասության մտքին համապատասխանող բառ՝ ընտրված ուղղագրական բառարանից:

... լինելու համար անհրաժեշտ է մշտապես կոփել մարմինը:
Նրա ... վարդագույն վերնաշապիկ էր ու նորաձև փեշ:
Սիրում է ժամերով ... տաք ավազին ու նայել ամպի լողացող պատառիկներին:
Հավաքած բոլոր փաստաթղթերն ու գրությունները դասավորեց ...ում, դրեց պահարանի մեջ:
...ի նման մտել է պատյանի մեջ ու ոչինչ լսել չի ուզում:
Լավ լողորդի ու փրկարարի քո ... մեր քաղաքից արդեն դուրս է եկել:
Վիրավոր գազանի ...ն անտառում դեռ երկար լսվեց:

56. Բաց թողնված տառերը լրացրո՛ւ:

Մար.ատար գնա.քը կարո՞ղ է քսանմեկ րոպ..մ կտրել անցնել Ամերիկայի Մ..ց..լ Նահանգները՝ Խաղաղ .վկ..նոսից մինչ. Ատլանտ..ն: Դա ն..նիսկ ինքնաթիռով հնարավոր չ.: Բայց ամերիկ.ան մի համալսարանի գիտնակա..եր պնդում են, որ այդ մի..ն իրագործելի է: Մի ազգային գիտաժողովում նրանք ստորերկր.. նոր փոխադրամի.ոցի նախագիծ են ներկա.ացրել:

57. Բաց թողնված տառերը լրացրո՛ւ:

Ս.անա լճի խն.իրն այս.ր հուզում է յուրաքանչ.ուր քաղաքակիր. մար.ու: Ս.անի ջրի մակարդակը տասն.ակ տարիների ըն.ացքում ի.ել է: Ջրի կորստի հետ առն.վում են մի շարք այլ .ական հար.եր: Առան.ին ուշադրության է արժանի ջրավազանի կեն.անական աշխարհի պահպանության խն.իրը:
Բնակության ա.բարենպաստ պայման.եր են ստեղծվել նա. Ս.անի թ.ավոր բնակիչների՝ թռ.ուն.երի համար:

58. Բաց թողնված տառերը լրացրո՛ւ:

Քանդում են հին տները, թա.վում են աղ..սները, խուլ աղմուկով .կնում են գերա..երը: Վիե..ացի մի փ..տավաճառ այ.պիսի իրադար.ությունը երբե. բաց չի թողնում: Նա չն.ին գնով կամ .լ ձրի հավա.ում է կառ..ցի փայտ.. մասերը: Երա.շտական գոր.իքներ պատրաստողները չորացա. փայտը շատ բար.ր են գնահատում: Դրանցից հ..նալի տավիղներ, կի.առներ ու ակորդ.ոններ են սար.վում:

59. Բաց թողնված տառերը լրացրո՛ւ:

Ա.թամար կղզին Վանա լճի հարա.-ար.ելքում է, մեկ ժամվա ջրային ճանապար.ով է հեռու ցամաքից: Ծովը և բար.ր, ապառաժոտ ափերը կղզին անմատչելի էին դար.նում ոսո.ների համար: Գագիկը՝ Արծրուն.աց առա.ին թա.ավորը, հո.ակապ շինություններով նոր կյանք տվեց Ա.թամարին: Կղզին նրան փոքր թվաց՝ իր ըն.արձակ նպատակներն իրականացնելու համար, ու նա ա.բաբարտակով շր.անաձև կտրեց ծովի մի մասն ու ցամաքի վերածեց: Ժամանակի ըն.ացքում և՛ ա.բարտակը, և՛ վի.խարի շրջապարիսպը, և՛ բար.ր աշտարակներն ու բուրգերը ջրասու.զ եղան:

60. Ուղղագրական բառարանից դո՛ւրս գրիր այն բառերը՝, որոնք վերաբերում են տանը, ընտանիքին:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Աշխարհ, շնորհ, ճանապարհ, խոնարհ, արհամարհել ինչպես նաև դրանցով բաղադրված բառերում ***բ***-ից հետո գրվում է ***հ*** տառը:

Երկհնչյունները ***յ***-ի և ձայնավորի կապակցություններ են (**այ, յա, եյ, յե, յի, ոյ, յո, ույ, յու**): Սովորաբար գրվում են այնպես, ինչպես լսվում են (**մայր, խարտյաշ, թեյ, հայերեն, խոյ, յոթ, ձյուն, ալյուր** և այլն):

ա) ***Յա*** երկհնչյունը կարող է ցրվել ***յա*** և ***եա*** տառակապակցություններով (օր.՝ եղևնի):

բ) Բառասկզբի **յե** երկհնչյունը գրվում է **ե** տառով (օր.՝ **եղևնի**):

գ) ***Յո*** երկհնչյունը կարող է գրվել ***յո*** (օր.՝ **ռադիա**):

Երկու ձայնավորների միջև սովորաբար լսվում է *յ* ձայնակապ (օր.՝ արքայի գրեի): ***Յ*** ձայնակապը գրվում է ***ա***-ից և ***ո***-ից հետո (օր.՝ ծառ*ա*յել, գոյություն): Գրվում է նաև այն դեպքում, երբ *յ*-ն արմատական հնչյուն է: (օր.՝ թե*յ*- թե*յ*ել): Մյուս դեպքերում չի գրվում (օր.՝ կանչ*ե*ի, թ*յա*վարել, բ*ու*ի):

Հնչյունաբնություն

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ Յ, մ, ն, լ, ր, ռ, վ, ղ, զ, ժ, բ, գ, դ, ձ, ջ հնչյունները ձայնեղ բաղաձայններ են:
Ֆ, խ, ս, շ, հ, պ, փ, կ,ք, տ, թ, ծ, ց, ճ, չ հնչյունները խուլ բաղաձայններ են:
ՏՈՂԱԴԱՐՁ Տողի վերջում գրվող բառը կարող է բաժանվել երկու մասի՝ տողադարձվել:
Երկու ձայնավորների միջև եղած երկու և ավելի բաղաձայններից միայն մեկն է անցնում հաջորդ վանկ:
Միայն -յ բաղաձայնը նախորդ բաղաձայնի հետ կարող է անցնել հաջորդ վանկ (օրինակ՝առ-յուծ, ա- ռյուծ):
Տողադարձի ժամանակ գաղտնավանկի ը հնչյունը գրվում է միայն այն դեպքում, երբ տողադարձվող բառի առաջին մասի վերջին վանկում է, կամ երկրորդ մասի առաջին վանկում (օրինակ՝ խըս-տաշունչ, հան-գըստանալ):
Տողադարձի ժամանակ և -ը երկու տառով է արտահայտվում (ե, վ), եթե դրանք տարբեր վանկերի կազմում են (օրինակ՝ արե- վոտ):

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բառի իմաստը, բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի

60. Մի բառով գրի՛ր:

ա) Ո՞վ է, որ սովորում է դպրոցում: Այդպես կոչում են նաև նրան, ով որևէ արհեստ է սովորում:
բ) Ո՞վ է, որ ղեկավարում ու ցուցմունքներ է տալիս, ով առաջին դիրքն է գրավում ու իշխում է: Այսպես են կոչում նաև նրան, ով ճանապարհ է ցույց տալիս, առաջնորդում է:
գ) Ինչպե՞ս է կոչվում շինության ուղղահայաց մասը, որ ծառայում է շենքը մասերի բաժանող միջնորմ: Դա նաև բարձր պատնեշ է, պարիսպ:
դ) Ինչպե՞ս է կոչվում այն հասկացությունը, որով արտահայտում ենք իրերի, երևույթների և իրադարձությունների տևողությունը: Դա չափվում է դարերով, տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով, ժամերով և այլն:
ե) Ո՞վ է այն պաշտոնական անձը, որը վարում է դատավարությունը և գործի մասին դատավճիռ կամ որոշում է ընդունում:
զ) Ինչպե՞ս է կոչվում այն հասկացությունը, որով արտահայտվում է գիտակցության մեջ անցյալի տպավորությունները պահելու և վերականգնելու կարողությունը:

61. *Ի՞նչ է նշանակում՝*

ծով, կղզի, փառք, խարույկ, երաժշտություն, ճակատագիր:

62. Հարցերին պատասխանի՛ր:

1. Ո՞րն է բառի ձևը:
2. Ո՞րն է բառի իմաստը:

63. Ա և Բ նախադասություններում ընդգծված բառերի իմաստները համեմատի՛ր:

- 4/

Ա. Երկինքը կամաց-կամաց *ամպեց*, և սկսեց անձրևել:
Բ. Հայրը *ամպեց*, նստեց, ու տղան հասկացավ, որ պիտի լռի:
Ա. Բժիշկը *բամբակ* է ուզում, որ վերքը մաքրի:
Բ. Իսկական *բամբակ* է, երեխա չէ:
Ա. Գետափին մի *քար* կա, որի վրա պառկում էր լողանալուց հետո:
Բ. Այդ մարդու սիրտը *քար* է:
65. Կետերը փոխարինի՛ր տրված բառերից մեկով: Համեմատի՛ր բառի

իմաստները տարբեր նախադասություններում:

Փափկել, սուր, ալիք, փչել:
... դանակ է. պետք, որ այդ բիծը քերեմ:
Շատ ... մարդ է ընկերս, նրա խոսքը լսել չի լինում առանց ծիծաղի:
... խորտակված նավի մի բեկոր ափ հասցրեց:
Կյանքի ... նրան շպրտել էր ընտանիքից հեռու:
Քամին ... էր ամբողջ ուժգնությամբ:
Ընկերները գիտեին, որ նա ... էր, ոչ մի վագրի էլ չի հանդիպել: Մոմն արևից ... ու ծռմռվել էր:
Մի քանի քաղցր խոսքից ... էր, չորությունից ու խստությունից հետք չէր մնացել:

66. Տրված բառերը նախադասությունների մեջ գործածի՛ր ուղղակի և փոխաբերաբար:

Արևոտ, սառը, շողալ, լողալ:

67. Ընդգծված բառը նախադասության մեջ ի՞նչ իմաստով է գործածված: Այդ բառը ո՞ր նախադասության մեջ է իր հիմնական իմաստով գործածված:

Թղթի վրա մի ուղիղ *գիծ* գծիր:
Վաղուց մեր փողոցով տրամվայ չի անցնում. *գիծը* քանդված է:
Բազկին հազիվ նշմարելի մի *գիծ* կար. երևում էր, որ դեպքը վաղուց է պատահել:
Մոռանա՞լ, ինչպե՞ս. դեմքի հստակ ու անկրկնելի *գծերը* կարծես տպվել էին սրտի մեջ:
Չեմ հասկանամ քո բռնած *գիծը.* ո՞ւր ես հասնելու կռվով ու խռովությամբ:
Գնա՛, սահմանն անտառից հեռու չէ. *գիծը* որ անցար, էլ քեզ ոչ մեկը չի հետապնդի:

68. Ընդգծված բառը նախադասության մեջ ի՞նչ իմաստով է գործածված: Այդ բառը ո՞ր նախադասության մեջ է իր հիմնական իմաստով գործածված:

Ինչո՞ւ ես խաղալիքներդ շաղ տվել, *հավաքի՛ր*:
Բոլոր ընկերներիդ *հավաքի՛ր* ու զգուշացրո՛ւ:
Ամեն օր պիտի *հավաքես* անկողինդ:
Ո՞վ է երբևէ այդքան բերք *հավաքել*:
Եթե չես ուզում, որ մարդիկ հուզմունքդ տեսնեն, հավաքի՛ր քեզ:

69. Տրված բազմիմաստ բառերով նախադասություններ կազմի՛ր:

Սուր, թերթ, գիր:

Հոմանիշներ

70. Նախադասության ընգծված բառը փոխարինի՛ր տրվածներից մեկով:
Միտք, դեպք, մրցում, պետություն, վիճակ:

Ձեր *տերության* մեջ այդպիսի բաներ չպիտի լինեին:
Եղելության մասին շատ ուշ իմացավ:
Իրադրությունն այնքան լարված էր, որ վախենում էր ընկերներին կորցնելուց:
Այդպիսի *մտադրություն* չեմ ունեցել:
Մրցություն կազմակերպելիս ինձ էլ տեղյակ պահի՛ր:

71. Նախադասության ընդգծված բառը փոխարինի՛ր տրված հոմանիշներից մեկով:

ա) Հինավուրց, հնամյա, հնադարյան, վաղնջական, վաղեմի, նախնական, առաջվա:
Պապս *հին* ժամանակներից մնացած այդ ամրոցի մասին շատ հետաքրքիր պատմություն էր պատմում:
Չհամոզեցիք, իմ *հին* մտքին եմ մնում:
բ) Փռվել, սփռվել, տարածվել, ընդարձակվել:
Իջավ մութն ու կամաց-կամաց *ծավալվեց* քաղաքի ու նրա շենքերի վրա:
Զրույցը *ծավալվեց* ու մեկ էլ հասավ նրան, ինչ կարծես թե գաղտնի էր պահվում:
գ) Խրել, հորել, ծածկել:
Նա գանձը *թաղել էր* հովտի միակ կաղնու տակ:
Ճանապարհի երկայնքով, իրարից մի քանի մետր հեռու, այուներ *էին թաղել*:

72. Կետերը փոխարինի՛ր տրված հոմանիշներից մեկով:

... (ինքնագլուխ, անկաշկանդ, ազատ, անկախ) ոճի ըմբշամարտին հատուկ է... (*հնարների, հնարքների գյուտերի*) ազատությունը: Ասենք՝ թույլատրվում է... *(իրավունք է տրվում, արտոնվում է)* բռնել մրցակցի ոտքը, ոտք գցել, ... *(շրջել, թավալել, գլորել, գցել)*: ... *(ընտիր, դասական, օրինակելի)* ոճի մարզիկը ոտքով ... (*գյուտերի, հնարքների, հնարների*) դիմելու ... *(իշխանություն, իրավասության, իրավունք)* չունի: Երբ նորից ... (*ծնվեցին, կյանք մտան*) օլիմպիական (*մրցումները, խաղերը*), դրանց ծրագրում ... (*տեղ գրավեց,*

տեղավորվեց, տեղ գտավ, արտահայտվեց) դասական ըմբշամարտը:
Սկզբում քաշային ... *(անջատումներ, ճյուղավորումներ, բաժանումներ)* չկային:

73. Երկու տեքստ ստացի՛ր կետերի փոխարեն մի դեպքում գրելով տրված հոմանիշներից առաջինը, մյուս դեպքում՝ երկրորդը: Ստացված տեքստերը համեմատիր. ո՞րն է ավելի մոտ բանավոր խոսքին:

Գերմանական մի քաղաքում տնային տնտեսուհիների ... (*մրցույթ, մրցում*) է... (*անցկացվել, արվել*): Ծրագրի մեջ մտնում էր նաև գրտնակներ ... (*նետելը, շպրտելը*): Ամենից ... (*դիպուկ, ճիշտ*)... (*նետող, գցող*) կնոջ (*ամուսնուն, մարդուն*) գերմանացի բոլոր ... (*այրերը, տղամարդիկ*) ... (*կարեկցեցին, խղճացին*):

74. Երկու տեքստ ստացի՛ր կետերի փոխարեն մի դեպքում գրելով տրված հոմանիշներից առաջինը, մյուս դեպքում՝ երկրորդը: Ստացված տեքստերը համեմատի՛ր:

Արևի ... *(շողերը, ճառագայթները)* ... (*տաքացնում, ջերմացնում*) են Երկրի ... (*երեսը, մակերևույթը*), և ... (*շատ, մեծ քանակությամբ*) ջուր է գոլորշիանում: Գետերի, լճերի ու ծովերի ... *(երեսից, մակերևույթից*) անտեսանելի գոլորշիներ են օդ ... (*ելնում, բարձրանում*): Ջուր է ... (*ելնում, բարձրանում*) բոլոր բույսերից, ջուր է արտաշնչում ... (*ամեն մի, յուրաքանչյուր*) կենդանի էակ: Գոլորշիացում լինում է ձմռան ...(*ցրտին, սառնամանիքին*) ... (*էլ, անգամ*). հիշենք՝ ինչպե՛ս է չորանում լվացված ... (*շորը, սպիտակեղենը*):

75. Ընդգծված բառերն ու արտահայտությունները տրված հոմանիշներից մեկով փոխարինի՛ր այնպես, որ տեքստի ոճն ավելի մոտ դառնա խոսակցականին (ըստ անհրաժեշտության՝ կարող ես բառեր հանել, բառեր, բառաձևեր կամ բառերի դասավորություն փոխել):

1. Անակնկալ, մեկ էլ, հանկարծ, հանկարծակի, հանկարծահաս:
2. Արշավել էր, գրոհել էր, հասել էր, նետվել էր:
3. Չէր ահաբեկվել, իրեն չէր կորցրել, գլուխը չէր կորցրել:
4. Հարձակվել էր, արշավել էր, գրոհել էր, հասել էր:
5. Կարճ, վաղանցուկ, վաղանցիկ, կարճժամանակյա, վայրկենական, րոպեական:
6. Պատերազմ, մարտ, կռիվ, ճակատամարտ:
7. Ընկրկել էր, քաշվել էր, ետ էր քաշվել, ետ էր դարձել, ետ էր գնացել, ետ-ետ էր գնացել:
8. Կտրիճության,քաջասրտության, քաջության, խիզախության:

9. Պարգևել էին, նվիրել էին, շնորհել էին, տվել էին:

Հնդկաստանի ջունգլիներում մի կնոջ վրա *անսպասելիորեն* վագր էր *հարձակվել*: Բայց կինը *խուճապի չէր մատնվել*, այլ կացնով *նետվել էր* վագրի վրա: *Կարճատև պայքարից* հետո վագրը *նահանջել էր*: *Արիության* համար կնոջը *պարգևատրել էին* մեդալով:

76. Կետերի փոխարեն գրի՛ր տրված հոմանիշներից ամենահարմարը:

Ջուրը շատ (սառն, ցուրտ, պաղ) էր, ճիշտ օրվա նման:
.... (սիրտը շուռ եկած, տակն ու վրա եղած, ալեկոծված, հուզված, վրդովված) ծովը ծեծում էր ափերը:
Ինչո՞ւ ես այդպես ... (աներեր, հաստատուն, անսասան, անշարժ, անդրդվելի, անխախտ) նստել՝ փայտ կուլ տվածի նման:
Մարդն այնպես ... (շուտափույթ, արագ, շուտ, հապճեպ) էր քայլում, կարծես կարևոր մի բանից ուշանում էր:
Փոքրիկը մի քիչ ոտքը կախ գցեց, հետո ... (համարձակվեց, սիրտ առավ, խիզախեց, հանդգնեց) ու մոտ եկավ:
Ի վերջո այնպիսի մի տաճար ... (շինեց, կառուցեց, կերտեց), որ բոլորին զարմացրեց իր արվեստով:

77. Տրված բառերն ըստ հոմանիշության բաժանի՛ր հինգ խմբի:

Խոշոր, երկերեսանի, առատ, մեծահռչակ, կեղծավոր, պտղաբեր, երեսպաշտ, վիթխարի, արգավանդ, նշանավոր, շողոքորթ, հանրածանոթ, ահռելի, մեծ, բեղուն, երևելի, խայտաբղետ, ականավոր, բերրի, աժդահա, չալպտուրիկ, բարեբեր, հանրաճանաչ, հսկա, անվանի:

78. Տրված բառերն ըստ հոմանիշության բաժանի՛ր հինգ խմբի:

Դժբախտ, հին, փնթփնթան, հնամենի, անկայուն, տոկուն, երերուն, թշվառ, դիմացկուն, հնօրյա, դժգոհ, անբախտ, պինդ, հինավուրց, չարաբախտ, ամուր, վաղեմի, անհաստատ, խախուտ, դժկամ, ապերջանիկ, տարաբախտ, դողդոջուն:

79. Տրված բառերն ըստ հոմանիշության բաժանի՛ր հինգ խմբի:
Շրջել, խորհրդածել, կողոպտել, խենթանալ, արտասվել, մտածել, գողանալ, ցնորվել, մտորել, շրջագայել, հափշտակել, մտմտալ, թալանել, խելագարվել, խորհել, հեկեկալ, ցնդել, հեծկլտալ, ողբալ, հիմարանալ, գռփել, թափառել, լալ, գժվել, պտտել:

80. Տրված հոմանիշներով կազմի՛ր նախադասություն:

ա) Կանաչ, զմրուխտե:
բ) Բաժակ, գավաթ:
գ) Զյունաթույր, ճերմակ, սպիտակ:

81. Անտառ նկարագրի՛ր՝ գործածելով ինչքան հնարավոր է շատ հոմանիշներ:

82. Սխալ կամ ոչ տեղին գործածված բառերը գտի՛ր և փոխարինի՛ր հարմար հոմանիշներով:

Նրան աշխատանքից փրկեցին, որովհետև անպատասխանատու էր ու ցրված:
Մատիտներիդ մեջ կապույտի բոլոր գույները կա՞ն:
Ծանոթիս այդպես էլ չգտա թանձր բազմության մեջ:
Ընկերները երկու օր առաջ էին մաքառել ու հաշտվելու փորձեր էին անում:
Բերրի խոստումներ տվեց ու գնաց:

83. Ավելորդ բառերը գտի՛ր և նախադասություններից հանի՛ր:

Էլի դարձյալ այդ մասի՞ն ես խոսում:
Ամբողջ ճանապարհը ոտքով քայլեցի:
Դու արդեն հե՞տ ես վերադարձել:
Կարմիր գույնի շատ ծաղիկներ հավաքեցինք:
Կրկին անգամ ասում եմ քեզ:
Նախ առաջին հերթին այս գործը պիտի լինի:
Քեզ մի հատ մարդ էր հարցնում:
Կարելի՞ է մի հատ զանգել:
Ուրիշ այլ մարդիկ ավելի լավ կհասկանային:

Հականիշներ

84. Գրի՛ր տրված բառերի նույնարմատ հականիշները:

Օրինակ՝
կարևոր - անկարևոր,
ընդմիջումներով - անընդմեջ:

Գեղեցիկ, հաճելի, մարդկային, գիտուն, դուրեկան, ուշադիր, արժանի, թևավոր, ախորժելի, գունեղ, բնական, խելոք, կարևոր, լուրջ, անամպ, տեղյակ, լուսավոր, գերակշռել, խոսուն, կարևոր:

85. Առածները լրացրո՛ւ ընդգծված բառերի հականիշներով:

Չկա *չարիք* առանց ...:
Ջրի *բերածը* ջուրը ...:
Տերովին տերն է պահել, ... գայլն է կերել:
Մտնելուց առաջ միտք արա, թե ոնց ...:
Ինչքան գետնի *երեսն* է, յոթ էնքան գետնի ... է:

86. Տեքստում կետերի փոխարեն տեղադրի՛ր տրված հականիշները:

Հեռավոր-մերձավոր, ներկա-անցյալ, պատճառ-հետևանք, հանելուկ-լուծում, գրոհել-նահանջել, խաղաղ-անապահով:

Վերջին միլիոնավոր տարիների ընթացքում սառցադաշտերը մի քանի անգամ իջել են Սկանդինավյան լեռներից, ... մինչև Միջերկրական ծով ու հետո կրկին ...:

Սառցադաշտային ժամանակաշրջանը մեր մոլորակի ... ... է: Եվ ...ում այդ շրջանին վերաբերող շատ բան դեռ ... է: Դեռ ... չունի այն հարցը, թե ինչի ...ով են առաջացել այդպիսի ցրտերը: Չգիտենք նաև մեր մոլորակի դեմքին հայտնված բազմաթիվ «վերքերի» ստույգ ...ները: Իսկ ի՞նչ է բերելու ... ապագան: Մարդկությունը կարո՞ղ է հուսալ, որ Երկրի վրա ... կյանք է սկսվելու, թե՞ մեր մոլորակին տիեզերական ... ապագա է սպասվում:

87. Ծով ու ցամաք նկարագրի՛ր ինչքան հնարավոր է շատ հականիշներ գործածելով:

Նույնանուններ

88. Փակագծերում տրված բառերից մեկն ընտրի՛ր ու պահանջվող ձևով գրի՛ր կետերի փոխարեն: Ինչպիսի՞ բառեր ստացվեցին:

... շունը շատ նման էր մեր Բողարին: (Նկար, նկարել)
Եթե աղջկաս համար ծաղիկներ ..., աղջիկս շատ կուրախանա: (Նկար, նկարել)
Որ գանձը ... ծառի տակ ու գնա, հետո կգտնի՞: (Թաղել, թաղ)
Մեր ... տղաներն ամենաճարպիկն են: (Թաղել, թաղ)
Ի՛նչ էլ ..., կուրախանա: (Շահ, շահել)
Դերձակի հետ ... ծառաները մտան: (Շահ, շահել)
... դուստրն է ընկերուհիս: (Բժիշկ, բժշկել)
Հիվանդին մայրդ թող ...: (Բժիշկ, բժշկել)

89. Տրված նույնանուն բառերով կազմի՛ր նախադասություններ:

Օրինակ՝
Վանեցի: - Ինձանից հեռու վանեցի վախը:
Վանեցի մի տատ ունեմ:

Մարտ, կետ, շահ, այր:

90. Նախադասության մեջ փակագծերում դրված բառերից ո՞րն է գործածված, ընդգծի՛ր:

Ասել էի, որ տուն վարձեր ու իր իրերը տաներ: (Վարձել, վարձ)
Ուզածդ շատ բարձր վարձ էր, դրա համար էլ տղան հեռացավ: (Վարձել, վարձ)
Հիվանդի գլուխը կապեր ու գնար բժշկի հետևից: (Կապել, կապ)
Այսքան ամուր կապեր քանդելը հեշտ գործ չէ: (Կապել, կապ)
Աղջիկը բարալիկ ծամեր ուներ: (Ծամել, ծամ)
Դեղը պիտի ծամեր ու կուլ տար: (Ծամել, ծամ)
Պարզ է, որ այդքանից հետո պիտի կտուրը կաթեր: (Կաթել, կաթ)
Ամանում այծի կաթ էր: (Կաթել, կաթ)

91. Փակագծերում տրված բառերից մեկն ընտրի՛ր ու պահանջվող ձևով գրի՛ր հարցում արտահայտող բառի փոխարեն:

Զարդասեղանին *ինչե՞ր* էին դրված: (Սանր, սանրել)
Թե մազերը *ի՞նչ աներ* ու լվացվեր, կտեսնեիք, որ սիրուն երեխա է: (Սանր, սանրել)
Նվերը մի գեղեցիկ ի՞նչ էր: (Սանր, սանրել)
Նա մի շատ բարի ո՞վ էր: (Կախարդել, կախարդ)
Եթե իրոք *ի՞նչ* աներ, մուկ կդառնայիր: (Կախարդել, կախարդ)
Եկողն ամենաչար ո՞վ էր: (Կախարդել, կախարդ)
Հավաքվեցին չար ու բարի *ովքե՞ր*: (Կախարդել, կախարդ)
Պատին մի աղջկա *ի՞նչ* էր կախված: (Նկարել, նկար)
Սիրով որ *ի՞նչ* աներ, նկարը սիրուն կստացվեր: (Նկարել, նկար)

Դարձվածքներ

92. *Ընդգծված դարձվածքները փոխարինի՛ր հոմանիշ բառերով:*

Փարիզից Վարշավա թռչելիս լեհ կինոդերասան Ցիբուլսկու *աչքով ընկավ*, որ

կողքի ուղևորը *սիրտը* դող ընկած նստած է: Նա փորձեց հարևանին *սիրտ տալ*:
- Մեր օրերում ինքնաթիռով թռչելը *դատարկ բան* է,- ասաց,- նույնիսկ ավտոմեքենան ավելի վտանգավոր է: *Էս քանի օրը* բարեկամներիցս մեկի մեքենայի գլխին ինքնաթիռ ընկավ:

93. Տրված դարձվածքներն արտահայտի՛ր մեկական բառերով:

Պատի ծեփ դառնալ, պայման կապել, քիթը կախել, բերանը բաց մնալ, իրեն պատեպատ տալ:

94. Տրված արտահայտություններից յուրաքանչյուրով երկու նախադասություն կազմի՛ր՝ մի դեպքում դրանք գործածելով ուղիղ իմաստով, մյուս դեպքում՝ որպես դարձվածք:

Մատը մտցնել բզեզի բույնը, լեզու առնել, մատը կծել, ոսկոր ու կաշի դառնալ, գլուխը յուղել, մատից փուշ հանել, գլխին քար գցել:

95. Տրված տեքստերը համեմատի՛ր և գրի՛ր բոլոր տարբերությունները:

Ա. Էդիսոնի ծանոթները միշտ զարմանում էին, թե նրա այգու դռնակը բացելիս ինչո՛ւ են այդքան չարչարվում: Մի անգամ բարեկամներից մեկն ասում է.
- Նման հանճարը չէ՞ր կարող մի կատարյալ դռնակ ունենալ:
- Սխալվում ես, դռնակը հանճարեղ է կառուցված,- պատասխանում է գիտնականը:
Բարեկամը զարմանում է.
- Կատակո՞ւմ ես:
- Ո՛չ: Դռան բռնակը միացրել եմ ջրախողովակներին: Առանց չափազանցելու ասեմ, որ ամեն մի մտնող ստիպված քսան լիտր ջուր է լցնում ջրամբարը:

Բ. Էդիսոնի ծանոթները մի գլուխ զարմանում էին, թե նրա այգու դռնակը բաց անելիս ինչո՛ւ են այդքան քրտինք թափում: Օրերից մի օր բարեկամներից մեկն ասում է.
- Էղած-չեղածը դռնակ չէ՞, նման հանճարի ձեռքից չէր գա՞, որ մի տեղը տեղին դռնակ ունենար:
- Աչքիդ է երևում, դռնակը հանճարեղ է կառուցված,- պատասխան է տալիս գիտնականը:
Բարեկամի բերանը բաց է մնում.
- Ձե՞ռ ես առնում:
- Չէ՛: Դռան բռնակը միացրել եմ ջրախողովակներին: Առանց մազը գերան դարձնելու ասեմ, որ ամեն մի ներս մտնող, ուզի թե չուզի, քսան լիտր ջուր է

լցնում ջրամբարը:

96. Փակագծերում տրված դարձվածքներն իրենց հոմանիշների փոխարեն գրի՛ր և համեմատի՛ր տրված և ստացված տեքստերը. դարձվածքներն ի՞նչ փոխեցին:

Մի անգամ Նապոլեոնը հյուրասիրում էր իր բժշկին: (Օրերից մի օր)
Երբ բժիշկը հարբել էր, կայսրը հարցրեց.
- Մի՛ լռիր, բժիշկ, ասա՛, քո ամբողջ կյանքում քանի՞ մարդ ես սպանել: (Բերանդ ջուր մի՛ առ, էն աշխարհն ես ուղարկել)
Բժիշկը պատասխանեց.
- Երեք հարյուր հազարով պակաս մարդ եմ սպանել, քան Դուք: (Գրողի ծոցն ուղարկել)

97. Տրված դարձվածքները հոմանիշ բառերի և արտահայտությունների փոխարեն գրի՛ր և համեմատի՛ր. տեքստին այդ բառերն են հարմար, թե՞ դարձվածքները:

Փոխ է տալիս, լավության տակից դուրս գա, գլխիդ մի փորձանք գա, ամբողջ աշխարհը, քեզնից երես դարձնեն:

Դերձակը վարսավիրի աշակերտին մի փոքր գումար է պարտքով տալիս: Սա էլ, որ երախտագիտությունը հայտնի, ասում է.
- Ընկե՛ր ջան, թե քեզ դժբախտություն լինի, կամ բոլորը, հերն ու մերդ էլ լքեն քեզ, արի, ես քո մազերը ձրի կտրեմ:

98. Տրված բառերը հոմանիշ դարձվածքների փոխարեն գրի՛ր և համեմատի՛ր. տեքստին այդ բառե՞րն են հարմար, թե՞ դարձվածքները:

Շնչում է, հուզվում է, արթնանում է, բարձրանում է, պարզվում է, կատարվածը, հետապնդում է:
Ծաղիկը գնում է, ի՛նչ է տեսնում. այգու մեջ մի զմրուխտ պալատ, պալատի մեջ ոսկի դագաղ, դագաղի մեջ մի ջահել, գեղեցիկ երիտասարդ, որը ոչ քնած է, ոչ մեռած, շունչը վրեն հազիվ տրփում է: Տեսնում է թե չէ, սիրտը փուլ է գալիս, էլ չի դիմանում, լաց է լինում ու կռանում է, համբուրում: Արտասուքի կաթիլներն ընկնում են երիտասարդի երեսին. երիտասարդը հանկարծ բաց է անում աչքերն ու վեր է կենում, կանգնում, ինչպես էն դրախտում բուսած սոսիներից մեկը:
Դու մի՛ ասիլ՝ հենց ինքը Արին-Արմանելին է, որ կա:
- Ո՞վ ես դու, սիրո՛ւն աղջիկ,- հարցնում է Արին-Արմանելին,- և ինչպե՞ս ընկար էս աշխարհը:

Ու Ծաղիկը կանգնում պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես ինքը գերի էր Սպիտակ դևին, որ այժմ էլ ետեիցն է ընկել ու հալածում է իրեն:

Խոսքում բառը կարող է գործածվել ***ուղղակի*** և ***փոխաբերական*** իմաստներով: Բառի արտահայտած փոխաբերական իմաստները բխում են նրա ***հիմնական*** իմաստից:
Հոմանիշների, հականիշների, նույնանունների գործածությունը խոսքը գեղեցկացնում է, հարստացնում ու ոճավորում:

Բառակազմություն

99. Պարզի՛ր, թե Ա և Բ բառախմբերն ի՛նչ սկզբունքով են կազմված: Այդ բառախմբերը լրացրո՛ւ:

Ա. Ականջ, արի, տարի, կրակ, ...:
Բ. Կախականջ, ականջ դնել, արիություն, քաջարի, տարեկան, կրակ անել, կրակվառիչ, ...:

100. Տրված բաղադրյալ բառերի առաջին բաղադիչները փոխելով՝ ստացի՛ր նոր բարդ բառեր:

Վարդագույն, ճերմականեր, օձաձև, արշավախումբ, սևաչյա, շիկաներ, շղթայակապ:

101. Տրված բաղադրյալ բառերի առաջին բաղադրիչները փոխելով՝ ստացի՛ր նոր բարդ բառեր:

Կրծքավանդակ, ջրաման, միալար, նրբագեղմ, ամրակուռ, երկաթագիր, հորդահոս, լիահույս:

102. Տրված բառազույգերի բաղադրիչները տեղափոխելով՝ ստացի՛ր նոր բարդ բառեր: Տրված և ստացված բառերն արմատների միջոցով բացատրի՛ր:

Օրինակ՝
ամփոփաթերթ, ծաղկագիր - ամփոփագիր, ծաղկաթերթ:

Ծովասուն, ձեռնամարտ:
Բևեռախույզ, երկրամերձ:
Ձկնակեր, մարդավաճառ:

103. Կետերը փոխարինի՛ր փակագծում տրված բառերից մեկով:

Նրա ստեղծած ... հնագույն արվեստն է հիշեցնում: (Նկարազարդ, զարդանկար)
Ծննդյան օրը փոքրիկին ... մի գիրք նվիրեցին: (Նկարազարդ, զարդանկար)
Հագին ... կտորից սովորական զգեստ էր, որ նրան շատ էր սազում: (Զարդանախշ, նախշազարդ)
Տաճարի ... արտացոլված է մեր երկրի բնությունը: (Զարդանախշ, նախշազարդ)
Նրա ... ամբողջ ցերեկը չխկչխկում էր: (Մեքենագիր, գրամեքենա)
Ինձ ... էջեր տվեց ու խնդրեց, որ անպայման կարդամ: (Մեքենագիր, գրամեքենա)

104. Յուրաքանչյուր շարքից մի բաղադրիչ ընտրի՛ր և կազմի՛ր բաղադրյալ բառեր: Նշի՛ր, թե ինչ հնչյունափոխության կատարվեց:

ա) Լույս, թույն, կենդանի, տեր, մեջ, ուղի, անուրջ, կամուրջ, կատու:
բ) Ություն, բար, վոր, ակ, ել, երես, ազգի, ուկ, կից:

105. Հնչյունափոխված արմատները գտի՛ր, գրի՛ր դրանց անհնչյունափոխ ձևերը և նշի՛ր, թե ինչ հնչյունափոխություն է կատարվել:

Պատկերազարդ, բազկաթոռ, ոսկեվառ, մաքսանենգ, կաղնեփայտ, գրկել, լեռնաշղթա, պատուհան, ամառնամուտ, մարդամոտ, ժամացույց, հողագունդ, ջերմանավ, սրտապատառ, ցուցանակ, սիրառատ, գինեվաճառ, գերեվաճառ, բարեգութ, մատենագիր, լուսամուտ:

106. Բաղադրյալ բառեր կազմիր այնպե՛ս, որ տրված բառերի վերջին բաղադրիչները լինեն սկզբում:

Օրինակ՝
մեծամիտ - մտավոր, մտամոլոր, մտածել ե այլն:

Քաջասիրտ, մանրագիր, աստղալից, մանրախնդիր, գեղադեմ:

107. Բաղադրյալ բառեր կազմիր այնպե՛ս, որ տրված բառերի առաջին բաղադրիչները լինեն վերջում: Ի՞նչ է փոխվում:

Օրինակ՝
բռնակալ - լիաբուռ:

Գրական, շնչասպառ, քնել, ջրկիր, գլխարկ, խմբավար:

108. Բառակապակցությունների իմաստներն արտահայտի՛ր մեկական բառերով:

Նկարչին հատուկ, ապուխտ դարձնել, աներևույթ դառնալ, անօրեն բան, աշխույժ դառնալ, դաշույնով հարվածել, անդունդի խորություն ունեցող, մառախուղով պատված:

109. Շարքի բոլոր բառերը, բացի մեկից, նույն ձևով են կազմված: Գտի՛ր օրինաչափությանը չենթարկվող բառը:

ա) Մեծամիտ, ձկնորս, կաթնաջուր, պայտաձև, արծաթափայլ:
բ) Գունագեղ, բարեգործ, փոշեկուլ, բառապաշար, սրամիտ:

110. Բառերի ընդհանուր արմատները գտի՛ր, գրի՛ր դրանց ուղիղ ձևերը և տրված բառերը բացատրի՛ր արմատների միջոցով:

ա) Երրորդ, երրորդել, եռյակ, եռամյա, եռագիծ:
բ) Երկնագույն, երկնահաս, երկնասույզ, երկնային:
գ) Երկիմաստ, երկթև, երկհարկ, երկամսյա, երկվորյակ:

111. Տրված արմատներով բաղադրյալ բառեր կազմիր դրանք դնելով նոր բառերի սկզբում, մեջտեղում և վերջում:

Երգ, փառ(ք), մեջ, ջուր:

112. Տրված արմատներով բաղադրյալ բառեր կազմի՛ր՝ դրանք դնելով նոր բառերի սկզբում, մեջտեղում և վերջում:

Բույս, թույն, հույս, սենյակ:

113. Կետերի փոխարեն մի այնպիսի արմատ գրի՛ր, որ և՛ կետերից աջ գրված բառի հետ բարդ բառ կազմի, և՛ կետերից ձախ գրված բառի հետ:

Օրինակ՝
խիճ, ..., գրել - խիճ, *նկար*, գրել - խճա*նկար*, *նկար*ագրել:

Շագանակ, ..., թափ, ծաղիկ, ..., քար, հինգ, ..., չափ, խաչ, ..., սիրտ, քանդակ, ..., ընկեր, ավազակ, ..., պետ, բառ, ..., կապ, վրեժ, ..., գիրք:

114. Բառերն ածանցների օգնությամբ այնպես փոխի՛ր, որ անձ ցույց տան: Թվի՛ր այն ածանցները, որոնց օգնությամբ անձ ցույց տվող բառեր ստացար:

Ա. Երգել, ուսուցանել, նկարել, գործել, բնակվել, հսկել, լողալ, վարել, հաճախել, գնել, որսալ, պահել, սուտ ասել, իշխել, վեպ ասել, այցելել, վրեժ առնել, երկրպագել:
Բ. Հունձ, ուղի, թագ, զեն(ք). դատ, ձի, այգի, հնոց, ջրաղաց, խանութ, նախիր, ուղտ, պարտեզ, էշ:

115. Տրված բառերից նոր բառեր կազմի՛ր **-ական** *կամ* **-այի՛ն** *ածանցներով:*

Օրինակ՝
մանուկ - մանկական:

Լեռն, քաղաք, անձրև, բարեկամ, շուն, անձ(ն), զինվոր, ցամաք, ծնունդ, տուն, անապատ, դև, դյուցազն, աղաչ(ել), հրեշտակ, ստրուկ, պետ, տոհմ, հանրապետ(ություն), խորհուրդ:

116. Տրված բառերից նոր բառեր կազմի՛ր **-ոց (-նոց, -անոց)** *ածանցով:*

ա) Ծաղիկ, հյուր, ավազակ, մեղու:
բ) Լիզ, գոգ, ձեռ, մատ:
գ) Կապել, խարտել, սփռել:
դ) (Քսան) դրամ, (հինգ) կիլոգրամ, (երեք) մետր:
ե) Խշշալ, մռնչալ, զռռալ, ոռնալ, հալիլել:

117. Առաջին շարքի յուրաքանչյուր բառ հնարավոր բոլոր ձևերով բաղադրի՛ր (բաղադրալ բառեր կազմիր) երկրորդ շարքի ածանցների հետ:

Ա. Հյուսիս, լեզու, հայր, դրախտ, տոն, նկարիչ, մեղ(ք), հարս(ն), քն(ի)ն, օտար, բազում, բն(ական), հան(ել), հաս(նել), դր (դնել), շահ(ել), պահ(ել):
Բ. Ույթ, ածո, ական, այի՛ն, անի, (ա)բար, ոտի, (ա)վոր, (ա)ցու, ություն:

*118. **Ա** շարքի ածանցներից յուրաքանչյուրը բոլոր հնարավոր ձևերով բաղադրիր **Բ** շարքի բառերի հետ:*

Ա. Անդր, հակ, արտ, նախ, ներ, ստոր, վեր.
Բ. դառնալ, նկարել, ճառել, ճաշ, վարտիք, գործել, գրել:

119. 117-րդ և 118-րդ վարժությունների մեջ տրված ածանցների

տարբերությունը բացատրի՛ր և ածանցների խմբերից յուրաքանչյուրին անուն դիր:

120. Ընդգծված բառակապակցությունները փոխարինի՛ր ածանցավոր բառերով:

Պոչ ունեցող մի կենդանի էր գալիս:
Չգիտեի, որ այդքան *զորություն ունեցող* հսկա ես:
Այդտեղ որսորդները *երկու ոտք ունեցող* զարմանալի կենդանի են տեսել:
Երկրորդ անգամ հայտնվողը նույն ձին չէր, սրա պոչը *մի քիչ երկար* էր, գույնն էլ՝ *մի քիչ դեղին*:
Իբրև հայր՝ խրատում էր ու համոզում, որ ներող լինի:
Որպես մտերիմ՝հորդորում էր, որ մի օր էլ տանը մնա:
Եղբոր նման օգնում է ու հետևում, որ վատ բան չանես:
Թշնամու նման եք խոսում:
Հարցը *իր (յուր) ձևով* լուծեց ու գնաց:

121. Տրված բաղադրյալ բառերը բաժանի՛ր բառակազմական միավորների:

Ա. Մարդանման, մեծատուն, սառնասիրտ, ընկերասեր, գործընկեր:
Բ. Նմանություն, տնակ, սառնության, սրտիկ, ընկերանալ, սիրել, գործիք, գործիքային, գործիքավորել:

122. Պարզի՛ր, թե Ա և Բ բառախմբերը կազմության ինչ տարբերություն ունեն: Այդ բառախմբերը լրացրո՛ւ:

Ա. Հրակարմիր, ջերմաստիճան, կիսագունդ, արևափայլ, ...:
Բ. Հրեղեն, կարմրավուն, ջերմոց, ջերմային, ջերմոցային, աստիճանական, կիսատ, գնդակ, անփայլ, ...:

123. Լրացրո՛ւ մեկից ավելի արմատ և ածանց ունեցող (բարդածանցավոր) բառերի շարքը:

Սառնասրտություն, կիսագնդային, հեռախոսավարուհի, ...:

124. Բառակապակցությունների իմաստներն արտահայտի՛ր բաղադրյալ բառերով:

Խիտ սաղարթներ ունեցող, գեղեցիկ քանդակված, նուրբ ճաշակով, լեռնային աշխարհ, բարձր գագաթ ունեցող, թմբուկ խփել, սարսափ ազդող, ասֆալտով պատված, դանդաղ սահող, քաղաքին հատուկ:

125. Ընդգծված բառակապակցությունները փոխարինի՛ր բաղադրյալ բառերով:

Մինչև հիմա կարծում էին, աշխարհում *ամենից բարձր* ծառը Ամերիկայում *աճող* սեկվոյան է, նրա բարձրությունը երբեմն հարյուր մետրից էլ է անցնում: Բայց վերջերս Աֆրիկայում գտան հարյուր ութսունինը մետր *բարձրություն ունեցող* մի բառբաբ' սեկվոյայից մոտ *երկու անգամ* բարձր: Նրա բնի տրամագիծը 43,5 մետր է. կտրվածքի վրա ազատ կերպով կարող է տեղավորվել *մեր ժամանակների* մի շենք:

126. Ընդգծված բառակապակցությունները փոխարինի՛ր բաղադրյալ բառերով:

Հայերի երկիրը հայտնի է որպես տուֆի ու բազալտի երկիր: Հրաբուխից առաջացող քարերի տեսակները *շատ* վաղ ժամանակներից օգտագործվել են որպես *շինարարական նյութ*: Տուֆով կառուցված եկեղեցիներ, կամուրջներ ու *մեծ թվով* ժամանակակից նոր կառուցված բաներ կան: Բազալտի ու տուֆի հետ մեր երկրից դուրս են հանվել *բարձր որակ* ունեցող մարմար, գրանիտ ու պեմզա:

127. Տրված արմատների կրկնությամբ բառեր կազմի՛ր: Բառերի մեջ այդ արմատների գրությանն ուշադրություն դարձրո՛ւ:

Օրինակ՝
բրրդ-բրդբրդել:
Մրրթ, կրրթ, սրրթ կրռ, մրռ, բրռ:

*128. Պարզի՛ր, թե **Ա** և **Բ** բառախմբերն ի՛նչ սկզբունքով են կազմված: Այդ բառախմբերը լրացրո՛ւ:*

Ա. Սառցաբեկոր, կերակրափող, գերազանցել, ...:
Բ. Դուրս գալ, վազ տալ, գործ անել, ...:

129. Տրված հարադրությունների իմաստներն արտահայտի՛ր այլ բառերով:

Կանգ առնել, մուր գալ, շուռ գալ, քարշ տալ, ցույց տալ:

130. **Աչք** *և* **գլուխ** *բառերով կազմի՛ր հնարավորին չափ շատ հարադրություններ ու դարձվածքներ:*

131. **Աղուհաց, կեսօր, առնտուր** *բառերով և* **աղ ու հաց, կես օր, առ և տուր**

բառակապակցություններով կազմի՛ր նախադասություններ:

Օրինակ՝
Կովի թեժ պահին այրուձին (հեծյալ զորքը) օգնության հասավ:
Ես շատ եմ տեսել այր (տղամարդ) էլ, ձի էլ, բայց սրանք իրար շատ են սազում:

132. Ընդգծված բաղադրյալ բառերը փոխարինի՛ր բառակապակցություններով:

Մարգարտահատիկները տարբեր մեծության են լինում: Աշխարհում *ամենամեծը լոնդոնյան* թանգարանի մեծահռչակ ութսունհինգ *գրամանոց* մարգարիտն է:
Համպարը *թանկարժեք* նյութ է, որը գործածվում է լավագույն օծանելիքների արտադրության մեջ: Դա *սնավուն, քարանման* նյութ է, որը միայն կաշալոտի աղիներում է լինում: Դա մեծ մասամբ հանում են *տեգահար* կաշալոտի աղիներից, բայց երբեմն ծովափին էլ կարող են գտնել:

133. Ընդգծված բաղադրյալ բառերը փոխարինի՛ր բառակապակցություններով:

Անսահման հզորություն ու անսանձ գոռոզություն ուներ Թեմուրը: *Միջնադարի* ոչ մի քաղաք չէր կարող համեմատվել նրա նոր մայրաքաղաքի հետ: Ճարտարապետի ձին մի օր կորել էր այդ քաղաքի *ամենամեծ* պարտեզում և *մեկամսյա* որոնումներից հետո հազիվ գտնվել: Թեմուրն իր մայրաքաղաքի՝ Սամարղանդի *շրջակայքի* գյուղերն անվանել էր Բաղդադ, Կահիրե, Դամասկոս, որ աշխարհի *մեծագույն* քաղաքները որպես *աննշան* գյուղեր տեսներ:

134. Ընդգծված բաղադրյալ բառերը փոխարինի՛ր բառակապակցություններով (անհրաժեշտության դեպքում նախադասության կառուցվածքը փոխի՛ր):

Ամերիկայի մի օձաբուծարանում մոտ *մեկմետրանոց երկգլխանի* օձ էր ապրում: Օձաբուծարանը, որ հիմնականում զբաղվում է. օձաթույն հավաքելով, այդ եզակի *ցուցանմուշը* ձեռք է բերել *տասնամյա* մի դպրոցականից, երբ օձն ընդամենը տասնհինգ *սանտիմետրանոց* ճուտիկ էր:
Սողունը երեք տարեկանում միանգամից վեց ձկնիկ էր ուտում. ընդ որում, երկու գլուխները որսում էին միաժամանակ: Բայց դիտողները վկայում էին, որ այդ միասնական գործողության ժամանակ ձախ գլուխը գլխավորում էր:

135. Ընդգծված բաղադրյալ բառերը փոխարինի՛ր բառակապակցություններով:

Եգիպտական բուրգերն ու Սֆինքսը աշխարհի յոթ հրաշալիքներից են:

Անապատականները Սֆինքսը «Սարսափի հայր» են անվանում: Մարդու գլխով ու առյուծի մարմնով *ժայռակերտ* արձանն առավել *սարսափազդու* է գիշերը, երբ լուսնի վառ լույսի ներքո նրա ստվերոտ խոր *դիմագծերը* հատուկ արտահայտություն են ստանում: Արձանը գլխակապ էլ անի, որպիսին միայն փարավոններն են կրում:
Հին Եգիպտոսում ամեն մի մահկանացու բուրգին *մոտենալու* իրավունք չուներ: Սֆինքսը, որ հավանաբար փարավոնի արձան է, հսկում էր փարավոնների *հավերժական* հանգիստը:

Արմատները բաղադրյալ բառի կազմում կարող են լինել **հնչյունափոխված** և **անհնչյունափոխ:**

Միայն արմատներով կազմված բաղադրյալ բառերը կոչվում են ***բարդություններ*** կամ ***բարդ բառեր*** (օրինակ՝ գծագիր, մեծահոգի):

Արմատով և մեկ կամ մի քանի ածանցով կազմված բաղադրյալ բառերը կոչվում են ***ածանցավոր*** բառեր (միություն, նախագիծ):

Մեկից ավելի արմատներով և ածանցով (ածանցներով) կազմված բառերը կոչվում են ***բարդածանցավոր*** (օրինակ՝ դպրոցաշինություն, մեծահոգաբար):

Բառիմաստ Բառը կարող է գործածվել ուղղակի և փոխաբերական իմաստներով: Բառի արտահայտած փոխաբերական իմաստները բխում են նրա հիմնական իմաստից:

Բաղադրյալ բառի կազմում արմատները կարող են լինել հնչյունափոխված և անհնչյունափոխ:

Բարդ բառ Միայն արմատներով կազմված բաղադրյալ բառերը բարդ բառեր են:

Ածանցավոր բառ Արմատով և մեկ կամ ավելի ածանցներով կազմված բաղադրյալ բառերը ածանցավոր բառեր են:

Բարդածանցավոր բառ Մեկից ավելի արմատներով և ածանցով (ածանցներով) կազմված բառերը բարդածանցավոր բառեր են:

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Զևաբանություն

Խոսքի մասեր

136. Տրված բառերը խմբավորի՛ր ըստ խոսքի մասերի:

Հող, սղոց, դուր, բուժակ, փայտ, բահ, պտուտակ, վիրավոր, բուժել, գերանդի, աքցան, բժիշկ, փորել, մաքուր, ամրացնել, պտտել, կարել, վիրաբույժ, ցանել, գարնանային, դեղ, սրսկել, շաղ տալ, դեզ, վիրահատել, հարթ, դիզել, վիրակապել, փայլուն, ներկել, սև, սպիտակ, մեկիկ-մեկիկ, կանաչ, կարմիր,զգուշորեն, կարգին, համառորեն, գիշեր-ցերեկ, տարեցտարի:

137. Յուրաքանչյուր շարքի չորս բառերն ի՞նչ ընդհանուր հատկանիշ ունեն, որ այդ շարքի մի բառը չունի:

ա) Ճանապարհ	բ) Արձան	գ) Ըմբոստ
խոնարհ	վրձին	ընդարձակ
աշխարհ	զարդ	ընդդիմադիր
խորհուրդ	զվարթ	ընձուղտ
շնորհք	վարձ	ըմբոնելի

*138. **Ա** շարքի ընդգծված բառերն ի՞նչ հարցի են պատասխանում, ի՞նչ են ցույց տալիս, ինչո՞վ են տարբերվում **Բ** շարքի ընդգծված բառերից:*

Ա. Զայնավոր *հնչյուն*: -	**Բ**. *Հնչյուն* երգ ու ծիծաղ:
Ձիերի *դոփյուն*: -	*Դողդոջուն* ձեռքեր:
Զգեստների *շրշյուն*: -	*Շրշուն* քող:
Դռան *բախյուն*: -	*Բաբախուն* սիրտ:
Ջրվեժի *շառաչյուն*: -	*Շառաչուն* ջրվեժ:
Անձրևի *շաչյուն*:	*Պաղպաջուն* ջրեր:
Վարար ջրերի *գոչգոչյուն*: -	*Ժպտուն* աղջիկ:
Ալիքի *ճողփյուն*: -	*Սիրուն* խաղալիք:

*139. Կետերը փոխարինի՛ր **հնչյուն, թնդյուն, շառաչյուն** գոյականներից և **հնչուն, թնդուն, շառաչուն** ածականներից մեկով:*

Իմ մանկության օրերին հորդահոս ու ... գետ եմ տեսել:
Լեռներում միայն ... արձագանքը մնաց:
Ուշադիր լսում էի քո երգի ամեն մի ...:
Մանկան ... ծիծաղը վարակեց մեծերին:

Այդ մարտի ... լսվում էր բավական հեռվում:
Ինձ կանչեց-բերեց մեր գետի ...:

140. Գետերի փոխարեն գրի՛ր ***ուն*** *կամ* ***յուն*** *ածանցը:*

Քամին խաղում էր պաղպաջ... ալիքների հետ:
Դողդոջ... ձայնը մատնեց, որ վախենում է:
Թվում էր, թե հարսի շրշ... զգեստով աղջիկը քույրս չէ:
Սիրով էր տանում հիվանդի քրթմնջ...ն ու բողոքը:
Ջրի ճողփ... լսվեց. ուրեմն մոտեցել ենք:
Դալար սաղարթի սոսափ...ը խաղաղություն էր բերում:
Մոտիկից լսվող ճարճատ...ն անակնկալի բերեց բոլորին:

141. Տրված արմատներով այնպիսի բաղադրյալ (բարդ, ածանցավոր) բառեր կազմի՛ր, որ ցույց տան՝

ա) առարկա (գոյական),
բ) առարկայի հատկանիշ (ածական),
գ) գործողություն (բայ),
դ) գործողության հատկանիշ (մակբայ):
Քաջ, վախ, պարզ, սառն:

142. Փորձի՛ր պարզել, թե ի՛նչ հարցի են պատասխանում՝
ա) ընդգծված բառակապակցություններտ,
բ) բառակապակցության մեջ մտնող յուրաքանչյուր բառը:

Դպրոցի դիմաց մի մեծ, կարմիր ավտոբուս է կանգնած:
Երեխան թաքնվել էր *սեղանի տակ*:
Քո բաժինը *սեղանի վրա* եմ թողել:
Երկու *գետերի միջև* ընկած առատ ու հարուստ երկիր էր:
Քաղաքի շուրջը անտառն էր խշշում:
Մեր *բարդու վրա* արագիլը բույն էր հյուսել:

143. Փորձի՛ր պարզել, թե ի՛նչ հարցի են պատասխանում՝
ա) ընդգծված բառակապակցությունները,
բ) բառակապակցության մեջ մտնող յուրաքանչյուր բառը:

Ինձ էլ ընդունեց *որպես հյուր*:
Արծվի նման սավառնել եմ ուզում:
Մինչև լուսաբաց արդեն ամեն ինչ վերջացրել էր:

Առանց պատասխանի չեմ գնա:
Ծովի չափ ալեկոծվեց:
Եղբոր պես ասում եմ քեզ:
Իր ամենակարևոր գործը *նախքան կռիվն* էր վերջացրել:

144. Ընդգծված գոյականները փորձի՛ր հանել. ի՞նչ բառեր դուրս կգան նրանց հետ, ինչո՞ւ:

Սիրով էր պատմում *ընկերոջ* մասին:
Պայմանավորվել էինք հանդիպել *քարի* մոտ:
Որդու նման սիրում էր այդ կնոջը:
Ամեն ինչ անում էր *որդու* փոխարեն:
Չնայած կոպտությանը՝ քնքուշ ու բարի սիրտ ունի:
Տունը լավ կահավորել է ու ամեն ինչ ունի՝ բացի *գրասեղանից*:
Կյանքը չի պատկերացնում առանց *հեռուստացույցի*:

145. Ընդգծված բառերը փորձի՛ր հանել. ի՞նչ բառեր դուրս կգան նրանց հետ, ինչո՞ւ:

Ամբողջ երեկո խոսում էինք անտառի *մասին*:
Կանգնել էր հաղորդավարի խցիկի *մոտ*:
Իր կյանքն ապրում է թիթեռի *նման*:
Ընկերոջ *փոխարեն* վիճում էր ու պատասխանում նրան ուղղված հարցերին:
Չնայած գոռոզությանը՝ սիրում է ընկերներին օգնել:
Որտեղ ասես լինում ես՝ *բաց*ի դպրոցից:
Լավ էր, ամեն ինչ վերջացրինք *առանց* աղմուկի:

146. 142-րդ և 143-րդ վարժություններում ընդգծված կապակցությունների մեջ մտնող բառերը գրի՛ր տրված երկու խմբերում:

Ա. Դպրոց, սեղան, ...:
Բ. Դիմաց, տակ, ...:

147. **Հեռու** *բառի հետ կապակցի՛ր տրված բոլոր բառերը: Դրանք ի՞նչ ձևով դրվեցին:*

Քաղաք, տուն, ծնողներ, վրան, կայարան, ընկերություն, արև:

148. ***Փոխանակ*** *բառի հետ գոյականներ կապակցի՛ր:*

149. Յուրաքանչյուր շարքից մեկ բառ ընտրի՛ր և կազմի՛ր բառակապակցություններ: Ստացված կապակցությունների մեջ ո՞ր բառերն են փոփոխվում:

Ա. Ծով, կյանք, ընկեր, լեռ, տարի, գիշեր:
Բ. Մինչև, մասին, առանց, մեջ, բացի, հանուն, փոխարեն:

*150. Նախորդ վարժության **Բ** խմբի բառերն անվանում են կապեր: Բացատրի՛ր այդ անունը:*

151. Փակագծում տրված գոյականները համապատասխանեցրու նախադասությանը: Գտի՛ր ո՞ր բառն է թելադրում գոյականների ձևը:

Ոչ մի քայլ չի կարողանում անել առանց (օգնություն):
Մարզիկը հանդիսատեսների (համակրանք) բացի գավաթն էլ շահեց:
Ռադիոընդունիչ և թթվածնի բալոններ կային (տակառ) մեջ:
Բոլոր ծովերը կապվում են (օվկիանոսներ) հետ:
Ըստ (օրինակ)՝ տասը նախադասություն գրեցի:
Պարզվում է, որ ձկներին դեպի (ցանց) են հրապուրում զանազան ձայներով:

152. Նախադասություններն ավարտի՛ր:

Մի ափսե ճաշ տաքացնելու համար խարույկ վառելը ձեռնտու չէր, չնայած ...:
Մի ափսե ճաշ տաքացնելու համար խարույկ վառելը ձեռնտու չէր, իսկ ...:
Մի ափսե ճաշ տաքացնելու համար խարույկ վառելը ձեռնտու չէր, բայց ...:
Մի ափսե ճաշ տաքացնելու համար խարույկ վառելը ձեռնտու չէր, որովհետև ...:
Մի ափսե ճաշ տաքացնելու համար խարույկ վառելը ձեռնտու չէր, և ...:

153. Զույգ նախադասությունները տրված բառերից յուրաքանչյուրով միացրո՛ւ, բարդ նախադասություն դարձրո՛ւ:

ա) Որովհետև, բ) քանի որ
Նա որոշել էր բարձրանալ աշխարհի ամենաբարձր լեռնագագաթը: Ուզում էր հռչակվել:

154. Բարդեցրո՛ւ պարզ նախադասությունը՝ ավելացնելով տրված բառերով կապվող նախադասություններ:

Եվ, եթե, որովհետև, թեև, իսկ:

Մարդը ջրի տակ մեկ րոպեից ավել չի կարուլ մնալ:

155. Նախադասությունը լրացրո՛ւ:

153-րդ և 154-րդ վարժություններում տրված բառերը կարելի անվանել ...:

156. Ընդգծի՛ր այն բառերը, որոնք կապում են նախադասությունները:

Եթե ձկները ոչ մի ձայն չլսեին, հնարավոր չէր լինի նրանց խաբել տարբեր թրխկոց-կճրտոցներով:
Գիշերները ձկները սովորաբար դուրս են գալիս իրենց ապաստարաններից, որպեսզի որս անեն:
Ձկներին կարելի է ապաստարանում պահել, եթե դա լուսավորվի արհեստական լույսով:
Լույսի աղբյուրները դանդաղ տեղաշարժում են, որ ձկները մի հարմար տեղում կուտակվեն:
Լույսով հրապուրելով՝ ձկներին կուտակում են մի տեղ, որպեսզի հետո հեշտությամբ որսան:
Նրանք լամպերը հաջորդաբար մարում են, որ ձկների վտառը շարժվի դեպի ցանցը:

157. Պարզի՛ր, թե ընդգծված բառերից ո՛րն է բարդ նախադասության մեջ մտնող նախադասություններ կապում, ո՛րը՝ բառեր:

Մի երիտասարդ ծխախոտատուփի նման մի առարկա մոտեցնում էր դեմքին՝ աչքերին ***ու*** բերանին: Դա երևի տեսահեռախոս է, ***եթե*** մարդը միաժամանակ կարողանում է նայել ***և*** խոսել: Հավանաբար, նա մեր դեմքերին զարմանքի ***կամ*** հիացմունքի արտահայտություն է տեսնում ***և*** շտապ մոտենում է մեզ: Արագ-արագ է խոսում, ***որ*** հասցնի պատասխանել մեր բոլոր հարցերին: Փողոցներում մեքենա չկա, ***բայց*** քաղաքի վրայով սրընթաց թռչում են ինչ-որ թեթև առարկաներ՝ անձնական ինքնաթիռները:

158. Նախադասությունը լրացրո՛ւ:

Եվ, բայց, որպեսզի բառերը կոչվում են *շաղկապներ*, քանի որ ...:

*159. Կետերը փոխարինի՛ր **ինչ-որ** կամ **ինչ որ** բառերով: Դրանցից ո՞րն է **շաղկապ**:*

Երազում տեսնում էր այն, ... ծնողները խոստացել էին բերել այդ հեռու երկրից:

Հավանաբար, ... կենդանի անցավ խավար փողոցով: Ծաղկաթմբերի վրա ... ստվեր էր սողում: Այդ փոքրիկ, փայլփլուն աչքերով սևուկն ... տեսնում էր, անմիջապես փորձում էր կրկնել: Երևի ... ուրախ բան էր մտածում ու ինքն իրեն ժպտում: ... այս դղյակում գտար՝ քոնը կլինի: Կարծես ... նվիրական ու թանկ բան էր գտել: Ուրիշներից թաքցնում էր՝ ... նվիրական ու թանկ էր իր համար: ... փոքրիկ զրահակիր կենդանի էր ետ ու առաջ գնում՝ լարովի խաղալիքի պես: ... եղել է, ոչինչ, մոռացի՛ր:

160. Բառաշարքերը լրացրո՛ւ «Խոսքի մասեր» բաժնի վարժությունների օգնությամբ:

Ա. Դեմ, մասին, նկատմամբ ...:
Բ. Ու, որ, եթե, ...:

161. Պատասխանի՛ր տրված հարցերին:

Ո՞րն է կապերի և շաղկապների նմանությունը: Ո՞րն է դրանց տարբերությունը:

162. Նախադասություններից դուրս հանի՛ր ընդգծված բառերը: Դրանք ի՞նչ ընդհանրություն ունեն:

Վա՛հ, ի՛նչ զարմանալի բաներ ես պատմում:
Ուխա՛յ, սիրտս հովացավ, ի՛նչ լավ ջուր էր:
Բա՛, որ ասում էի՝ կգտնե՛մ, *ջա՛ն, ջա՛ն:*
Հե՛յ, ո՞վ ես, ի՞նչ ես ուզում:
Դե՛, առաջ չգաս, թե չէ վատ կլինի:

163. Տրված բառերը տեղադրի՛ր նախադասությունների մեջ: Անվանի՛ր բառերի այդ խումբը:

Ծուղրուղո՛ւ, վա՛յ, փի՛շտ, շրը՛խկ, պահո՛, հա՛ֆ-հա՛ֆ, դը՛ռռ, վա՛շ-վի՛շ:
..., անպիտա՛ն, ի՞նչ ես բազմել սեղանին:
-...,- լսվեց հանկարծ. ուրեմն նրանք մոտենում են տանը:
..., հիմա ի՞նչ եմ անելու, ո՞ւր եմ գնալու:
Ձորում գետն էր հառաչում՝ ...:
..., ու վերջ. էլ ոչ մեկը չի մտնի այս սենյակը:
..., սա արդեն նորություն է:
..., ոսկի եմ գտել:
Անվերջ ու միալար դռռում է, ու հենց ականջս է ընկնում՝ ..., ուզում եմ փախչել այստեղից:

164. Նախորդ վարժության մեջ տրված բառերը կոչվում են ձայնարկություններ: Այդ անունը բացատրի՛ր:

Արկանել - հին հայերեն՝ ձգել, գցել, տարածել:

165. Ընդգծված բառերը հանի՛ր նախադասություններից և փորձի՛ր հասկանալ, թե ինչ իմաստ են հաղորդում:

Իրոք, ի՜նչ դժվար է անհույս սպասելը:
Իհարկե, լսելու է մինչև վերջ ու *անպայման* տալու է ուզածդ, մի՛ կասկածիր:
Երևի գիշերն է եկել, թե չէ երեկ տեսած կլինեի:
Հավանաբար լսել եք այդ անունը:
Գոնե ավերակները գտեք, այլապես ոչ մեկը չի հավատա:
Մի՞թե այդպես էլ ոչինչ չեն գտնելու առասպելական տաճարից:
Ինչևէ, վերջապես կարող ենք գնալ:

166. Տրված բառերով նախադասություններ կազմի՛ր: Դրանք ինչո՞ւ են **վերաբերական** *կամ* **եղանակավորող** *բառեր կոչվում:*

Թերևս, անշուշտ, անկասկած, կարծես թե, իբր թե, նույնիսկ, միայն, ինչ որ է, ոչ:

Հայերենում կա տասը խոսքի մաս՝ **գոյական, ածական, թվական, դերանուն; բայ, մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն և վերաբերական (եղանակավորող բառեր):**
Կապ կոչվում են այն բառերը, որոնք դրվում են առարկա ցույց տվող բառերի վրա (գոյական, դերանուն) և օգնում են, որ այդ բառը կապվի, հարաբերվի նախադասության մեկ այլ անդամի հետ:
Շաղկապ կոչվում են այն բառերը, որոնք կապում են նախադասության անդամները կամ բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունները:
Ձայնարկություններն ու **վերաբերական բառերը** ցույց են տալիս խոսողի վերաբերմունքը հաղորդվող մտքի նկատմամբ: Զգայական վերաբերմունք արտահայտող բառերը կոչվում են **ձայնարկություններ**: Ձայնարկությունների մեջ մտնում են նաև **նմանաձայնությունները** (օրինակ ծուղրուղո՜ւ, ճը՜ռռ): Դատողական վերաբերմունք արտահայտող բառերը կոչվում են **վերաբերական** կամ **եղանակավորող բառեր:**

Գոյական

167. Կետերը փոխարինի՛ր փակագծերում տրված բառերից կազմված համապատասխան գոյականներով:

Շախմատում մի կանոն կա. չի թույլատրվում վերցնել ...ին (թագ): Մի անգամ այդ կանոնը Ֆրանսիայի Լյուդովիկոս Վեցերորդ արքային փրկեց անխուսափելի ...ից (կործանել):
Մի մարտի ժամանակ ֆրանսիական զորքերը ... (պարտվել) կրեցին անգլիացիներից: Ինքը՝ Լյուդովիկոսը, ընկել էր անգլիացի զինվորների ... (շրջապատել) մեջ: Լսվեց հաղթող զինվորներից մեկի ...ը (բացականչել)՝ արքային վելցրի՛նք: Բայց ... (թագ) իրեն չկորցրեց և ի պատասխան գոռաց.
- Մի՞թե չգիտես, որ նույնիսկ շախմատում արքային չեն վերցնում: Զարմացած զինվորները մի պահ ետ քաշվեցին, և արքան ճեղքեց ...ը (շրջապատել):

168. Կետերը փոխարինի՛ր փակագծերում տրված բառերից կազմված համապատասխան գոյականներով:

Լաբիրինթոս նշանակում է խճճված դրություն, որից դուրս գալը կապված է ...ների (դժվար) հետ: Հին հույները, եգիպտացիներն ու հռոմեացիները լաբիրինթոս անվանում էին այն ...ները (կառուցել), որոնք ունեին բազմաթիվ խճճված սենյակներ ու ...ներ (անցնել):
Ըստ հունական ... (ավանդել)՝ հրաշագործ (արվեստների գիտակ) Դեդալոսը մի այնպիսի լաբիրինթոս է կառուցում Կրետե կղզում, որտեղ մտնողն այլևս ... (ելնել) չի գտնում: Այդ լաբիրինթոսում Կրետեի Մինոս ...ը (թագ) բանտարկում է մարդու գլուխ և ցուլի մարմին ունեցող ահռելի Մինոտավրոսին:

169. Կետերը փոխարինի՛ր փակագծերում տրված բառերից կազմված համապատասխան գոյականներով:

Օվկիանոսի ...երում (խոր)՝ խորջրյա ...ներում (նստել) հաճախակի հանդիպում են շնաձկան ատամներ, որոնք շատ կայուն են ... (քայքայել) նկատմամբ: Երբեմն գտնում են կետի ականջի ու ձկան ոսկորներ, բայց ամբողջական կմախքները շատ հազվադեպ են, քանի որ ...ների (միանալ) քայքայումը ...ից (խոր) մեծանում է:

Գոյականի տեսակները

170. Յուրաքանչյուր շարքի չորս բառերն ի՞նչ ընդհանուր հատկանիշ ունեն, որ նույն շաքրի մի բառը չունի:

ա) Պապ	բ) Հովհաննես Թումանյան
երգիչ	Արշակ Երկրորդ
ձիապան	նվագախումբ
աղջիկ	Զենով Օհան
լուսնյակ	Հայաստանի Հանրապետություն

171. Փորձի՛ր պարզել, թե հատուկ անուններից որոնք են չակերտներում գրվում:

Մենք վաղուց ենք անցել «Քաջ Նազարը»:
Շատ եմ հավանում Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքը:
Այս գիրքը հրատարակել է «Շաղիկ» հրատարակչությունը:
Ընկերս աշխատում է «Նոր դպրոց» հրատարակչությունում:
Ամենաշատը սիրում եմ աշակերտական «Ծիր Կաթին» թերթը:
Կարդացե՞լ ես երիտասարդների «Լրագիր օր» շաբաթաթերթը:
Իրերը տեղավորել էր «Էրեբունի» հյուրանոցում ու հասել ընկերներին:
Ամերիկյան «Գրումման Էրկրաֆտ» ընկերությունը «Բեն Ֆրանկլին» սուզվող ապարատն ստեղծել է խորջրյա ուսումնասիրությունների համար:
Գագարինը առաջին մարդն էր, որ «Վոստոկ» տիեզերանավով տիեզերք թռավ:

172. Տրված հատուկ անունները տեղադրի՛ր նախադասություններում՝ համապատասխանաբար կետադրելով:

Ապոլոն-11, Հաղթանակ, Հազարան բլբուլ, Կինյան, Ջերմուկ, Դունկան, Աքսորականներն անտառում:
Հեքիաթներից ամենաշատը սիրում եմ ...:
... և .... կամուրջները Երևանի ամենագեղեցիկ կառույցներից են:
1969թ. ամերիկացի աստղագնացները ... տիեզերանավով վայրէջք կատարեցին Լուսնի վրա:
Նավապետ Գրանտի երեխաներն էլ դարձան ... զբոսանավի ուղևորներ, և բոլորով գնացին խիզախ ծովայինին գտնելու:
... հանքային ջուրը բուժիչ նշանակություն ունի:
Խորասուզված կարդում էր Մայն Ռիդի ... արկածային վեպը:

173. **Ա** և **Բ** խմբի բառերի տարբերությունը գտի՛ր: Ի՞նչ անուն կտաս խմբերից յուրաքանչյուրին:
Ա. Սեղան, մարդ, բաժակ, քար, ծառ, սար, օդանավ, ջուր, լուսին, ժամացույց, հայելի, զարդատուփ:
Բ. Վախ, ուրախություն, վտանգ, բոպե, կարոտ, սեր, թախիծ, ենթադրություն,

հետաքրքրություն, շփոթություն:

Թանձրացական գոյականները ցույց են տալիս առարկաներ, որոնք կարելի է տեսնել, շոշափել, հոտոտել, լսել և այլն (օրինակ՝ *ջուր, մարդ*): Վերացական գոյականները ցույց են տալիս միայն մտքով ըմբռնվող առարկաներ, իբրև առարկա վերցված հատկություններ և այլն (օրինակ՝ *սարսափ, ընկերություն*):

Գոյականի թիվը

174. Տրված գոյականները հոգնակի՛ դարձրու:

Գլուխ, թվական, աստղ, երկիր, սենյակ, հարևան, ծառ, պտուղ, տեր, ժապավեն, մարդ, կին:

175. Տրված բառերի բաղադրիչները գծիկով բաժանի՛ր: Բոլոր բառերի առաջին բաղադրիչներն ի՞նչ նմանություն ունեն:

Օրինակ՝
գառնարած = գառն - արած,
բեռնակիր = բեռն - ա - կիր,
մատնել = մատն - ել:
Գառնուկ, բեռնել, դռնակ, թոռնիկ, լեռնային, ծոռնիկ, հարսնուկ, մատնոց, ողնաշար, ձկնկիթ, ոտնաման, մկնդեղ:

176. Տրված գոյականները հոգնակի՛ դարձրու: Ո՞ր մասնիկով են նրանք հոգնակի դառնում:

Բեռ, գառ, դուռ, եզ, թոռ, լեռ, ծոռ, հարս, ձուկ, մատ, մուկ, նուռ:

177. Տրված բառերի բաղադրիչները գծիկով բաժանի՛ր: Բոլոր բառերի վերջին բաղադրիչներն ի՞նչ նմանություն ունեն:

Հեռագիր, հարթավայր, լրագիր. գետաձի, մեծատառ, նստատեղ, առագաստանավ:

*178. Բացատրիր, թե ինչո՞ւ տրված բառերի հոգնակին ոչ թե -**ներ**, այլ -**եր** մասնիկով է կազմվել (բառի կազմությանն ուշադրություն դարձրո՛ւ):*

Նախապապ-եր, ծովաշն-եր (փոկեր), հնդկահավ-եր, ճակատամարտ-եր, լաստանավ-եր, դաշտավայր-եր, գետաձի-եր:

179. Երկու խմբի գոյականները նախ վանկատի՛ր, հետո դրանց հոգնակին

կազմի՛ր և օրինաչափությունը բացատրի՛ր:

Օրինակ՝
ար - կըդ, նը - կար,
արկդ - արկդեր, նկար - նկարներ:
Ա. Վագր, աստղ, սանր, անգղ, կայսր, զեբր:
Բ. Խրճիթ, ձկնիկ, դպրոց, գրիչ, կռիվ, գլուխ, տղա, կրակ:

180. Տրված գոյականները դարձրո՛ւ հոգնակի և տեղադրի՛ր նախադասությունների մեջ:

Անգղ, կեղտաջուր, աստղ, գետաձի, հեռագիր, ճակատամարտ:
Երկնքում մեկ-մեկ վառվեցին ..., ամեն ինչ լռեց:
Հին զինվորը հիշում է բոլոր ..., որոնց ինքը մասնակցել է:
Ցրիչը մեկ ժամում բոլոր ... բաժանեց:
Միայն ... էին սավառնում այդ բերդի վրա:
Հետո ... դուրս եկան ջրից ու, լայն բացելով ահռելի երախները, խոնարհվեցին հանդիսատեսներին:
... ամեն օր գետն են լցվում ու հոսում դեպի ծով:

181. Տրված բառերը դարձրո՛ւ հոգնակի և տեղադրի՛ր նախադասությունների մեջ:

Սուզանավ, ծովախորշ, լողափ, մանր, ծովափիղ, արկղ:
... ավելի փոքր են, քան բծավոր փոկերը:
Փոկերն ափից շատ հեռու չեն գնում, մեծ մասամբ ... ու գետաբերանների մոտ են հանդիպում:
Խորտակված ... անձնակազմերը փրկելու համար հատուկ սարք են ստեղծել, որն անվանում են Մոմսենի փրկարար զանգ:
Այս ու այն կողմ թափթփված ... հուշում էին, որ երեկոն սովորական ավարտ չի ունեցել:
Մայրը խոշոր ելակներն ընտրեց մուրաբայի համար, իսկ ... տորթը զարդարեց:
Մարդկանց շնաձկներից պաշտպանելու համար հատուկ ցանցեր են դրել Հարավային Աֆրիկայի, Ավստրալիայի, Մեքսիկական ծոցի բոլոր ... երկարությամբ:

182. Փակագծերում տրված բառերը պահանջվող թվով դի՛ր (եզակի կամ հոգնակի) և համապատասխանեցրո՛ւ նախադասությանը:

Կան ջրային ... («խուզարկու»), ... (որ) ... (ծով) ու ... (օվկիանոս) ... (գանձ) են

որոնում: Հայտնի են հեքիաթային ... (հաջողություն): Վագներն իր ... (ընկեր) հետ Ֆլորիդայի ... (ափ) մոտ խորտակված իսպանական... (նավ) ավելի քան միլիոն դոլար ... (արժեք) ... (գանձ) է գտել: Բայց ավելի մեծ ... (թիվ) են կազմում այնպիսի ... (որոնող), ... (որ) չեն կարողանում նույնիսկ ... (որոնում) ... (ծախս) փակել:

183. Տեքստի գոյականները հոգնակի դարձրո՛ւ: Քո կարծիքով, ո՞ր գոյականների թիվը չպիտի փոխել:

Դանդաղ ընթանում է անապատի նավը՝ ուղտը. նրա վրա սպիտակ ստվերի նման անշարժացել է հեծյալը: Ավազն ու քարն ասես շիկացած վառարան լինեն. կրակ են շնչում: Օդը կանգնած է: Կապտավուն երկինքը պատած է կիսաթափանցիկ կարմրավուն մշուշաքողով, և հորիզոնը գրեթե ձուլվել է երկնքին: Անապատի ճնշող լռությունը խախտում է միայն ուղտի վզից կախված զանգուլակի միապաղաղ զնգզնգոցը:

184. Տեքստում բոլոր գոյականները եզակի թվով են դրված: Որը պետք է հոգնակի դարձրո՛ւ:

Աշխարհում թանգարան շատ կա, սակայն թերևս միայն Անգլիայում է ստեղծվել ֆուտբոլին նվիրված թանգարան: Այս մարզաձևի սիրահարն այստեղ կարող է անցյալի նշանավոր մրցախաղի մասին ֆիլմ, ֆուտբոլի պատմությանը վերաբերող լուսանկար դիտել:
Թանգարանում հռչակավոր ֆուտբոլիստի մոմե արձանով սրահ կա: Այնտեղ ամեն ինչ է ցուցադրվում՝ հուշադրոշ, գավաթ, նույնիսկ՝ Պելեի շապիկը:

185. Տեքստերի գոյականները հոգնակի՛ դարձրու: Փոփոխությունից ո՞ր տեքստի միտքը փոխվեց:

Ա. Երբ ամպրոպ է լինում, կայծակի հարվածը գետնին աղետ է բերում:Նա կարող է պայթյուն ու հրդեհ առաջացնել,ծխնելույզը քարուքանդ անել, կապի գիծը վնասել, մարդ ու կենդանի սպանել:
Բ. Մի անգամ կայծակը խփել է մի աշտարակի: Աշտարակի տակ ստորերկրյա նկուղ է եղել, որտեղ ավելի քան հազար տոննա վառոդ է պահված եղել: Սոսկալի պայթյուն է լսվել: Մեծ քաղաքի մեկ վեցերորդը քարուքանդ է եղել:

186. Երկու տեքստերումկ հայնակի ցոյականները եցակի'տսրՏրա: Այդ փուիոխությանիքւ ո՛ր տեքստի միտքը փոխվեց:

Ա. Ամպրոպները հատկապես վայրագ են լեռներում: Շատ ու շատ սև գործեր են

արել կայծակները: Դեպքեր են եղել, երբ մեծ ծխնելույզները քանդել և դրանց բեկորները հարյուրավոր մետրեր հեռու են շպրտել:
Բ. Վիկինգների' դանիական ջրերում գտնված նավերը զարմանալիորեն լավ.են պահպանվել: Իսկ Միջերկրական ծովում և բարձր աղիության այլ շրջաններում այդ նույն ժամանակներում խորտակված նավերը փտել, քայքայվել են:

Կան միավանկ բառեր, որոնց հոգնակի ձևերը կազմվում են ոչ թե ***–եր***, այլ ***-ներ*** մասնիկով: Իրականում ***-ներ***-ի ***ն***-ն նրանց արմատի մեջ է (օրինակ՝ գառն-եր):
-եր մասնիկով է կազմվում այն երկվանկ բառերի հոգնակին, որոնց վերջին վանկը գաղտնավանկ է (օրինակ՝ աստղ - աստղեր):
-եր մասնիկով է կազմվում նաև այն բարդ բառերի հոգնակին, որոնց վերջին բաղադրիչը միավանկ բառ է գոյականի իմաստով (օրինակ՝ ծովափիղ - ծովափղեր):

Հավաքական գոյականներ

187. Բառակապակցությունների իմաստներն արտահայտի՛ր տրված բառերով:

Բնակչություն, զորք, երամ:
Մի երկրի բոլոր զինվորները, միասին թռչող թռչունները, մի երկրի բոլոր քաղաքների ու գյուղերի բնակիչները:

188. Բառակապակցությունների իմաստներն արտահայտի՛ր տրված բառերով:

Բազմություն, մարդկություն, ազգ, ժողովուրդ:
Մի երկրում ապրող մարդիկ, հավաքված մարդիկ, ամբողջ աշխարհում ապրող մարդիկ, նույն ազգությանը պատկանող բոլոր մարդիկ:

*189. Ա և Բ խմբի գոյականների տարբերությունը բացատրի՛ր: Բացատրի՛ր, թե ինչու են Բ խմբի բառերն անվանում **հավաքական** գոյականներ:*
Ա. Թռչուն, մեղու, ոչխար, ձուկ, գայլ, ձի, զինվոր, հայ, Գեղամ:
Բ. Երամ, պարս, հոտ, վտառ, ոհմակ, երամակ, ջոկատ, ժողովուրդ, ամբոխ:

190. Փորձի՛ր բացատրել, թե ընդգծված բայը որ ցեպքամ է եզակի և որ դեպքում՝ հոգնակի:

Ա. Գառն *արածում է*:
Բ. Գառներն *արածում են*:

Գ. Գառների հոտն *արածում է*:
Ա. Գայլը գյուղ *մտավ*:
Բ. Գայլերը գյուղ *մտան*:
Գ. Գայլերի ոհմակը գյուղ *մտավ*:
Ա. Մեղուն *թռավ* դեպի ծառը:
Բ. Մեղուները *թռան* դեպի ծառը:
Դ. Մեղուների պարսը *թռավ* դեպի *ծառը*:

191. Փակագծերում դրված բառերը համապատասխան ձևով գրի՛ր:

Օրինակ՝
Դեպքի վայրում հավաքված ամբոխն (աղմկել): - Դեպքի վայրում հավաքված ամբոխն աղմկում էր:

Կռունկների երամը (թռչել):
Զորքը (տեղավորվել) դաշտում:
Ժողովուրդը (լսել) հռետորին:
Հրապարակում հավաքված բազմությունը ինչ-որ բանի (սպասել):
Ավագանին (ողջունել) օտարականին:
Հոտն (իջնել) սարից:
ժողովուրդը գոհ (լինել) այդ որոշումից:
Բնակչությունն իր ղեկավարներից խելացի վճիռներ ու որոշումներ (սպասել):

192. Կետերը փոխարինի՛ր փակագծերում դրված բառերից մեկով:

Վաղուց ... (է, են) հեռացել այն երամը, ... (որից, որոնցից) հետ ընկած վիրավոր կռունկին խնամում էինք:
Դրսում աղմկում էր ամբոխը, ... (որբ, որոնք) ուզում ... (էր, էին) տեսնել դատապարտյալին:
Բազմությունը խուլ գվվում էր: ... (Նա, նրանք) ինչ-որ բանից հուզված... (էր, էին):
Հոտը, ... (որին, որոնց) էլ չէր տեսնելու, ... (մնաց, մնացին) սարի հետևում:
Մարդկությունը պիտի ... (մտածի, մտածեն), որ ... (իր. իրենց) ապագան կվտանգվի, եթե շարունակի անփութորեն փչացել բնությունը:

Հավաքական **գոյականները ցույց են տալիս միատեսակ առարկաների հավաքական ամբողջությունը կամ բազմությունը: Դրանց հետ համաձայնող բառերը (բայեր, դերանուններ) դրվում են եզակի թվով:**

Գոյականի հոլովումը

193. Հարցում արտահայտող բառի փոխարեն պահանջվող ձևով (հոլովով) գրի՛ր տրված գոյականները:

Գնդակ, արկ, ջուր, քար, կույտ, բուն, բույն:
Տղան ոտքը զգուշորեն մոտեցրեց (ինչի՞ն):

*194. Հարցում արտահայտող բառի փոխարեն պահանջվող ձևով (հոլովով) գրի՛ր **թանգարան** բառը:*

Տարիներ շարունակ (ի՞նչը) սիրով ընդունում էր այցելուներին:
(Ինչի՞) տնօրենը ոգևորվել էր նոր գտածոյով:
Չի կարողանում կտրվել իր ստեղծած (ինչի՞ց):
Ինչքա՛ն ենք հպարտանում ձեռագիր մատյանների (ինչո՞վ):
(Որտե՞ղ) ամեն ինչ նույնն էր, տարիներն այնտեղ ոչինչ չէին փոխել:

195. Ընդգծված բառերը փոխարինի՛ր տրված բառակապակցություններով:

Լեռներուսմ գտնվող, լեռներում ապրող մարդիկ, լեռան նման բարձրանալ, լեռներով ծածկված:
Լեռնցիները հավաքվել էին օտարական հյուրին տեսնելու:
Լեռնային այդ գյուղում բոլոր մարդիկ իրար ճանաչում էին:
Նկարում փոթորկված ծովի մի ալիք էր *լեռնացել* ու կանգնել:
Լեռնոտ երկիր է Հայաստանը:

*196. Նախադասություններից առանձին-առանձին դուրս գրի՛ր **արջ** արմատով կազմված, ածանցավոր բառերը և **արջ** գոյականի ձևերը (բոլորն էլ ընդգծված են):*

Արջուկի սիրած խաղը բլրից սահելն է:
Արջային սովորություններ ունի. սիրում է քնել, ամեն օր մեղր է ուտում:
Անարջ գազանանոցն ինձ չի հետաքրքրում:
Արջը թաթը բարձրացրեց և ուզում էր թափով իջեցնել:
Կատաղած *արջից* վտանգավոր գազան չկա:
Ինձ *արջով* մի՛ վախեցնի:
Արջին շատ հեշտ կընտելացնես, եթե սոված չթողնես:

197. Տրված գոյականներով երկուական նախադասություն կազմի՛ր՝ դրանց

ավելացնելով ***-ին, -ով*** *վերջավորությունները:*

Ծով, ճանապարհ, մեքենա:

198. ***Քաղաք,տնակ, դասարան*** *գոյականների նման ձևերը խմբավորի՛ր՝ դուրս գրելով նախադասություններից:*

Մի հեռու քաղաքում ապրող ընկեր ունեմ, որին երկար ժամանակ չեմ տեսել:
Տնակն անտառում էր, հետաքրքրասեր աչքերից հեռու:
Դասարանից դուրս մոռանում է դասի մասին:
Այդ քաղաքով անցնելիս նորից հիշեցի քո պատմությունը:
Երբ մոտեցա տնակին, ներսից ձայներ լսեցի:
Իր տնակից հեռանալ չի կարողանում:
Փորձում էր տնային բոլոր հանձնարարությունները դասարանում անել:
Ձայնը գլուխն էր գցել ու տնակով մեկ ճչում էր:
Վենետիկ քաղաքը հայտնի էր իր ջրանցքներով ու նավակներով:
Այդ օրվանից մոտիկ չի գալիս մեր դասարանին:
Մեքենան քաղաքից դուրս եկավ ու սլացավ դեպի արևելք:
Մեր դասարանով այլևս չեք անցնի, երկրորդ դուռը փակել ենք:
Այդ տնակում մի հետաքրքիր ընտանիք է ապրում:
Աշխարհը նվաճելով՝ հասել էր այդ քաղաքին:
Այդ օրվանից դասարանը դարձել էր աշխարհի ամենակարևոր տեղը:

199. Տրված բառերը՝ հոլովների անունները, բառակազմական վերլուծության ենթարկի՛ր և փորձի՛ր բացատրել իմաստները:

Ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական:

200. Բառերի տրված ձևերը տեղադրի՛ր հոլովման այս աղյուսակում:

Հեքիաթում, հեքիաթից, հեքիաթ(ը), հեքիաթով, հեքիաթի(ն), դպրոց(ը), դպրոցի(ն), դպրոցից, դպրոցով, դպրոցում:
Ուղղական –
Տրական –
Բացասական –
Գործիական –
Ներգոյական –

201. Տրված բառաձևերը առանձնացրո՛ւ ըստ հոլովների: Ո՞ր բառը բոլոր հոլովաձևերը չունի:

Ծովում, ծովից, ծովը(ը), ծովով, ծովի(ն), նավաստի(ն), նավաստու(ն), նավաստուց, նավաստով, սենյակում, սենյակ(ը), սենյակով, սենյակի(ն), սենյակից, բանաստեղծից, բանաստեղծ(ը), բանաստեղծով, բանաստեղծի(ն):

202. **Դաշտ, աշակերտ** *գոյականները հոլովի՛ր: Ի՞նչ հարցի է պատասխանում հոլովներից յուրաքանչյուրը:*

203. Տրված բառերը խմբավորի՛ր՝ ըստ Ա և Բ խմբերի: Յուրաքանչյուր խմբի բառերը ի՞նչ հարցերի են պատասխանում և ի՞նչ հոլովով են դրված:

Գյուղ(ը), օրվա(ն), կին(ը), գարուն(ը), այգու(ն), օր(ը), մերոնց, անկում(ը), գյուղի(ն), այգի(ն), ընկերահու(ն), երկիր(ը), գարնան(ը). գիշեր(ը) անկման(ը), ընկերուհի(ն), երկրի(ն), կնոջ(ը), ընկեր(ը), գիշերվա(ն), մերոնք, ընկերոջ(ը):

Ա. Քեռի(ն), լիճ(ը), ...:
Բ. Քեռու(ն), լճի(ն), ...:

204. Տրված գոյականների՝ ո՞ւմ կամ ինչի՞(ն) հարցին պաւրասխանող ձևեր (տրական հոլով) կազմի՛ր: Ստացածդ բառերի վերջավորություններն ընւյգծիր:

Հեղինակ, ծովակալ, ինժեներ, ճարտարապետ, տնտեսուհի, նավաստի, տեր, քույր, ընկույզ, գիրք, գագաթ, ընկուզենի, գինի, ձի, աշուն, շարժում, տարի, ամիս, ձերոնք, պապոնք, մարդիկ, կանայք, քաղաքներ, գրքեր:

205. Կետերի փոխարեն գրի՛ր տրված գոյականների՝ ո՞ւմ կամ ինչի՞ հարցին պատասխանող ձևերը (տրական հոլով): Ա և Բ շարքի բառերից ստացված ձևերն ինչո՞վ են տարբերվում:

Ա. Երգ, մարդ, գարուն:
Բ. Հայր, տուն, ընկերություն:
Մտածել ... մասին:

206. Տրված բառերի ուղիղ ձևերը գրի՛ր և փորձի՛ր բացատրել Ա և Բ խմբի բառաձևերի տարբերությանը:

Ա. Կատվի, տղայի, աքլորի, մարդու, ամուսնու, բալենու, ձկան, գառան, ամսվա, ամառվա, սկեսրոջ, դասընկերոջ, Սահակենց, մարդկանց, աղջկա, սիրո:
Բ. Մոր, եղբոր, տան, ձյան, անկյան, քաջության, գիտության, արյան, անվան,

դստեր:

207. Բառակապակցություններ կազմի՛ր՝ հարցում արտահայտող բառը գոյականով փոխարինելով: Ավելացրածդ բոլոր բառերն ի՞նչ հոլովով դրվեցին:

Կարոտել *ո՞ւմ*: Կարոտել *ինչի՞ն*:
Փաթաթվել *ո՞ւմ*: Փաթաթվել *ինչի՞ն*:
Կպչել *ո՞ւմ*: Կպչել *ինչի՞ն*:

208. Բառակապակցություններ կազմի՛ր՝ հարցում արտահայտող բառը գոյականներով փոխարինելով: Ավելացրածդ բառերը որ դեպքում ի՞նչ հոլովով դրվեցին:

Գրկել եմ *ո՞ւմ*: Գրկել *ի՞նչ(ը)*:
Խանգարել *ո՞ւմ*: Խանգարել *ի՞նչ(ը)*:
Պաշտպանել *ո՞ւմ*: Պաշտպաեել *ի՞նչ(ը)*:

*209. Տրված բառերի **բացառական** հոլովաձևերը (ումի՞ց, ինչի՞ց) կազմի՛ր: Ստացված բառերի վերջավորություններն ընդգծի՛ր:*

Պապ, թոռ, հայր, տուն, գյուղ, քաղաք, անկողին, քամի, գինի, կաղնի, բանալի:

210. Տրված բառաձևերի վերջավորություններն առանձնացրո՛ւ և Ա և Բ խմբի բառաձևերի կազմության տարբերությունը գտի՛ր:

Օրինակ՝
մարդուց - մարդ-*ուց*, տանից – տան-*ից*:
Ա. Բառից, գյուղից, այցուց, որդուց, ծերունուց, երդումից, շաբաթից, լեռներից:
Բ. Գարնանից, մահվանից, շաբաթվանից, ընկերոջից, մորից, մարդկանցից, կանանցից:

211. Բառակապակցություններ կազմի՛ր՝ հարցում արտահայտող բառը գոյականներով փոխարինելով:

Հուզվել *ինչի՞ց*:
Մաշվել *ինչի՞ց*:
Հալումաշ լինել *ինչի՞ց*:

*212. Տրված բառերի **գործիական հոլովաձևերը** (ումո՞վ, ինչո՞վ) կազմի՛ր:*

Ստացված բառերի վերջավորություններն ընդգծի՛ր:

Ա. Որդի, հայր, քույր, դաշտ, քաղաք, անտառ, փողոց:
Բ. Ուրախություն, քաջություն, օգնություն:

213. Բառակապակցություններ կազմի՛ր՝ հարցում արտահայտող բառը գոյականներով փոխարինելով:

Պատել *ինչո՞վ*:
Շրջապատել *ինչո՞վ*:
Զբաղվել *ումո՞վ:* Զբաղվել *ինչո՞վ*:

214. Բառակապակցություններ կազմի՛ր՝ հարցում արտահայտող բառը գոյականներով փոխարինելով:

Հիանալ *ումո՞վ*: Հիանալ *ինչո՞վ*:
Սքանչանալ *ումո՞վ*: Սքանչանալ *ինչո՞վ*:
Տարվել *ումո՞վ*: Տարվել *ինչո՞վ*:

215. Փակագծերում տրված գոյականները գրի՛ր պահանջվող ձևով (հոլովով):

Մարդիկ վաղուց են (միջոցներ) փնտրում վատ (տեսողություն) լավացնելու համար: Վերջապես հայտնագործվեց ակնոցը՝ (ապակի) պատրաստված առաջին օպտիկական (գործիք): Ժամանակակից (ակնոց) երկար ու դժվարին ճանապարհ է անցել, թեև հիմա մեզ թվում է, թե հնարավոր չէ պատկերացնել (տեսողություն) լավացնելու ավելի հասարակ գործիք: (Ակնոց) նման մի բան հնարել էին դեռևս Հին (Հռոմ): Հայտնի է, որ (գլադիատորներ) կռվի սիրահար Ներոն կայսրը կարճատես էր: (Կրկես) տեղի ունեցող ամեն ինչը լավ տեսնելու համար նա օգտվում էր թափանցիկ (զմրուխտ) պատրաստված մեծ (ոսպնյակ):

216. Նախադասությունն այնպես փախի՛ր, որ ընդգծված բառը փակագծերում տրված ձևով (հոլովով) լինի, և նախադասության իմաստը չփոխվի:

Օրինակ՝
Բուսական ու կենդանական աշխարհի փոփոխությունը պայմանավորված է կլիմայական *գոտիներով*: (գոտիների) - Բուսական ու կենդանական աշխարհը փոփոխվում է ըստ կլիմայական գոտիների:

Արարատյան ***դաշտի*** բնակիչները կիսաանապատային գոտու ներկայացուցիչներ են: (դաշտում)

Արաքսի ***ափին***՝ եղեգնուտներում, վարազն է ապրում: (ափի):
Այլ է Հայաստանի խոտավետ լեռնային ***տափաստանների***՝ Շիրակի, Ապարանի, Լոռու կենդանական աշխարհը: (տափաստաններում)
Հին հունական փիլիսոփա ***Արիստոտելի*** կարծիքով երկնային տարածությունը կառուցված է յոթ մասից: (Արիստոտելը)
Միջնադարամ նույնպես եղել է այն կարծիքը, որ ***երկինքը*** բաղկացած է յոթ ***մասից***: (երկնքում, մաս):
Ասում էին, որ յոթերորդ երկնքում ***երջանկությունն*** է իշխել: (երջանկության)

217. Նախադասության միտքն այնպես արտահայտի՛ր, որ ընդգծված բառը փակագծերում տրված հոլովով լինի:

Թուրինի ***թանգարաններից*** մեկում, օրինակ, պահպանվում է մի հարթաքանդակ, որը լողացող մարդ է պատկերում: (թանգարանում)
Եգիպտացի հնուսգույն քանդակագործի ստեղծած լողորդի շարժումները նման են ժամանակակից բրաս լողաձևի ***տարրերին***: (տարրերը)
Նախորդ հարյուրամյակի առաջին կեսերին մրցումներ են կազմակերպվել ռուսական բանակի «լողացող ***թիմերի***» միջև: (թիմերը)
Սպորտային ***լողով*** առաջին անգամ իսկապես հետաքրքրվել են Անգլիայում, 1877 թվականին: (լողը)

Գոյականն ունի հինգ հոլով՝ *ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական*:
Տրական հոլովը կազմվում է կա՛մ վերջավորությունների (***ի, ու, ան, վա, ոջ, ց***) օգնությամբ, կա՛մ հիմքում որևէ ձայնավոր կամ երկհնչյուն փոխվելով (օրինակ՝ հայր - հոր, տուն - տան):
Բացառական հոլովը կազմվում է ***-ից***, ***-ուց*** վերջավորությունների օգնությամբ:
Գործիական հոլովը կազմվում է ***-ով*** կամ ***-ը*** վերջավորությունների միջոցով (***-ը*** վերջավորությունից առաջ հիմքի ***ն*** հնչյունը դառնում է ***մ***. օգնության+ը - օգնությամբ):
Ներգոյական հոլովը կազմվում է ***–ում*** վերջավորությամբ: Գոյականների մի մասը (ոչ թանձրացական գոյականներ, անձ ցույց տվող գոյականներ և այլն) ներգոյական հոլովով չի գործածվում: Ներգոյական հոլովի իմաստը կարելի է արտահայտել տրական հոլովի և ***մեջ*** կապի օգնությամբ (պահարանում - պահարանի մեջ):

272. Երեք նախադասությամբ ներկայացված միտքն արտահայտի՛ր տասը նախադասությամբ։

Խելամիտ զովազդի շնորհիվ՝ «Ֆուձի» հյուրանոցը Ֆուձիյամա լեռան 3776 մետրանոց գագաթի շրջակայքի բազմաթիվ հյուրանոցներից ամենահաջողակն է: Գովազդը հետևյալն է. «Եթե Ձեր համարի պատուհանից Ֆուձիյաման դիտելուն վատ եղանակը խանգարի, հյուրանոցը Ձեր վճարած վարձը կվերադարձնի»: Իսկ տեսանելիությունը տասնյոթ տարվա ընթացքում ընդամենը տասնհինգ օր է վատ եղել:

273. Նախադասությունների արտահայտած մտքերի տարբերությունը գտի՛ր. ի՞նչն է այդ տարբերության պատճառը։

Ա. Սուրենին՝ ակումբի նախագահին, կհամոզենք: Բ. Սուրենին, ակումբի նախագահին կհամոզենք:

Ա. Սիմինդրի խիտ արտից դուրս եկավ մի ջահել կին՝ եղեգի պես ճոճելով բարակ իրանը: Բ. Սիմինդրի խիտ արտից դուրս եկավ մի ջահել կին՝ եղեգի պես, ճոճելով բարակ իրանը:

274. Տեքստի նախադասությունների մեջ տեղադրի՛ր հարցերին համապատասխան նախադասությունները։

Մոտավորապես վաթսունհինգ միլիոն տարի առաջ մեր մոլորակի կենդանիները զանգվածաբար ոչնչացել են, ի՞նչ պատճառով: Գիտնականների մի խումբ կարծիք է հայտնել, ինչպիսի՞: Ուղղակի աղետից հետո փոշու այնքան հոծ շերտ է պատել Երկիրը, ինչքա՞ն : Դրանից և՛ջերմությունն է զգալիորեն նվազել, և՛ խավար է եղել, ինչքա՞ն: Այդ ժամանակաշրջանի շատ կենդանիներ, ո՞ր, չեն կարողացել հարմարվել պայմաններին և ոչնչացել են:

Մեր Երկրին ինչ-որ Աստղակերպ կամ փոքր մոլորակ է ընդհարվել: Կենդանիները հարվածից կամ ցնցումից չեն ոչնչացել: Արեգակի ճառագայթները չեն կարողացել հասնել նրան: Կենդանիները չեն կարողացել սնունդ և ապաստան գտնել: Դրանց թվում են նաև դինոզավրերը:

275. Տեքստը երեք նախադասությամբ փոխադրի՛ր

ա) առաջին և երկրորդ, չորրորդ և հինգերորդ նախադասությունները մեկական նախադասություն դարձնելով,

բ) երկու նախադասություն հանելով:

Գայլն անցնում էր մի վրանի մոտով: Նա տեսավ, որ այնտեղ հովիվները զառան միս են ուտում: Այդ փաստն անարդարացի թվաց ու շատ նեղացրեց գայլին: Նա մոտեցավ հովիվներին ու բողոքեց: Ասաց.

-Ի՞նչ հարայ-հրոց կբարձրացնեիք, եթե ձեր արածն անեի՛:

276. Բարդ նախադասությունը պարզ նախադասություններով արտահայտի՛ր:

Հարավային Աֆրիկայում կա մի բույս, որը հիմնականում թիթեռներով է սնվում:

Անգլիայում մեծ համարում ունի խոլորձ (օրխիդեա) ծաղիկը, որն ունի չորս հազար տեսակ:

Առավել արժեքավոր է այն տեսակը, որի հոտը շարունակ փոխվում է:

Մոնղոլիայի երկարակյացների մեջ, որոնց միջին տարիքը գերազանցում է հարյուրը, չկա ոչ մի տղամարդ:

Արդեն գիտական պատասխան կա այն հարցին, թե ո՞ր տարիքից են երեխաները սկսում հեքիաթ սիրել:

277. ***Քո մասին պատմի՛ր (քո և ծնողներիդ, քո և ընկերներիդ՝ խաղընկերներիդ, դասընկերներիդ, գործընկերներիդ, քո և ուրիշների հարաբերությունների մասին պատմի՛ր) և պատմությունդ վերնագրի՛ր:***

278. Ա և Բ նախադասությունները համեմատի՛ր: Տարբերությունները գտի՛ր՝ ուշադրություն դարձնելով թվականներն:

Ա. Ամեն մեկը երկու հաղթանակ շահեց:
Բ. Բոլորը երկուական հաղթանակ շահեցին:

Ա. Հաղթողներից յուրաքանչյուրին մի գիրք նվիրեցին:
Բ. Հաղթողներին մի-մի գիրք նվիրեցին:

Ա. Ռոբոտներից յուրաքանչյուրը քսան հրահանգի էր ենթարկվում:
Բ. Ռոբոտները քսանական հրահանգի էին ենթարկվում:

Ա. Ամեն մի թզուկը հինգ խնդիր առաջարկեց:
Բ. Թզուկները հինգական խնդիր առաջարկեցին:

Ա. Ամեն անկյունում յո՛թ քար շարիր:
Բ. Անկյուններում քարերը յոթ-յո՛թ շարիր:

279. Նախադասություններն ըստ օրինակի փոխի՛ր (կրավորական դարձրու):

Օրինակ՝ *Քամին երկնքով մեկ հալածում էր ամպերին: -*
Ամպերը երկնքով մեկ հալածվում էին քամուց:

Այս նկարը պատին պապս է ամրացրել:

Այս գիրքը նաև ընկերս է կարդացել:

Առավոտյան ցողը թրջել էր ոտքերը:

Տերը շանը կապել էր ծառից:

Տարբեր մարդիկ տարբեր ձեով էին պատմում առավոտվա դեպքը:

Սարքերը թեթև ցնցում գրանցեցին:

Ինստիտուտի աշխատակիցները մարդկանց զգուշացրին սպասվող փոթորկի մասին:

Անտառում այդ երեխային որսորդներն էին գտել:

Տղային միշտ նույն երազն էր կախարդում:

Վարպետի խնամքոտ ձեռքը տաշում ու իրար կողքի էր դնում քարերը:

Շինարարությունն ավարտին հասցրին:

280. Նախադասությունները տարբեր ձևերով կետադրիր այնպե՛ս, որ իմաստը փոխվի:

Նա թագավորին նամակ էր գրել միայն իր որդու Եգորի մասին:

Վաղուց չէր տեսել ընկերոջը Վահագնին:

Նուբարենց տունը համարյա ամեն օր լի էր հյուրերով Զավենի ընկերներով:

Իշխանը կանչեց բերդապետին Վահրամին մի անգամ ևս զգուշացնելու գիշերային արկածի մասին:

281. Տեքստը կարդա՛ և առաջադրանքները կատարի՛ր:

Գողը գիշերով մի հարուստի տուն էր թալանել, իր ավարն առել, գնում էր:Նրա դեմ դուրս եկավ պահակը: Նո գողին հարցրեց թե պարկում ի՛նչ կա և ո՛ւր է տանում: Գողը հանգիստ բացատրեց, թե տան տերը մեռել է և մեռնելուց անմիջապես առաջ իրեն պատվիրել է որոշ իրեր տանել եղբոր տուն: Այդ բացատրությունը պահակին կասկածելի թվաց: Նա հարցրեց, թե ինչո՛ւ այդ դեպքում տնից ոցբ ու՝ կացչի լսվում: Բայց գողը դրա պատասխանն էլ ուներ: Ասաց՝ թող պահակը հանգիստ սպասի՛ր մինչև առավոտ, առավոտյան անպայման կլսես, թե տնեցիները ինչպե՛ս են ողբում ու լալիս: Միամիտ պահակը պատասխանի երկիմաստությունը չզգաց և բաց թողեց

գողին։ Առավոտյան նա լսեց, թե մեծատունն ու կինը ինչպես են ողբում ու անիծում, ամեն ինչ հասկացավ, բայց էլ ի՞նչ աներ։

Առաջադրանքներ.

Ա) գրի՛ր ո՞րն է այս տեքստի ասելիքը,

Բ) հերոսներին նկարագրի՛ր և բնութագրիր (չորս-հինգ գործող անձ թող լինի),

Գ) գործողության վայրը նկրագրի՛ր

Դ) բացատրի՛ր՝ ինչպե՛ս են հասկանում այս նախադասությունը՝
ա/ գողը,

բ/ պահակը.

«հանգիստ սպասի՛ր մինչև առավոտ, առավոտյան անպայման կլսես, թե տնեցիները ինչպե՛ս են ողբում ու լալիս։»

Ե) տեքստը սցենարի վերածի՛ր

Զ) սցենարդ վերանգրի՛ր

282. Ընդգծված բառակապակցությունները դարձրո՛ւ նախադասություններ։

Աշխարհի քաղաքական քարտեզը թերթելով՝ մարդ հաճախ զարմանում է։ **Իրադարձություններին ուշադիր հետևելու դեպքում** բոլորովին անհայտ երկրներ կգտնի՝ իրենց սահմաններով ու քաղաքներով։ Առաջին քարտեզը գծելու օրվանից քանի՞ անգամ է փոխվել աշխարհի քարտեզը։ Վարդագույն, կանաչ, մոխրակապտավուն, դեղին բծերը մերթ սեղմվում են, մերթ լայնանում, մերթ էլ բոլորովին անհետանում **գուցե և ավելի ուշ հանդես գալու համար**։

283. Տրված տեքստերը փոխադրի՛ր՝ ընդհանուր վերնագիր և հետևություն գրելով։

Ա. Պեկինում չինական ամենահին տաճարներից մեկը՝ երկնքի տաճարն է պահպանվել։ Դա շատ անսովոր շինություն է. նրա տանիքը բաց երկինքն է։ Տաճարի ներսում քարե հարթակ է։

Դրա առաջին սալի վրա կանգնած մարդու կանչը մեկ արձագանք է ունենում։ Եթե երկրորդ սալից են կանչում՝ երկու անգամ է լսվում, երրորդ սալից՝ երեք անգամ։ Հարթակի կենտրոնում մի քարե սկավառակ կա։ Երբ մարդը դրա վրա է բարձրանում ու խոսում, ձայնն ուժեղանում, սովորականից մի քանի անգամ բարձր է հնչում։ Միմյանցից հարյուրավոր քայլ հեռու կանգնած մարդիկ իրար հետ մինչև անգամ շշնջոցով կարող են խոսել։

Բ. Իրաքի իշխանությունը երկու միլիոն դոլար պարգև է խոստացել այն մարդուն, ով Շամիրամի կախովի այգիների գաղտնիքը կբացահայտի։ Բանն այն է, որ Իրաքում ուզում են

վերակառուցել Հին աշխարհի ամենազարմանալի քաղաքներից մեկը՝ Բաբելոնը: Ու որպեսզի հին քաղաքը ճշտորեն կրկնվի, նաև կախովի այգիները պիտի վերականգնեն: Սակայն ոչ ոք չի կարողանում լուծել աստիճանահարթակների վրա տնկած բույսերը ջրելու խնդիրը: Չեն հասկանում, թե երեք հազար տարի առաջ կախովի այգիներն ինչպե՞ս են ջրել՝ առանց ժամանակակից տեխնիկական միջոցները կիրառելու:

284. ***Փորձի՛ր այս բառերի կազմությունն ու նշանակությունը բացատրել:***

ա) Այգեբաց, այգաբաց:

բ) Հայելի, հայացք, ծովահայաց: (գրաբ. հայել - նայել)

գ) Ակնթարթ, ակնդետ, ակնոց:

դ) Քինախնդիր, վրեժխնդիր, մանրախնդիր (գրաբ. խնդրել -

փնտրել):

285. Տեքստն այնպես փոխադրի՛ր, որ զգացվի՝ ինքդ զարմացած ես և ուզում ես ուրիշներին էլ զարմացնել:

Երբ առաջին անգամ Անտարկտիդայի սառցածածկույթի տակ արևադարձային հնազույն կենդանիների և ծառերի քարացած մնացորդներ հայտնաբերվեցին, ոչ ոք դրան չհավատաց: Մոտ հիսուն տարի պահանջվեց, որ վեցերորդ մայրցամաքի դինոզավրերի մասին ճշմարտությունը հաղթանակի: Անտարկտիդայում հնէաբանական վերջին գտածոն եզակի է: Մի այնպիսի կմախք է հայտնաբերվել, որպիսին գիտնականները դեռ երբեք և ոչ մի տեղ չէին հանդիպել: Դա երեք մետր վաթսուն սանտիմետր բարձրություն ունեցող փետրավոր գիշատիչ մողես է, որը ջայլամ է հիշեցնում, բայց ձիու գլխից մեծ գլուխ և արծվի հզոր կտուց ունի: Գտածոն քառասունվեց միլիոն տարեկան է:

286. Ըստ տրված կաղապարների, բարդ նախադասություններ կազմի՛ր:

Այնքան……, ինչքան (որքան)……. :

Այնպես……. , ինչպես……:

Այնտեղ……. , որտեղ (ուր)……:

Երբ……. , հենց այդ ժամանակ ……:

287. Տեքստն այնպե՛ս փոխադրիր, որ լուրն իմացվի

երկու մարդու զրույցից:

Ճապոնիայի գյուղատնտեսության նախարարությունն ուտելի ծաղիկների մշակման հատուկ ծրագիր է մշակել։ Բանն այն է, որ Ճապոնիայում մոդայիկ է դարձել քրիզանթեմից, վարդի տերևներից, անգամ սրբազան սակուռայի ծաղիկներից ճաշեր պատրաստելը։ Ռեստորաններում խոհարարները յուրաքանչյուր ճաշատեսակի մեջ մեխակի կամ նարդոսի եփուկ են ավելացնում։ Ինչպես Ճապոնա¬ցիներին, այնպես էլ արտասահմանցի զբոսաշրջիկներին շատ են դուր գալիս ծաղիկների տերևներից պատրաստած աղցանները:

288. Նախադասությունները տարբեր ձևերով կետադրիր այնպե՛ս, որ իմաստը փոխվի։

Մանեն կարդում էր բոլորովին հանգիստ նրա ձայնը հնչում էր հարթ ու հավասար։

Այգուց դուրս եկած միջահասակ մարդուն Վարդանին նո¬րից հանդիպեցինք ձորում։

Աճում էին Հակոբի խնձորենիները որդիները Արամն ու Արեգը։

Երկաթուղու վարչության կառավարիչը ճաղատ գլխով ա շատ երկար բեղերով մի մարդ և մյուս հյուրերը երգում էին։

Այդ կնոջից Սառայի մորից հետո աներս նորից ամուսնացել է։

289. Երկխոսություն հորինի՛ր, որ կարող է լինել համերգային դահլիճում։

290. Բ խմբի նախադասություններն Ա խմբի նախադասություններին ավելացրո՛ւ և կետադրի՛ր (մի մասը՝ ստորակետերով, մի մասը՝ փակագծերով)։

Ա. Արամը տանն սպասում էր։

Ընկերը այլայլված քայլում էր անկյունից անկյուն։

Տղայի այդ արարքի մասին ինձ պատմել էր նրա մայրը։

Մարինեն գեղեցիկ ու պայծառ աչքեր ուներ։

Վերջապես գործընկերս եկավ, և մենք միասին դուրս գնացինք։

Աղջիկն անսպասելիորեն ժպտաց ու պարզեց ձեռքը։

Բ. Ա՛յ քեզ զարմանալի պատմություն։

Ես հենց նրան էլ սպասում էի։

Վախից գլուխը կորցրել էր։

Նրա հետ երեկ էի պայմանավորվել։

Նա զարմանալի պայծառ ժպիտ ուներ։

Նրա անունը, պարզվեց, Մարինե է։

291. Հասակակիցներիդ ուղղված հարցեր գրի՛ր, հետո դրանցով հարցազրույց անցկացրու և գրի՛առ:

292. Հարցում արտահայտող բառերը գոյականներով փոխարինելով՝ բառակապակցություններ կազմի՛ր:

Վերաբերել (կապ, առնչություն ունենալ, կապված լինել) ինչի՞ն:
Վերաբերվել (վերաբերմունք ցուցաբերել, վարվել) ո՞ւմ, ինչի՞ն:

293. Տրված պարզ նախադասությունները բարդեցրո՛ւ՝ փակագծում տրված հարցին պատասխանող նախադասություն ավելացնելով (որպեսզի ավելացրածդ նախադասությունը տրվածի հետ կապվի, կարող ես անհրաժեշտ շաղկապ կամ շաղկապական բառ ավելացնել):

Այդպիսի տղային պետք է փնտրել: (որտե՞ղ)

Քարավանը ծանր-ծանր առաջ էր շարժվում: (որտեղո՞վ)

Նրան անապատում հանդիպեցի: (որտե՞ղ)

Առավոտից պատմեց այդ պատմությունը: (ինչքա՞ն)

Արդեն ուշ էր: (ինչքա՞ն)

Թոռան գալը տատին կուրախացնի: (ինչքա՞ն)

Մի՞թե այդքան սիրում էր կատվին: (ինչքա՞ն)

Նավը հեռացավ: (ինչքա՞ն)

294. Տեքստը վերականգնի՛ր՝ նախադասությունները վերադասավորելով:

Բացի դրանից, թեև դա ճակատագրի վրա որոշակիորեն չի ազդում, բայց առողջության վրա ազդեցություն թողնում է: Արյան խմբերի միջև եղած տարբերությունը փոքր է. բայց չի կարելի անտեսել, որովհետև վերաբերում է էրիթրոցիտներին և արյան շիճուկի կարևոր հատկություններին: Երեխաները դա ծնողներից են ժառանգում: Ամբողջ աշխարհում մարդկանց արյունը չորս խմբի է բաժանվում և միանման (0 կամ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ) նշանակվում: Ճապոնացի հոգեբանները պնդում են, որ մարդու արյան խումբը թույլ է տալիս եզրակացնել, թե մարդն իրականում ինչպիսի՛ն է: Արյան խումբն ամբողջ կյանքում չի փոխվում: Ըստ ֆրանսիացի հոգեբան ժան Բատիստ Դելակուրի, արյան նույն խումբն ունեցող մարդիկ նման խառնվածք ունեն:

295. Գտի՛ր, բառաշարքերից յուրաքանչյուրն ինչ ընդհանրության հիման վրա է կազմված:

ա)Քննադատ, արտատեր, եռագույն, ղեկավար, ծովակալ, մանրախնդիր, աստղաշող, թուլակամ, երկփեղկ:

բ) Ջրաղացքար, դյուցազնակերպ, կիսաշրջանագիծ, կիսաշրջազգեստ, հեռագրատուն, հեռագրավար:

296. Դարձվածքները տեքստի ոճին համար հոմանիշ բառերով փոխարինի՛ր:

Մեր դարաշրջանից 481 տարի առաջ Պարսկաստանի տիրակալ Քսերքսեսը *կռվի էր դուրս եկել* հունական պետությունների միության դեմ: Ավանդությունն ասում է, թե դա *մտքին դրեց* միայն նրա համար, որ ուզում էր թզի *համը տեսնել*, իսկ աթենական օրենքներն այդ համեղ պտուղների արտահանության *դեմն առել էին*:

Փոքրասիական ժողովուրդների դիմադրությունն *արյան մեջ խեղդելով*, քաղաքները գրավելով, *կրակի ճարակ դարձնելով* ու *հողին հավասարեցնելով՝* պարսիկները հասան Եվրոպան Ասիայից բաժանող բնական արգելագծին՝ Հելլեսպոնտոսի նեղուցին: Նեղուցն անցնելու համար Քսերքսեսը կամուրջ կառուցել տվեց: Բայց երբ կամուրջն արդեն պատրաստ էր, սոսկալի փոթորիկ պայթեց, որն այն խորտակեց ու ցրիվ տվեց: *Արյունը* Քսերքեսի *գլխին խփեց*, հրամայեց նեղուցի *հախից գալ* խարազանի երեք հարյուր հարվածով և ջրի մեջ ստրկության շղթաներ գցել: Ջրի *ջարդը տվողներին* հրամայված էր արտասանել հետևյալ խոսքերը. «Չարաղետ ջուր, քո տիրակալն այս պատիժը նշանակեց, քանի որ դու անազնիվ վարվեցիր, իսկ նա քեզ ոչ մի վատ բան չէր արել»: Եվ մինչ պատժում էին ծովին, թագավորը հրամայեց *թոցնել գլուխներն այն մարդկանց*, որոնց հրամայել էր կամուրջ կառուցել: Ծովի ու մարդկանց *գլուխը մտավ*, որ ավելի լավ է պարսից տիրակալի ճանապարհին դեմ չկանգնեն:

Հետո շինարարները *ձեռնամուխ եղան* մի ուրիշ, ավելի ամուր կամրջի շինարարությանը: Երբ դա պատրաստ էր, ու Քսերքսեսի առջև արդեն իսկապես բաց էր Եվրոպա տանող ճանապարհը, տիրակալը տատանվում էր՝ անցնի՞, թե՞ չանցնի: Ամենայն հավանականությամբ վախենում էր ծովի վրեժխնդրությունից: Փոխանակ *տեղն ու տեղը ճամփա ընկնելու՝* նա հրամայեց քրմերին ամեն ինչ անել նեղուցի բարեհաճությունն ու ողորմածությունը նվաճելու համար, իսկ ինքն իր սուսերն ու ոսկե անոթները ծովին *մատաղ արեց*: Զոհաբերությունից հետո սկսվեց անցումը, որը հինգ օր ու գիշեր տևեց: Քսերքսեսը միայն վերջում *սիրտ արեց* ու անցավ:

297. Նախադասություններով ցո՛ւյց տուր թե ի՛նչ են նշանակում հետևյալ բառերը.

Անցավ, կարող, գրի, բարի:

298. Տեքստը համառոտ փոխադրի՛ր:

Մի անգամ բախտ ունեցա լսելու, թե ինչպե՛ս էին աչքերը գանգատվում:

-Իրո՛ք, շատ դժբախտ ենք,- ասացին նրանք:- Արդեն մի քանի հարյուրամյակ է, ինչ շատ դժվար ենք ապրում: Մենք միշտ սովոր ենք տեսնելու, որ Արևն է պտտվում Երկրի շուրջը: Բայց հանկարծ հայտնվեց այդ Կոպեռնիկոսը, հայտնվեց այդ Գալիլեյը, և նրանք ապացուցեցին, որ

սխալվում ենք, որովհետև Երկի՛րն է պտտվում Արևի շուրջը: Նայում ենք ջրին ու տեսնում, որ ջուրը մաքուր ու զուլալ է: Բայց հայտնվեց հոլանդացի Լևենհուկը, հայտնագործեց մանրադիտակն ու հետն էլ անամոթաբար հայտարարեց, որ ջրի կաթիլի մեջ ավելի շատ կենդանի արարած կա, քան գազանանոցում: Գիշերը նայում ենք երկնքին, ա՛յ, այնտեղ, վերև: Երկինքը սև է, կասկած լինել չի կարող, ախր լա՛վ ենք տեսնում: Բայց պարզվում է, որ այստեղ էլ ենք սխալվել: Մեզ մոտեցնում են աստղադիտակին, ու վերևում միլիոնավոր աստղեր ենք տեսնում: Այնպես որ, հիմա անվիճելի է ու ապացուցված, պիտի անցնենք թոշակի: Լա՛վ: Բայց էլ ո՞վ կնայի մանրադիտակներով ու հեռադիտակներով:

299.Նախադասություններն այնպե՛ս փոխիր, որ ընդգծված ը-ի փոխարեն ն մասնիկը (հոդը) գրես:

Օրինակ՝ 1.Այժմ Հալիկառնասը Թուրքիայի Բոդրում քաղաքն է: - Հալիկառնասն այժմ Թուրքիայի Բոդրում քաղաքն է: 2. Եվրոպական լեզուներում դամբարանին տրվող «մավզոլեյ» անունը Մավսոլոսի անունից է առաջացել: - Եվրոպական լեզուներում դամբարանին տրվող «մավզոլեյ» անունն առաջացել է Մավսոլոսի անունից:Կամ Մավսոլոսի անունից եվրոպական լեզուներում դամբարանին տրվող «մավզոլեյ» անունն է առաջացել:

Աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը Փոքր Ասիայի Հալիկառնաս քաղաքում էր գտնվում: Մեր թվականությունից առաջ չորրորդ դարում Արտեմիսիա թագուհին՝ Մավսոլոս թագավորի կինը կառուցել էր տվել թագավոր ամուսնու դամբարանը: Դամբարանը եռահարկ շինություն էր: Սպիտակ մարմարե բարձրաքանդակները գոտու նման պատել էին առաջին հարկի պատերը: Երկրորդ հարկը մարմարե սլացիկ սյունաշար էր: Երրորդ հարկը բրգաձև տանիքն էր՝ նույնպես մարմարից: Կառույցը պսակում էր քառանժույգ մարտակառքը, որը վարում էին Արտեմիսիան և Մավսոլոսը: Այժմ այդ արձանները և դամբարանի այլ զարդեր Լոնդոնի Բրիտանական թանգարանում են պահվում:

300.Ա շարքի նախածանցներից յուրաքանչյուրը բոլոր հնարավոր ձևերով բաղադրի՛ր (բացադրյան բառեր կազմի՛ր) Բ շարքի բառերի հետ:

Ա. Անդր, հակ, համ, ենթ, նախ, ներ, պար, վեր, տար, փոխ:

Բ. Կովկաս, (հ)արձակ, տարած, դարձ, դնել (դրել), կշիռ, մուծել, փակել, կանգնել, աշխարհ(իկ):

301. Տեքստը պատմիր՝

ա) օդաչուի անունից,

բ) որպես լրագրող,

գ) որպես մի մարդ, որ չի հավատում և չի ուզում, որ մյուսները հավատան:

Երբ Բելգիայի երկնքում «թռչող ափսե» հայտնվեց, ռազմաօդային ուժերի գլխավոր շտաբից երկու կործանիչ ինքնաթիռ ուղարկեցին, որ նրան «որսան»: ՉԹՕ-ն ինքնաթիռի նման չէր. մի քանի վայրկյանում նա արագությունը ժամում երկու հարյուր ութսունից հազար ութ հարյուր կիլոմետրի հասցրեց: Մոտավորապես քառասունհինգ րոպե ինքնաթիռները հետապնդեցին ՉԹՕ-ին, հետո նա անհետացավ: Օդաչուներն իրենք ՉԹՕ-ն չէին տեսել, բայց նրա ներկայությունը հաստատել էին ռադիոձայնորսիչները: Հետաքրքիր է, որ ամեն անգամ, երբ հաջողվում էր ՉԹՕ-ն նշմարել, վերջինս անմիջապես թռիչքի հետագիծն ու արագությունը փոխում էր:

302.Տրված նախադասությունները ձևի և իմաստի ի՞նչ տարբերություններ ունեն:

Ֆրանսիացի գիտնականները պարզեցին, որ երկրագնդի բնակչությունը խոսում է երկու հազար յոթ հարյուր ինՆսունվեց լեզվով (չհաշված յոթ-ութ հազար բարբառը):

Ֆրանսիացի գիտնականները պարզել են, որ երկրագնդի բնակչությունը խոսում էր երկու հազար յոթ հարյուր ինՆսունվեց լեզվով (չհաշված յոթ-ութ հազար բարբառը):

Ֆրանսիացի գիտնականները պարզեցին, որ երկրագնդի բնակչությունը խոսում էր երկու հազար յոթ հարյուր ինՆսունվեց լեզվով (չհաշված յոթ-ութ հազար բարբառը):

Ֆրանսիացի գիտնականները կպարզեն, որ երկրագնդի բնակչությունը խոսել է երկու հազար յոթ հարյուր ինՆսունվեց լեզվով (չհաշված յոթ-ութ հազար բարբառը):

Ֆրանսիացի գիտնականները կպարզեն, որ երկրագնդի բնակչությունը խոսում է երկու հազար յոթ հարյուր ինՆսունվեց լեզվով (չհաշված յոթ-ութ հազար բարբառը):

Ֆրանսիացի գիտնականները կպարզեն, որ երկրագնդի բնակչությունը խոսելու է երկու հազար յոթ հարյուր ինՆսունվեց լեզվով (չհաշված յոթ-ութ հազար բարբառը):

Ֆրանսիացի գիտնականները պարզել են, որ երկրագնդի բնակչությունը խոսելու է երկու հազար յոթ հարյուր ինՆսունվեց լեզվով (չհաշված յոթ-ութ հազար բարբառը):

303. Ձեր դասարանի մասին պատմի՛ր և պատմությունդ վերնագրի՛ր: Այնպես արա՛, որ տրված հարցերի պատասխաններն էլ պատմությանդ մեջ լինեն.

ա) ինչպիսի՞ մարդկանց խումբ է,
բ) ինչո՞վ եք իրար նման,
գ) ինչո՞վ եք տարբերվում,
դ) ի՞նչն է ձեզ կապում:

304.Տրված բառերով ու արտահայտություններով փոխարինի՛ր տեքստի համապատասխան հոմանիշները: Ստացված և տրված տեքստերը համեմատի՛ր. ո՞րն է՝

ա) ավելի խոսակցական,

բ) ավելի վերամբարձ:

Լիբիական մեռյալ անապատի տաք ավազուտներում, տասնյակ կիլոմետրեր զարմանալի կանոնավոր սարեր են երևում: Բուրգերն են՝ եգիպտական փարավոնների դամբարանները: Վիթխարի ու վեհասքանչ այդ բուրգերը կարծես անապատի ավազներից են հառնում ու ճնշում մարդուն իրենց արտասովոր չափերով ու խիստ ուրվագծերով: Բուրգի ստորոտում կանգնած դժվար է պատկերացնել, որ այդ հսկայական քարե սարերը մարդու ձեռքով են կերտված: Ժամանակին դրանք քարերի առանձին մեծ բեկորներով են կառուցվել: ժամանակակից երեխաները այդպես խորանարդիկներով են բուրգեր կառուցում:

Թագավորների, քարաբեկորով, ստվերագծերով, ավազների մեջ, մտածել, ճզմում են, ելնում են, ձգվում են, ահռելի, մեծասքանչ, ասես թե, անսովոր, ներքև, ձեռակերտ, մեր օրերում, այն ժամանակ:

305.Ըստ տրված հետևության՝ տեսած, լսած կամ կարդացած մի պատմություն պատմի՛ր:

Ամեն ինչ իր ժամանակին է գեղեցիկ:

306. Նախադասությունն այնպե՛ս փոխիր, որ ընդգծված բառը փակագծում տրված ձևով լինի (նախադասության մյուս գոյականների ձևերը կարող ես փոխել):

Վաղուց ի վեր ***դելֆինների*** մասին ***հեքիաթների*** նման զարմանահրաշ պատմություններ են պատմում: (դելֆիններից, հեքիաթներ)

Հունական ***լեգենդը*** մի ***դելֆինի*** մասին է պատմում, որն ամեն օր մի տղայի ***ծովածոցով*** տանում էր դպրոց ու հետ բերում: (լեգենդի, դելֆին, ծովածոցը(ն))

Նոր Զելանդիայում, Ծովակալության ծովածոցում, Պիլորուս Ջեկ անունով մի դելֆին երեսուն տարի շարունակ ուղեկցում էր նավերին, և նրա ***պաշտպանության համար*** հատուկ ***օրենք*** էր մշակվել: (Նոր Զելանդիայի, անունը, պաշտպանությունը, օրենքով):

307. ***Ամենա*** և ***ագույն*** ածանցներով կազմված ածականների իմաստները համեմատի՛ր, ո՞ր ածանցն է ***չափազանց շատի*** իմաստ հաղորդում. ո՞րը՝ ***ամենաշատի*** (նրանց հետ գործածված գոյականի ձևին էլ ուշադրությո՛ւն դարձրու):

Թանգարանում հնագույն գործիքներ են պահվում: Այդ դամբարանից գիտությանը հայտնի ամենահին գործիքները գտան:

Դժվարագույն խնդիր են տվել ինձ: Գրքի ամենադժվար խնդիրը սա է:

Փոքրագույն ձկներ են լողում իմ ակվարիումում: Իմ ակվարիումի ամենափոքր ձուկն է սա:

308. ***Տուն*** բազմիմաստ բառը նախադասությունների մեջ գործածի՛ր քեզ հայտնի բոլոր իմաստներով:

309. Ընդգծված դերանունները փոխարինի՛ր համապատասխան հոդերով (եթե պետք է, կարող ես նախադասությունից բառ հանել):

Քո ընկերը մենակ քայլում էր փոշեծածկ ճանապարհով:
Իմ որսն իր ոտքով եկավ:
Մենք, այսինքն՝ ծովափի բնակիչները, ծովից ենք հանում մեր սնունդն ու հարստությունը:
Դու ՝ մեր ամենաուժեղ մարզիկը, հաղթանակով պիտի գաս:
Ես ծեր որսորդ եմ ու կյանքում շատ բան եմ տեսել:
Դուք՝ մեր շնորհալի տղաները, ***ձե***ր խոսքը դեռ չեք ասել:
Քո սիրտը քա՛ր է, քար:
Ձեր ձեռքն ընկնողին պրծում չկա:

310. Ընդգծված բառերը փոխիր՝ առանց նախադասության միտքը փոխելու:
Թանգարանում սրահներից ***յուրաքանչյուրում*** ցուցադրվող *վաթսուն* առարկա կա:
Դպրոցի *բոլոր* դասարաններում ***տասնհինգական*** սեղան է դրված:
Ամեն մի երամում *տասնհինգ* կռունկ է:
Այդտեղ *յուրաքանչյուր* գետ ***երեք*** վտակ ունի:

311.Բառակապակցություններ կազմի՛ր՝ հարցում արտահայտող բառերը գոյականներով փոխարինելով:

Աշխատանք, խաղ, ուսում, հանգիստ, գործել, խաղալ, սովորել, հանգստանալ:

Ինչի՞ հնարավորություն ունենալ:
Ինչի՞ հնարավորություն ընձեռել (տալ):
Ինչի՞ նպատակ ունենալ:

312. Ընդգծված բառերն ու արտահայտությունները հոմանիշնիրով փոխարինիր այնպե՛ս, որ տեքստի ոճն ավելի վերամբարձ դառնա (ըստ անհրաժեշտության՝կարող ես բառեր հանել, բառեր, բառաձևեր կամ բառերի դասավորություն փոխել):

Հին Բաբելոնի հարստությունն ու պերճությունը դեպի իրենց **էին ձգում** ճամփորդներին: Նրանք գալիս էին իրենց աչքերով տեսնելու քաղաքի **զարմանալի** պարիսպները, որոնց վրայով մի քանի կառք կարող էր կողք-կողքի ընթանալ:
Սակայն ճամփորդներին ամենից ավելի **գրավում էր** Նաբուգոդոնոսոր թագավորի **հիասքանչ** պալատը: Պալատի կողքին **բարձրանում էր ապշեցուցիչ** մի **կառույց** կախովի այգիները: Թագավորը դրանք **ստեղծել էր** իր սիրելի կնոջ համար: Թագուհին մեդացի էր՝ իր հայրենիքի **կանաչ սարերին** ու անտառներին սովոր: **Շոգ** ու անտառազուրկ Բաբելոնում կարոտում էր Մեդիայի լեռնային անտառների **հովին** ու **ստվերին**: Կնոջ տխրությունը **պակասեցնելու** համար Նաբուգոդոնոսորը որոշեց նրան կարծես լեռներից բերված ամբողջ մի օազիս **նվիրել**: Եվ կամարակապ չորս հարկերից բաղկացած լայն աշտարակի վրա ստեղծվեցին **հայտնի** կախովի պարտեզները: Հասարակ **մարդկանց** համար պարտեզներն անմատչելի էին. չէ՞որ դրանք **թագավորական** պալատի բարձր պարիսպների ետևում էին, իսկ մուտքը պահպանում էր

ահավոր պահակախումբը: Այդպիսի պարտեզներ ամբողջ աշխարհում ոչ մի տեղ չեն եղել, դրանք **շատ լավ** էին մտածված և հեքիաթային գեղեցկություն ունեին. իզուր չէ, որ **մտցվել էին** աշխարհի յոթ հրաշալիքների շարքը:

313.Նախադասություններն ըստ օրինակի փոխի՛ր (ներգործակա՛ն դարձրու):

Օրինակ՝ Նա պարտվել էր մի հզոր թշնամուց: -
Մի հզոր թշնամի էր պարտության մատնել նրան:

Սիրտը գերվեց աղջկա մի ժպիտից:

Այս ծառի տակ ինչ-որ մեկի կողմից գանձ է թաղվել:

Քարը մաշվել, հարթվել էր անձրևից ու քամուց:

Արտերը խանձվել էին բարկ արևից:

Քարտը լրացվում է միայն չափահաս քաղաքացիների կողմից:

Նա ազատազրկման է դատապարտվել ու տուգանվել իտալական դատարանի կողմից:

Ութ տարի տղամարդ համարվեց ընկերների կողմից:

Դյութվել էր ալիքների ու քամու երգով:

Աղջիկը շրջապատված էր հետաքրքրասերների մեծ խմբով:

Ընկերս համերգի է հրավիրված:

Վերջապես խոսքը տրվում է օրվա հերոսին:

314. Շարքի բոլոր բառերը, բացի մեկից, նույն ձևով են կազմված: Գտի՛ր օրինաչափությանը չենթարկվող բառը.

ա) Փառապանծ, հենակմախք, հեռախոս, ռազմակոչ, կիսաշրջանաձև:

բ) Մեղմաժպիտ, կարմրազգեստ, կարմրախայտ, խավարասեր, իսկույնևեթ:

գ) Մանկություն, գրավիչ, հերարձակ, գրական, քննություն:

315. Հարցում արտահայտող բառերը փոխարինի՛ր համապատասխան բառակապակցություններով:

Հեռագիրը՝ **ո՞ր**, բերել էին գիշերը:

Ծաղիկը՝ **ինչպիսի՞**, դաշտում կարծես միակն էր:

Աշունը շուկան լցրել է մրգերով՝ **ինչպիսի՞**:

Նրա հիասթափությունը մատնում էին աչքերը՝ **ինչպիսի՞**:

Մի ժպիտ՝ **ինչպիսի՞**, թառել էր դեմքին:

316. Հարցում արտահայտող բառերը տրված գոյականներով փոխարինելով՝ բառկապակցություններ կազմի՛ր։

Դիմադրել ինչի՞ն:

Խուսափել ինչի՞ց:

Միտք, ճնշում, ցավ, հեռանալ, առաջանալ, մոռանալ *(կարող ես շարունակել)*:

317. Տրված պարզ նախադասությունները դարձրո՛ւ բարդ՝ ավելացնելով փակագծում տրված հարցին պատասխանող նախադասություն (որպեսզի ավելացրածդ նախադասությունը տրվածի հետ կապվի, կարող ես անհրաժեշտ բառ ավելացնել)։

Ա՛յ աղվեսներ, ձեռք քաշեք ձեր պոչերից։ (ինչո՞ւ)
Ութ տարի մնացի այդ երկրում։ (ինչո՞ւ)
Բոբն արագ վազեց հանդերձանքի կույտի մոտ։ (ինչո՞ւ)
Նա ուժ հավաքեց։ (ինչի՞ համար)

318. Նախադասությունները հնարավոր ձևերով կետադրի՛ր այնպես, որ իմաստները տարբեր լինեն։

Հայրն ու մայրը ողջունեցին մեզ համբուրեցին շնորհավորեցին իրար:

Հայաստանը ուր որոշել էր գնալ մանուկ հասակից չէր տեսել:

Նրանց ոտների տակ մի պահ մթագնում էին ձորերը անտառները սևանում էին ամպերի արանքում բեկբեկված շողերի փայլի մեջ:

Խաղաղ գիշերվա մեջ թույլ լույս արձակելով երկու աստղ էր պլպլում Ծիծեռնավանքի ծուռ խաչի վրա:

Ծովափին կանգնած աղջիկը հայացքը հառել էր հեռու հորիզոնին:

319. Ընտանիքի վերաբերյալ հարցեր գրի՛ր, տարբեր մարդկանց հետ հարցազրույց վարի՛ր ու գրի առ (քո կարծիքը փորձիր տվածդ հարցերով արտահայտել)։

320.Փակագծերում տրված բայերը պահանջված ձևով գրի՛ր և Ա և Բ տեքստերում բայի ժամանակները համեմատի՛ր։

Ա. Հնդկաստանում Հունդեր անունով մի գյուղ կա, որտեղ ծխելը ոչ միայն արգելվում է, այլև (պատժվել)։ Գյուղացիներից ով էլ (լինել)ծ եթե ծխախոտը կամ ծխամորճը բերանին (բռնվել),

(տուտգանվել)։ Սակայն վերջին տարիներին Հանդեր գյուղում միայն մի դեպք (լինել), որն (արժանանալ) պատժի։ Բնակիչներն արդեն (վարժվել) այն մաքին, որ ծխողներն իրենց գյուղում տեղ (չունենալ)։ Հնաբնակները պատմում են, որ ծխելու սովորություն չունենալը շատ վաղուց (սկիզբ առնել) և սերնդից սերունդ (փոխանցվել)։ Այժմ ոչ ոք (չհիշել), թե ե՛րբ և ի՛նչ պատճառով (առաջանալ) այդ լավ սովորույթը։

Բ. Հնդկաստանում Հունդեր անունով մի գյուղ կար, որտեղ ծխելը ոչ միայն արգելվում էր այլ (պատժվում)։ Գյուղացիներից ո՛վ էլ (լինել), եթե ծխախոտը կամ ծխամորճը բերանին (բռնվել), (տուգանվել)։ Սակայն վերջին տարիներին Հունդեր գյուղում միայն մի դեպք (լինել), որն (արժանանալ) պատժի։ Բնակիչներն արդեն (վարժվել) այն մտքին, որ ծխողներն իրենց գյուղում տեղ (չունենալ)։ Հնաբնակները պատմում են, որ ծխելու սովորություն չունենալը շատ վաղուց (սկիզբ առնել) և սերնդից սերունդ (փոխանցվել)։ Ոչ ոք (չհիշել), թե ե՛րբ ե ի՛նչ պատճառով (առաջանալ) այդ լավ սովորույթը։

321.Ըստ տրված տեղեկության, փոքրիկ պատմվածք գրի՛ր (այդ մի քանի բոպեն կամ ժամը մանրամասն նկարագրի՛ր՝ օվկիանոս, դեպի Հնդկաստան լողացող նավեր, երկարատև ուղևորության համար ուրա՞խ, թե՞ դրանից հոգնած նավաստիներ, նավապետ, թռչաննուններ և այլն, նրանց զբույցը հորինի՛ր)։

Կոլումբոսն ինչպե՞ս է Ամերիկան հայտնագործել։ Պատմաբանները դրա հետ կապված հետաքրքիր փաստ են հայտնաբերել։ Պարզվում է, որ երբ իսպանական նավերի քարավանն անցնում էր օվկիանոսով, մայրամոտին դեպի հարավ-արևելք թռչող թութակների երամ երևաց։ Փորձված նավագնացը հասկացավ, որ թռչունները գիշերելու են գնում, ուրեմն ցամաքը մոտ է։ Նա փոխեց նավի ուղղությունը և հասավ Ամերիկա։

322.Սխալ կամ ոչ հարմար գործածված բառերը (ամենաքիչը՝ տասը բառ) գտիր և ճշտի՛ր։

Բարենցի ծովի Կիլդին կղզում մի շատ հետաքրքիր լիճ կա։ Նրա ջուրը հինգ շերտ ունի։ Առաջին շերտի՝ հատակի տիղմի վրայի ջուրն այնպիսին է, որ հողին է հավասարեցնում ամեն մի կենդանի բան։ Դրա համար էլ ջրի այդ շերտում ոչ մի առողջ էակ չկա։

Երկրորդ շերտը ծիրանագույն մանրէներով է ցանկապատած։ Այդ մանրէներն այնքան բազում են այդտեղ, որ չեն հրաժարվում,որ ցածի թունավոր գազը ոտքի ելնի, հասնի երրորդ «հարկ»։ Ջրի երրորդ շերտը բնակեցվածէ ծովային ձկներով, ոզնիներով ու այլ կենդանիներով, որոնք գոյություն ունեն աղի ջրերում։ Չորրորդ «հարկում» ջուրը շատ է աղի ու կյանքի համար պիտանի չէ։ Իսկ վերին, հինգերորդ շերտում ջրհորի քաղցրահամ ջուր է։ Դա էլ քաղցր ջրերին ուրույն կենդանիների արքայությունն է։ Ամենահետաքրքիրն այն է, որ այդ տարօրինակ լճի հինգ շերտերը երբեք իրար մեջ չեն ընկնում։

323. Յուրաքանչյուր բարդ նախադասություն պազրեցրո՛ւ՝ նրա մեջ եղած նախադասություններից մկեը հանելով (Ուշադի՛ր եղիր, որ տեքստը պահպանվի)։

Հենրի Ռաուլինսոնը Մեծ Բրիտանիայի ե Հնդկաստանի միջև երթևեկող Անգլիական մի Նավում

նավաստի էր, որն ուշադիր ականջ էր դնում տախտակամածին նստած ուղևորների խոսակցությանը: Նրանք ամեն տեսակ տարօրինակ հրաշքներ էին պատմում արևելքի այն երկրների մասին, ուր գնում էին որպես վաճառականներ կամ պաշտոնյաներ: Այդ պատմություններն այնքան տպավորիչ էին, որ Նա սկսեց երազել հեռավոր ճամփորդությունների ու արկածների մասին: Ծովային ծառայությունը հանկարծ դժնդակ գերություն թվաց, և նա որոշեց այդ գերությունից դուրս պրծնել լայնարձակ աշխարհ:

324.Հարցում արտահայող բառերի փոխարեն համապատասխան բառ կամ բառակապակցություն (բացայատիչ) գրի՛ր:

Միքայելը՝ **ո՞վ,** երեկ մեր տանն էր:

Տանտիրուհուց՝ **ումի՞ց**, հեռագիր էր ստացել:

Տղան անհամբեր սպասում էր Սևուկի՝ **ինչի՞** երևալուն:

Մայրը որդուց՝ **ումի՞ց**, արդեն երկար ժամանակ լուր չուներ:

Քուռկիկ Ջալալին արագ մոտեցավ տիրոջը՝ **ո՞ւմ**:

Հրազդանը՝ **ի՞նչը**, Երևանով է անցնում:

Առավոտյան՝ **ե՞րբ,** իմացանք քնցող լուրը:

Պատոմթուոյնն իմացանք միայն հաջորդ օրը՝ **ե՞րբ**:

Այդ խորամանկը թաքնվել էր իմ սենյակում՝ **Որտե՞ղ:**

325. Գրի՛ր փոքրիկ պատմություն,որից այսպիսի հետևություն արվի՝

Լավություն արա՛, գցի՛ր ջուրը, մի օր դուրս կգա:

326. Տրված պարզ նախադասությունները բարդ դարձրո՛ւ՝ ավելացնելով փակագծում տրված հարցին պատասխանող նախադասություն:

Վագրը ծառի ետևից մռնչաց: (ի՞նչ պատճառով)

Նավակը մյուս ափին էր կանգնած: (ի՞նչ պատճառով)

Ինքն էլ իր ասածին չի հավատում: (ինչո՞ւ)

Մինչև կյանքի վերջը ծիծաղելու է վրադ: (ինչո՞ւ)

327. Նայի՛ր օրինակին և ընդգծված բառակապակցությունը փոխարինի՛ր *որպես* ... կամ իբրև... կաղապարներով: Կետադրությանն ուշադրություն դարձրո՛ւ:

Օրինակ՝ Կոշիկի դատարկ տուփի նման տունը ինչ-որ մեկի կողմից մոռացվել էր այդ հեռավոր բլրի վրա:

1. Որպես կոշիկի դատարկ տուփ՝ տունն ինչ-որ մեկի կողմից մոռացվել էր այդ հեռավոր բլրի վրա:

2. Տունը՝ որպես կոշիկի դատարկ տուփ, ինչ-որ մեկի կողմից մոռացվել էր այդ հեռավոր բլրի վրա:

Նավի հսկա թրի նմանվող սուր քթամասը ճեղքում էր ջուրը:

Ապահով թաքստոցի նմանվող այդ տակառը կատվին շատ էր փրկել:

Մութ վարագույրի նմանվող անտառը թաքցնում էր այդ հսկա կենդանիների բախումը, բայց ձայները լսվում էին:

Սպիտակ բրդի եթերային ծվենների նման ամպերը սահում էին մեր գլխի վրայով:

Տարօրինակ արձանների նմանվող ժայռերը կանգնել էին

քամուն հանդիման:

Այդ վայրերի միակ տիրակալի նման քամին շեփորում ու գոռգոռում էր ժայռերի ծերպերում:

328. Որտեղ անհրաժեշտ է՝ *ը* գրի՛ր:

Անակ.նկալ, ան.մբռնելի, օր.ստօրե, ակ.նթարթ, ան.նդմեջ, լուսն.կա, մթ.նկա, համ.նդհանուր, մերթ.նդմերթ, ան.նթեռնելի,ակ.նհայտ, ան.նդհատ, անհյուր.նկալ, սր.նթաց:

329. *Դառնալ* բազմիմաստ բառը նախադասությունների մեջ գործածի՛ր քեզ հայտնի բոլոր իմաստներով:

330.Փակագծերում տրված բայերը պահանջված ձևով գրի՛ր, Ա և Բ տեքստերում բայի ժամանակները համեմատի՛ր:

Ա. Գերմանիայի դպրոցներում կատարված ուսումնասիրություններից պարզվեց, որ քաղաքի երեխաները գյուղական կյանքի մասին ոչ մի պատկերացում (չունենալ): Օրինակ, նրանցից շատերը (կարծել), որ կաթը ֆաբրիկայում (պատրաստվել):

Կրթության նախարարությունը դրությունը շտկելու նպատակով պահանջել է, որ բոլոր քաղաքների կենդանաբանական այգիներում կովեր (ցուցադրվել) և օրվա մեջ երեք անգամ (կազմակերպվել) նրանց կիթը:

Բ. Գերմանիայի դպրոցներում կատարված ուսումնասիրություններից պարզվել էր, որ քաղաքի երեխաները գյուղական կյանքի մասին ոչ մի պատկերացում (չունենալ)։ Օրինակ, նրանցից շատերը (կարծել), որ կաթը ֆաբրիկայում (պատրաստվել)։

Կրթության նախարարությունը դրությունը շտկելու նպատակով պահանջել էր, որ բոլոր քաղաքների կենդանաբանական այգիներում կովեր (ցուցադրվել) և օրվա մեջ երեք անգամ (կազմակերպվել) նրանց կիթը։

331. Նախադասություններով վո՛ւյց տուր, թե ի՛նչ կարող են նշանակել այս բառերը։

Կարգին,կուրանա,աղոտ,դուրս եկավ։

332. Տրված բառերի բոլոր հոմանիշները գրի՛ր՝ ըստ իմաստների սաստկության։

Օրինակ՝ *կռվել - վիճել, գժտվել, ընդհարվել, իրար ուտել, պատերազմել։*

Քամի, ձայն, վախ, գեղեցիկ, տգեղ, շատ, ցանկություն, ծիծաղել։

333.Փակագծում նախադասություն գրի՛ր, որ՝

ա) Լրացուցիչ տեղեկություն հայտնի

բ) Վերաբերմունք արտահայտի։

«Շունն ու կատուն» (. . . . .) Հ. Թումանյանն է գրել։

Ընկերը (. . . . .) դռան ճեղքից երբեմն ներս էր մտցնում գլուխը։

Ժպտալով հեռացավ պատահանից (. . . . .) ու նորից ձեռքն առավ գիրքը։

Պարտավոր ես արքայադստերը զվարճացնել (.....), որ

գլուխդ չթռչի, և վերջ։

334.Սխալները գտի՛ր և ճշտի՛ր։

Օրվա մեջ քսան սիգարետներ ծխողն ամեն տարի ավելի քան հարյուր

տասնյոթ հազար քառակուսի սանտիմետր թուղթ ծուխ ու մոխիր է դարձնում։

Այդքան թուղթը բավական է երեք հարյուր էջեր ունեցող մի գիրք հրատարակելու համար։

Մի անգամ տասնվեց տղա բաժանվեցին երկու խմբի։

Իրար ետևից յութանասունհինգ բառեր թելադրվեց։

Այդ բժիշկի երեսունհինգ վիրահատությունն էլ հաջող են անցել։

Հիսունչորս հոյակապ նկարներով այդ գիրքը շատ հին էր։

Հավաքվածներից ամեն մեկը երեքական լեզու գիտեր։

Երգիչներից ամեն մեկը հինգական երգ կատարեց:

Դրածդ ակնոցները քեզ սազում են:

335. Կետերի փոխարեն մի այնպիսի արմատ գրի՛ր, որ երկու բառ կազմի և՛ նախածանցի հետ, և՛ վերջածանցի:

Ապ ... իք, ընդ , որդ, ընդ ... ալին, ստոր ... իչ, հակա ... իկ, մերա ... ույք, դժ . . . եղ, արտ ... ային, տար ... ելի, համ ... ել:

336. բառակապակցություններ կազմի՛ր՝ հարցում արտահայտող բառերը գոյականներով փոխարինելով:

Պատրաստ լինել ինչի՞(ն):
Պատրաստվել ինչի՞(ն):

Կոիվ, հաշտություն, ձեռք մեկնել, փոխել, քննարկել, դիմագրավել*(կարող ես շարունակել)***:**

337. Տեքստը գրավոր փոխադրի՛ր՝ ուրիշի ուղղակի խոսքերն անուղղակի դարձնելով:
Երկրորդ մոլորակի վրա ապրում էր փառասերը:

-Օ՛, ահա և երկրպագու հայտնվեց,- հեռվից Փոքրիկ իշխանին նկատելով, բացականչեց նա:

Չէ՞ որ սնապարծ մարդիկ միշտ մտածում են. «Հավանաբար բոլորն էլ ինձնով հիացած են»:

-Բարի օր,- ասաց Փոքրիկ իշխանը:- Ի՛նչ հետաքրքիր գլխարկ ունեք:

-Սա նրա համար է, որ գլուխ տամ,- բացատրեց փառասերը,- գլուխ տամ, երբ ինձ ողջունելու լինեն: Դժբախտաբար, այստեղ ոչ ոք չի գալիս:

-Ահա թե ինչ,- շշնջաց Փոքրիկ իշխանը: Բայց նա ոչինչ չհասկացավ:

-Հապա մի ծափ տուր,- ասաց փառասերը:

Փոքրիկ իշխանը ծափ տվեց: Փառասերը գլխարկը հանեց և սկսեց համեստորեն գլուխ տալ:

«Այստեղ ավելի ուրախ է, քան ծեր թագավորի մոտ»,- մտածեց Փոքրիկ իշխանը: Եվ նա նորից սկսեց ծափ տալ, իսկ փառասերը նորից, գլխարկը հանելով, խոնարհվեց:

Այսպես մի հինգ րոպե նույն բանը կրկնվեց, և Փոքրիկ իշխանը ձանձրացավ:

-Իսկ ի՞նչ պետք է անել, որ գլխարկն ընկնի,- հարցրեց նա:

Բայց փառասերը չլսեց: Սնապարծ մարդիկ, բացի գովեստից, ամեն ինչի նկատմամբ խուլ են:

-Դու իսկապե՞ս իմ խանդավառ երկրպագուն ես,- Փոքրիկ իշխանին հարցրեց նա:

-Իսկ այդ ինչպե՞ս են երկրպագում:

-Երկրպագել նշանակում է ընդունել, որ այս մոլորակի վրա ես ամենագեղեցիկն եմ, ամենից շքեղը, հարուստն ու խելոքը:

-Բայց չէ՞ որ քո մոլորակի վրա ուրիշ մարդ չկա:

-Դե ոչինչ, ինձ հաճույք պատճառելու համար, միևնույն է, հիացի՛ր ինձանով:

-Ես հիանում եմ,- ուսերը թոթվելով ասաց Փոքրիկ իշխանը,- բայց մի՞թե դա քեզ ուրախություն է պատճառում:

Եվ նա փառասերի մոտից փախավ:

«Իսկապես որ մեծահասակները շատ տարօրինակ մարդիկ են»,- պարզամտորեն մտածեց նա ու ճանապարհ ընկավ:

338. Տրված պարզ նախադասությունները բարդացրո՛ւ՝ ավելացնելով փակագծում տրված հարցին պատասխանող նախադասություն:

Ջրհորից սառը ջուր կհանենք: (ո՞ր դեպքում)
Կարո՞ղ եմ փրկել այս փոքրիկին: (ո՞ր դեպքում կամ ի՞նչ պայմանով)
Մարդկանց ու գազանիկների մեր բանակին հյուրընկալելն իրոք հերոսություն կարելի էր համարել: (ի՞նչ պայմանով, ո՞ր դեպքում)
Կետորսական նավերի մի խումբ վերջերս ժամանեց: (ինչո՞ւ, ինչի՞ համար)

339. Փակագծերում տրված բառը (բայը) պահանջված ձևով գրի՛ր, հետո Ա և Բ տեքստերում գրածդ բայաձևերը համեմատի՛ր:

Ա. Խոտերն ու ծաղիկներն ինչպե՞ս (արտահայտել) զգացմունքները, եթե շարժվել կարողանան: Եթե բուսաբանները փորձ անեն ու իմանան այդ հարցի պատասխանը, օգտակար բույսերի համար ավելի լավ պայմաններ (ստեղծել) և, հավանաբար, (կարողանալ) ավելի արդյունավետ պայքարել մոլախոտերի դեմ:

Բ. Խոտերն ու ծաղիկներն ինչպե՞ս (արտահայտել) զգացմունքները, եթե շարժվել կարողանային: Եթե բուսաբանները փորձ անեին ու իմանային այդ հարցի պատասխանը, օգտակար բույսերի համար ավելի լավ պայմաններ (ստեղծել) և, հավանաբար, (կարողանալ) ավելի արդյունավետ պայքարել մոլախոտերի դեմ:

340. Սխալները գտի՛ր.

ա) ըստ կազմված խոսքի՝ կետադրությունը ճշտի՛ր,

բ) ըստ կետադրության՝ խոսքը ճշտի՛ր:

Մի առիթով Սոֆոկլեսն ասաց, որ իմ մի ստեղծագործության երեք տողի վրա երեք օր աշխատել եմ:

- Երեք օ՛ր,- բացականչեց մեկ ուրիշ բանաստեղծ և ավելացրեց,- որ նույն ժամանակում ինքը հարյուր տող կստեղծեր: Սոֆոկլեսը պատասխանեց, որ միանգամայն հնարավոր է, բայց այդ ստեղծագործությունն ընդամենը երեք օր կապրեր:

341. Նախադասությունները հնարավոր ձևերով կետադրի՛ր այնպես, որ տարբեր իմաստներ ունենա:

Անգղերի կռնչցից վախեցած ձիերը խլշեցին ականջներ:

Ժայռի կատարին բազմած արծիվն ակնդետ նայում էր երկնի լազուրին:

Այս անգամ ուրիշ կաս-կարմիր փոխկապով էր նոր ածիլված դեմքով անսովոր առույգ ու կենսուրախ:

Տիկին Նվարդը գլխին մի խայտաբղետ մեծ գլխարկ ուրախ-ուրախ անցնում էր:

Օրիորդը գլուխը կախեց մտածության մեջ ընկավ Սամվելը նրա սիրելին փորձանքին էր ընդառաջ գնում:

Մանուկները գնում էին ծանոթ արահետով, որ տանում էր դեպի բուրգի քարանձավները սիրելի և երկյուղալի վայրեր:

342. Ընկերության վերաբերյալ հարցեր գրի՛ր, տարբեր մարդկանց հետ հարցազրո՛ւյց վարիր ու գրի՛առ (քո կարծիքը փորձիր տվածդ հարցերով արտահայտել):

343. Յուրաքանչյուր բարդ նախադասություն պարզեցրու՝ նրա մեջ եղած նախադասություններից մեկը հանելով (ուշադի՛ր եղիր, որ տեքստը պահպանվի):

«Հազար ու մեկ գիշեր» արաբական հեքիաթների շնորհիվ, որը ժամանակի ամենահայտնի գրքերից էր, տասնիններորդ դարի սկզբին Եվրոպայում շատերն իմացան Միջագետքի մասին: Հեքիաթների կախարդական աշխարհն այնպես էր թովել, որ անգլիացի երիտասարդ փաստաբան Օսթին Հենրի Լեյարդն էր որոշեց գնալ Բաղդադ, Դամասկոս ու Պարսկաստան: Ամեն օր, աշխատանքից հետո, իր գրքերի մեջ, որ նախապատրաստվի ճանապարհորդությանը: Սովորում էր անկյունաչափ ու կողմնացույց գործածել, աշխարհագրական քարտեզներ կազմել, պայքարել արևադարձային հիվանդությունների դեմ ու բառարանները ձեռքին՝ խորամուխ էր լինում արևելյան լեզուների գաղտնիքների մեջ:

344. Դո՛ւրս գրիր այն բայերը, որոնք կարող են կրավորական դառնալ, և դարձրո՛ւ:

Օրինակ՝ փնտրել-փնտրվել:

Վազել, երգել, ցրել, կոտրել, դնել, թռչել, թրջել, գալ, գնալ, հեռանալ, հեռացնել, հնարել, ներել, լուսանալ, մթնել, մթնեցնել, բարձրանալ, թխել, մրմռալ, մաքրել, դողալ, վախենալ, սրբել, կարել, հավաքել, սրսռալ, հաչալ, սիրել, մլավել, ծիծաղել, խոսել, հուզել, վիճել:

345. Տեքստի պարբերությունները վերադասավորի՛ր, որ տրված պլաններին համապատասխանի (անհրաժեշտության դեպքում կարող ես բառեր փոխել կամ ավելացնել): Յուրաքանչյուր տեքստում ի՞նչ է կարևորում, և բոլոր տեքստերում՝ ի՞նչը:

1. Ա. Ալեքսանդրիայի հին գրադարանի մասին

Բ. Համարձակ նախագիծ

Գ. Նոր գրադարանն իբրև գիտական կենտրոն

Դ. Նոր գրադարանն իբրև կառույց

Ե. Գրադարան և փարոս

2. Ա. Ալեքսանդրիայի հին գրադարանի մասին

Բ. Համարձակ նախագիծ

Գ. Գրադարան և փարոս

Դ. Նոր գրադարամմ իբրև կառույց

Ե. Նոր գրադարանն իբրև գիտական կենտրոն

2000 տարի առաջ Ալեքսանդրիայում կոչ է արվել՝ «Աշխարհի բոլոր գրքերը հավաքեցե՛ք»: Եվ հավաքեցին: Ստեղծվեց հին աշխարհի մեծագույն գրադարանը, և Ալեքսանդրիան գիտության կենտրոն դարձավ: Մեր կյանքը շատ աղքատ կլիներ առանց Ալեքսանդրիայից տարածված գիտելիքների և կարող էր անհամեմատ ավելի լավը լինել, եթե գիտության այդ օջախը չկործանվեր: Պատմության մեջ մեծագույն գրադարանը ծնվեց ու բարգավաճեց, բայց հետո պատերազմի հետևանքով ոչնչացավ:

Այժմ մի համարձակ նախագիծ է ստեղծվում նրա վերածննդի համար:

Նոր գրադարանը Ալեքսանդրիային վաղեմի հռչակը վերադարձնելու խնդիրն ունի: Նա 31 մետր բարձրություն և 70 հազար քառակուսի մետր տարածք է ունենալու: Գիտական կենտրոնի համար դա լիովին բավարար է:

Ըստ լավագույն նախագծի, կառույցն արևելյան նավահանգստի մոտ պիտի գտնվի, նշանավոր փարոսից ոչ հեռու: Հին գրադարանն էլ կառուցված է եղել դրա մոտ: Փարոսը հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկն էր, սակայն նսեմանում էր գրադարանի փառքի ստվերում:

Դա մշակույթի ու գիտության գրադարան կլինի: Այնտեղ չորս միլիոն հատոր գիրք կլինի: Իսկ դա Բրիտանական գրադարանի ունեցածի քառորդից ավելին է: Տեքստերի պահպանման համար ինչպես թուղթը, այնպես էլ էլեկտրոնային սարքերը կօգտագործվեն: Գրադարանն արաբական աշխարհին ու Միջերկրական ավազանի երկրներին կծառայի:

346. Կետերի փոխարեն դՀ, դ կամ թ գրի՛ր:

Ըն.ացք, ըն.արձակ, անըն.ատ, ըն.միջել, ըն.անուր, ըն.ամենը, ըն.անալ, ըն.րել, ակն.արթ, անդա.ար, ըն.երցել, ըն.առաջ, անըն.եռնելի:

347. Մեկ նախադասությամբ ներկայացված միտքը հինգ նախադասությամբ արտահայտի՛ր:

Կալանավորի փախուստը Սան Մարինո զաճաճ պետության բանտից բանտի աշխատակիցներին շատ անհանգստացրեց, որովհետև … նա միակ բանտարկյալն էր:

348. Բարդ նախադասությունները դարձրո՛ւ երկուական պարզ նախադասություններ:

Շվեյցարացի գիտնականները, էլեկտրոնային սարքավորումներով ստուգելով Լոզանի սիմֆոնիկ նվագախմբի հարյուրավոր երաժիշտների լսողությունը, պարզել են, որ զգալիորեն ավելի լավ վիճակում է չծխողների լսողությունը:

Նրանք եզրակացրել են, որ ծխելն ու երաժշտությունն անհամատեղելի են:

Իրաքի իշխանությունները պատրաստ են երկու միլիոն դոլար պարգև տալ նրան, ով կբացահայտի Շամիրամի կախովի այգիների ոռոգման գաղտնիքը:

Եթե ձեզ խայթել է իշամեղուն, ապա մի՛ շտապեք սատկացնել նրան:

Ֆլորիդայի նահանգի գիտահետազոտական աշխատարանի գիտնականներին երկար տարիների գիտափորձերից հետո հաջողվեց ազատել մի քիմիական միացություն, որն օդում արձակում է սատկած միջատը:

Այդ միացությունը չափազանց ագրեսիվ է դարձնում բոլոր մեղուներին և իշամեղուներին, եթե նրանք մոտակայքում ինչ-որ տեղ են գտնվում:

Իրենց բույնը պահպանելու նպատակով նրանք խայթում են ամեն մի կենդանի արարածի, որ հանդիպում է ճանապարհին:

Կալիֆոռնիայի նահանգում անցկացված հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ Լոս Անջելեսի և Սան Դիեգոյի միջև գտնվող ատոմային էլեկտրակայանի ջրային հովացման համակարգի պատճառով ծովային կենդանիների շատ տեսակներ ոչնչանում են, իսկ ծովափնյա ջրիմուռները՝ վնասվում:

349. Արտահայտություններ կազմի՛ր՝ հարցում արտահայտող բառերը գոյականներով փոխարինելով:

Անհրաժեշտություն կա (կամ չկա) ինչի՞:

Կարիք կա (կամ չկա) ինչի՞:

Հարկ կա (կամ չկա) ինչի՞:

Պաշտպան, ուժ, միջամտություն, կարգավորել, դիմել, միջամտել, խանգարելու:

350. Տեքստը մեկ նախադասությամբ փոխադրի՛ր:

Սըր Ուոլթըր Ռլեյնը (անգլիացի պետական գործիչ և ծովագնաց) Ամերիկայից Անգլիա բերեց երկու բույս՝ կարտոֆիլն ու ծխախոտը: Հավանաբար, նա Անգլիայում առաջին ծխողն է եղել:

Մի երեկո, երբ աշխատասենյակում նստած իր ծխամորճն էր ծխում, հայտնվեց ծառան՝ մի նամակ ձեռքին: Վերջինս ծխող մարդ երբեք չէր տեսել և կարծես, թե տերն այրվում է: Նա նամակը գցեց և ահաբեկված դուրս վազեց՝ գոռալով.

- Տերս այրվում է, տերս այրվում է, ծուխը դուրս է գալիս նրա քթից ու բերանից:

Հետո շտապ մի դույլ ջուր բերեց և տիրոջ վրա լցրեց: Վերջինս չհասցրեց անգամ բացատրել, թե ի՛նչ է իր ձեռքինը:

351. Ըստ տրված կաղապարների, բարդ նախադասություններ կազմի՛ր:

Ե՛վ----------և՛----------

Ոչ----------ոչ----------

Թե՛----------թե՛----------

Կամ----------կամ----------

352. Ընդգրկված նախադասությունները դարձրո՛ւ բառակապակցություններ:

Այն մարդկանց անունները, որոնք հաղթանակներ են տարել, նվաճելով օտար հողեր ու երկրներ, որոնք հաջողությամբ ոչնչացրել են իրենց դասակարգային, կրոնական կամ գաղափարական հակառակորդներին, հավերժացվել են պատմության հուշամատյաններում: Ժողովուրդները զորավարներին հուշարձաններ են կանգնեցնում, պսակներ դնում անհայտ զինվորների շիրիներին: Բայց նրանք, ովքեր հող են փորում տունդրայում կամ արևադարձային ջունգլիներում, համարյա միշտ կյանքից գնում են առանց հետք թողնելու: Այսօր ո՞վ է հիշում նրանց, որ ջրանցքների ու ճանապարհների կառուցման ժամանակ են զոհվել: Եվ , այդուհանդերձ, երբ նայում ենք Երկրին, չենք կարող նրանով չհիանալ: Մեր սիրտը ջերմանում է, երբ մտածում ենք, որ մարդը՝ Երկրի համեմատությամբ այդ անսահման փոքր էակը, իր մահկանացու ձեռքով անդրադրում աշխատում է, որ մեր մոլորակի կերպարանքը փոխի:

353. Նախադասությունն ընդարձակի՛ր կետերի փոխարեն որպես ի՞նչ, իբրև ի՞նչ, որպես ո՞վ, իբրև ո՞վ հարցերին պատասխանող բառակապակցություններ գրելով:

Էլիասը՝…, ինձ բացատրում էր ճանապարհը:

Անտառը՝…, մռայլ ու դժկամ տեսք ուներ:

Թռչունի առաջին ճիչը՝…., չափազանց զարմացրեց մեզ:

Իսկ այդ արձակ տարածության մեջ արձանն էր՝…:

Պահակը՝ …,որոշեց ինձ մենակ չթողնել:

Ներողամիտ հայացքով նրանց խուճապին ու իրարանցմանը հետևում էր նավաստին՝…:

Հարցերին պատասխանող պարոնը՝ …, անցավ հավաքվածների միջով ու մոտեցավ մեքենային:

354. Պատժի մասին գրի՛ր և գրածդ վերնագրի՛ր: Բայց նախ հետևյալ առաջադրանքները կատարի՛ր:

ա) Այդ թեմայի հետ կապված այն հարցերը գրի՛ր, որոնք քեզ հետաքրքրում են և որոնց պատասխանները չգիտես: Այդ հարցերն ո՛ւմ ուզում ես՝ տուր և հարցազրո՛ւյց գրիր:

բ)Այդ թեմայի հետ կապված այն հարցերը գրի՛ր ,որոնց պատասխանը գիտես կամ ենթադրում ես, բայց ինքդ այլ կարծիքի ես: Քո և քոնից տարբերվող բոլոր կարծիքները գրի՛ առ:

գ) Այդ թեմայի հետ կապված սրամիտ հարցեր գրի՛ր , որոնց մարդիկ դժվարությամբ կպատասխանեն, ո՛ւմ ուզում ես տուր և պատասխանները գրի առ: Ինքդ էլ պատասխանի՛ր այդ հարցերին:

355. Ուշադրությո՛ւն դարձրու տրված բառերի կազմությանն ու ուղղագրությանը և օրինաչափությունը բացատրիր:

Ա. Ոսկեվառ, գինեվաճառ, գերեվաճառ, գերեվարել, ոսկեվազ, հոգեվարք, կարեվեր, (ծանր (կարի) վերք ստացած):

Բ. Ոսկնորել, գոտնորել, ուղևոր, ուղևորվել, սերկևիլ, հնիհն:

356. Կետադրի՛ր (որտեղ անհրաժեշտ է):

Այդ մի մատղաշ ու խարտյաշ եղնիկ էր:

Ընկերս զվարթ ու կատակաբան շուրջն էր հավաքել բոլոր հյուրերին:

Կանաչազարդ դաշտավայրը ցողված վաղորդյան մարգարիտներով վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով:

Այդ առավոտ տեսածս առաջին բանը մեր ծիրանենին էր ծաղկազգեստ ու բուրող:

Մայրամուտին ծովը շառագույն ու հանդարտ հանկարծ ալեկոծվեց:

357. Պատմություն հորինի՛ր, որն ավարտվում է այսպես՝

Միևնույն է, ռնգեղջյուրն անկիրթ էր և՛ Նոյի ժամանակ, և՛ այժմ ու երբեք էլ չի փոխվի:

358. Բաց թողնված ստորակետերը կամ փակագծերը նշանակի՛ր:

Այս գիրքը դու դեմ չես լինի չէ՞ կնվիրենք Գևորգին:

Տատիկին ծաղիկներ կտանես նա այնքա՛ն շոյված կզգա:

Այդ նամակն ուղարկված էր ինքներդ տեսաք լրագրում տպելու համար:

Փոքրիկները խաղալիքից ու քաղցրավենիքից բացի ինձ գոնե այդպես է թվում ուրիշ բան չեն էլ ուզում:

Հանկարծ տեսավ իրենց հին, մի կողմի թեքված տունը ի՛նչ անհոգ ու ուրախ էր ապրել այնտեղ և բակի ծեր թթենին:

359. Սխալները գտի՛ր՝.

ա) ըստ կազմված խոսքի՝ կետադրությո՛ւնը ճիշտիր,

բ) ըստ կետադրության՝ խո՛սքը ճշտիր:

Մի սկսնակ բանաստեղծ այցելության է գնում Վիկտոր Հյուգոյին և խոսում իր մտադրությունների մասին: Վերջում երիտասարդը ոգևորված բացականչում է, որ մինչև մեռնելս կուզենայի մի մեծ ու մաքուր բան անել: Հայտնի գրողն ընդհատում է նրան ու ժպտալով ասում.

- Որ դա հեշտ է, թող երիտասարդը փորձի փիղ լողացնել:

360. Կատակելու և խաբելու վերաբերյալ հարցեր գրի՛ր, տարբեր մարդկանց հետ հարցազրույց վարի՛ր ու գրի՛ առ (քո կարծիքը փորձի՛ր տվածդ հարցերով արտահայտել):

361. Ընդգծված բառակապակցությունները նախադասությունների վերածի՛ր և ստացածդ տեքստը տրվածի հետ համեմատի՛ր՝ ո՞րն է՝

ա) ավելի հստակ,

բ) ավելի խրթին,

գ) ավելի գեղեցիկ:

Մենք մեր երկրային պատկերացումների բեռի տակ կքված երկրային բնակիչներս, մի պահ դժվարանում ենք պատկերացնել առանց անիվների տրանսպորտի հնարավորությունը, սակայն հայացք նետենք շրջապատին: Անիվ չունեցող սահնակները շարժվում են ձյան վրայով, իսկ նրանց նման ուրիշ սահակողավոր քարշակները՝ սահող այլ մակերեսներով: Վիթխարի հզորության հողափոր մեքենան՝ քայլող էքսկավատորը, տեղից տեղ փոխադրվելիս մարդու կամ ձիու քայլելուն նմանվող շարժումներ է անում: Ջունգլիների բնակիչները ճանապարհորդում են հսկայաքայլ ոստյուններով՝ օգտվելով լիանաների լայն ճոճումներից: Օդային բարձեր ունեցող ավտոմոբիլները խտացած օդի շերտի վրայով ես սահում: Ցամաքային երթևեկության այս բոլոր միջոցները տարբեր սկզբունքների վրա են հիմնված, բայց բոլորն էլ առանց անիվների են գործում: Եվ, այնուամենայնիվ, պատահաբար թե օրինաչափորեն, աշխարհում տրանսպորտը հիմնականում ահավոր է:

362. Գրավո ր փոխադրի՛ր՝ անուղղակի խոսքերը դարձնելով ուղղակի: Այնպե՛ս արա, որ ընդգծված բշաառերի իմաստներն ուղղակի խոսքում արտահայտվեն:

Օրինակ՝ Քույրը նեղացավ, որ եղբայրն իր գրած շարադրությունը չհավանեց: -

-Պա'հ, իմ գրած շարադրությունը չես հավանում, հա՞, - նեղացավ քույրը:

Յոթնամյա Մոցարտը համերգներ էր տալիս Մայնի Ֆրանկֆուրտում: Մի համերգից հետո նրան մոտեցավ տասնչորսամյա մի տղա, որը հիացավ Մոցարտի նվագով և ափսոսաց, որ ինքը երբեք այնդպես նվագել չի կարողանա: Մոցարտը զարմացավ, որ այդքան մեծ տղան չի կարողանում նվագել, և նրան խորհուրդ տվեց նոտաներ գրել, քանի որ նվագել չի հաջողվում: Տղան խոստովանեց, որ ինքը գրում է, բայց… բանաստեղծություններ: Փոքրիկ երաժիշտը ակնածանքով լցվեց և ենթադրեց, որ բանաստեղծություններ գրելն ավելի դժվար է, քան երաժշտություն հորինելը: Զրուցակիցը նրան հանգստացրեց, թե շատ հեշտ է, և ասաց, որ ինքն էլ կարող է փորձել: Նա պատանի Գյոթեն էր:

363. Ըստ տրված տեղեկության՝ մի պատմվածք գրի՛ր:

Մինչև օրս հայտնի երկրաբանական քարտեզներից ամենահինը Թուրինի թանգարանում է պահվում: Մ.թ.ա. տասներկուերորդ դարում, Ռամզես Չորրորդ փարավոնի ժամանակների Եգիպտոսում է դա կազմվել:

Վերջերս ամերիկյան մի համալսարանի երկրաբաններ քարտեզը նրա վրա նշված վայրի հետ են համեմատել: Պապիրուսի վրա Նեղոսից դեպի արևելք ընկած անապատային շրջաններում, բարձր բլուրների միջև, մեր ժամանակներում արդեն չորացած գետի հուն է գծված: Կարմիր, սև, դարչնագույն և սպիտակ գույներով մետաղի, քարի և այլ օգտակար հանածոների հանքերն են նշված:

364. Նախադասության միտքը հարթելու համար սխալ գործածված ժամանակաձևերը ճշտի՛ր:

Դժվար է ասել, թե մեր ժամանակներում քանի՛ օր կպահանջվեր աշխարհի բոլոր երկրներով անցնելու համար: Եթե ուղևորությունը կատարցի նավով ու գնացքով, մոտ երեսուն օր պետք կլիներ:

Թերևս մի ուրիշ բան չկա, որ մարդկային կյանքի մեջ այնքան շատ փոփոխություն մտցներ, որքան տրանսպորտը:

Ժյուլ Վեռնի «Ութսուն օրում աշխարհի շուրջը» վեպի լույս տեսնելուց շատ չէր անցել, երբ ամերիկացի մի լրագրող որոշում է իրականացնել Ֆիլեաս Ֆոգի ֆանտաստիկ մտահաղացումը:

Արդեն ստեղծել են տրանսպորտային թանկարժեք, բայց փոխարենը կատարյալ միջոցներ, որոնք ճանապարհների կարիք չեն զգա:

Մի մարդ ընկերոջը մի սնդուկ արծաթ պահ տվեց ու գնաց ճանապարհորդության: Երբ վերադարձավ, գնաց իր ապրանքը վերցրեց, տուն բերեց: Բացեց ու ի՛նչ տեսավ… Սնդուկի մեջ միայն երկաթի կտորանք էր: Ի՞նչ անի, ինչպե՞ս անի, որ իր փողերը ետ բերի: Մտածեց, մտածեց ու հնարը գտավ:

Երբ հերթական զոհերին են տանում հրեշի մոտ, նրանց միանում է թագավորի տղան, որ հաղթեր ջրի ճամփան փակողին ու մարդկանց ազատեր ահավոր տառապանքներից:

Ի՞նչ կանես, եթե հայտնվեր ու ամեն ինչ բացատրեր:

Ի՞նչ կտաս, որ քեզ մի իսկական շուն նվիրեի:

Ինչե՛ր կանեի, թե նորից սկսելու հնարավորություն ունենամ:

Ի՛նչ ասես չէի տա, որ ուզածիս հասնեմ:

365. Տեքստը կարդա՛, հարցերին պատասխանի՛ր և առաջադրանքները կատարի՛ր:

Անժառանգ մի թագավոր հանկարծամահ եղավ: Իշխաններն ու նախարարներն առաջին պատահած շինականի որդուն բերին նստեցրին թափուր գահին:

Երբ հայրը նրան արքայական հանդերձանքով և արդուզարդով տեսավ, հարցրեց.

- Այդ դո՞ւ ես, որդի՛ս:
- Չգիտեմ, մա՛րդ, չգիտեմ,- պատասխանեց թագավորը:
- Դու ինձ չե՞ս ճանաչում, տե՛ր արքա,- հուզվեց հայրը:
- Է՛, մա՛րդ,- ասաց արքան,- քեզ ինչպե՞ս ճանաչեմ, երբ ինքս ինձ չեմ ճանաչում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ արժառանգ թագավորը հանկարծակի մահացավ, պալատում ի՞նչ տեղի ունեցավ:

(Տրված պատասխաններից մեկն ընտրի՛ր)

- Մարդիկ շատ տխրեցին ու շփոթվեցին:

- Ուրախացան, որ թագավորը փոխվելու է:

- Սկսվեցին վեճերն ու խարդավանքները:

2. Պալատականներն ինչո՞ւ որ թե իրենցից մեկին, այլ շինականի որդուն թագավոր կարգեցին: (Տրված պատասխաններից մեկն ընտրի՛ր):

- Նրանք անհաշտ էին, չկարողացան իրենցից մեկին ընտրել:

- Թագավորն էր կատակել, որ իրենցից հետո պատահական մեկին նստեցնեն գահին:

- Վիճակ գցեցին, թե ո՛վ պիտի թագավոր լինի, և վիճակը շինականի որդուն ընկավ:

3. Նոր թագավորն ինչպե՞ս էր զգում պալատում (Տրված պատասխաններից մեկն ընտրի՛ր):

- Շփոթված էր:

- Ուրախ էր:

- Գոռոզացել էր:

4. Իշխաններն ու նախարարներն ի՞նչ վերաբերմունք ունեին նոր թագավոր նկատմամբ: (Տրված պատասխաններից մեկն ընտրի՛ր):

- Անկեղծորեն հարգում ու հպատակվում էին:

- Արտաքուստ հլու-հպատակ էին, բայց թաքուն ծաղրում էին:

- Դավ էին նախապատրաստում:

5. Հորն ինչպե՞ս ընդունեցին պալատում: (Տրված պատասխաններից մեկն ընտրի՛ր):

- Ճանաչեցին ու սիրով ընդունեցին:

- Չէին ուզում ներս թողնել:

- Արտաքուստ սիրով ընդունեցին, բայց թաքուն ծաղրում էին:

6. Հայր ու որդի ինչպե՞ս հանդիպեցին (Տրված պատասխաններից մեկն ընտրի՛ր):

- Ուրախ էին հանդիպման համար:

- Երկուսն էլ շփոթված էին, չգիտեին ի'նչ անել, երևի ավելի շատ կուզեին հանդիպած չլինել:

- Հպարտ էին իրարով:

7. Ինչո՞ւ թագավորն ասաց. «Քեզ ինչպե՞ս ճանաչեմ, երբ ինքս ինձ չեմ ճանաչում»:

8. Ո՞րն է ստեղծագործության ասելիքը:

9. Թվի՛ր սցենարիդ բոլոր հերոսներին, նկարագրի՛ր և բնութագրի՛ր նրանց:

10. Գործողությունները որտե՞ղ են կատարվում: Թվի՛ր բոլոր վայրերը (մեկ վայր կարող է լինել), որտեղ գործողություն են դնելու, ու դրանք նկարագրի՛ր:

11. Սցենար կազմի՛ր և վերնագրի՛ր:

366. Ըստ տրված կաղապարների՝ բարդ նախադասություններ կազմի՛ր:

Հենց որ ……., …….:

……., այնպես որ ……..:

Քանի դեռ ……., ……..:

……, թե …….:

……., թե՞ ……:

367. Տեքստն այնպե՛ս փոխադրիր, որ փղերի ոչնչացման համար մտահոգություն զգացվի:

Առաջիկա տասնամյակում Փղոսկրի Ափն առանց փղերի կարող է մնալ: Փղոսկրի Ափի բնության պահպանության ընկերությունը հաղորդում է, որ միայն վերջին տասնամյակում այդ կենդանիների գլխաքանակը հանրապետությունում պակասել է, ութ հազարից հասել երեք հազարի:

Փղերի լրիվ ոչնչացում է սպառնում նաև շատ ուրիշ վայրերի, որտեղ որսագողերի և փղոսկր վաճառողների դեմ ոչինչ չի ձեռնարկվում: Նրանք ձեռք բերած «ապրանքը» մաքսանենգությամբ հասցնում են Փարիզ, Լոնդոն ու Տոկիո և մեծ շահույթով վաճառում են:

368. Մեկ նախադասությամբ ներկայացված միտքը հինգ նախադասությամբ արտահայտի՛ր:

Ֆրանսիացի քիմիկոսները շաքարի մի քանի փոխարինիչ են ստացել՝ բուսաշաքարից երկու հարյուր հազար անգամ քաղցր:

369. Կետադրի՛ր:

Հույները ծովերի աստված Պոսեյդոնին եզ էին զոհաբերում որպես ջրային տարերքի հզորության խորհրդանիշ:

Քարակերտ ու կղմինդրածածկ փոքրիկ տունը որպես շքեղ ապարանք առանձնանում էր գյուղի խարխուլ տների մեջ:

Նկարահանող խցիկի մոտ անփույթ կանգնած էր Ջեկը իբրև իր արժեքն իմացող անփոխարինելի օպերատոր:

Տուփից ուղիղ դեպի կինը դուրս թռավ թունավոր կանաչ օձը իբրև դիպուկ նետված փեթտրագնդակ:

Իբրև սուրացող շնաձկանը կպած խխունջներ կառչել էինք վազող կենդանուց:

Լեռների ու բլուրների մեծ մասը որպես հրաբխային ժայթքման զավակներ վեր են նետված ստորերկրյա հզոր ուժերի կողմից:

370. Տրված տեքստերը փոխադրի՛ր՝ ընդհանուր վերնագիր և հետևություն գրելով:

Ա. Համաշխարհային ջրհեղեղն արդյոք չի՞ կրկնվի:

Եթե մարդիկ չափից ավելի շատ էներգիա և ջերմություն արտադրեն կամ էլ օդում ածխաթթու գազ կուտակվի և մթնոլորտը գերտաքանա, սառույցները կսկսեն արագորեն հալվել: Դա նշանակում է, որ արդեն հաջորդ դարում մարդկությանը մի նոր ջրհեղեղ կսպառնա:

Սա չափազանցություն չէ: Եթե միայն Գրենլանդիայի սառույցները հալվեն, Համաշխարհային օվկիանոսի մակարդակը 7-8 մետրով կբարձրանա: Անտարկտիդայի սառույցների հալվելը ևս 50-60 մետրով կբարձրացնի այն: Երկրի բևեռային շրջանների սառցապատման վերացումն աներևակայելի հետևանքներ կունենա: Խնդիրը միայն այն չէ, որ ցամաքն զգալիորեն կկրճատվի, նաև սեյսմիկ ակտիվությունը կբարձրանա, կլիմայական խոր փոփոխություններ կլինեն: Քաղաքակրթության գոյության հազարամյակների ընթացքում ձևավորված բոլոր պայմանները կխախտվեն:

Բ. Տիեզերական ցածր (երկրամերձ) ուղեծրերը «տիեզերական աղբով» են լցվել: Մասնագետներն ասում են, որ այդ «աղբի» հիմնական մասը շարքից դուրս եկած սարքերի բեկորներից է գոյացել: Ուղեծրում նաև դեն նետված հրթիռային աստիճաններ, ոչ պիտանի միջուկային ռեակտորներ, փորձարկված տիեզերական զենքի մնացորդներ կան: Ըստ հաշվարկների՝ առնվազն մեկ սանտիմետր տրամագծով երեսունից յոթանասուն հազար բեկոր է թափառում երկրագնդի շուրջը:

Եթե մոտ ժամանակներս որևէ միջազգային համաձայնագիր չկնքվի, ապա շուտով տիեզերական ցածր ուղեծրերում զանազան հնոտիներն այնքան շատ կլինեն, որ արբանյակների ու անձնակազմով տիեզերանավերի համար վտանգավոր կդառնան:

371. Որոշ բառեր ու արտահայտություններ հոմանիշներով փոխարինիր այնպե՛ս, որ տեքստի ոճը՝

ա) ավելի մոտ դառնա խոսակցականին,

բ) ավելի վերամբարձ դառնա:

(Ըստ անհրաժեշտության՝ կարող ես բառեր հանել, բառեր, բառաձևեր կամ բառերի դասավորություն փոխել:)

Օլիմպոսը, որտեղ անցկացվում էին օլիմպիական խաղերը, հին հույների գլխավոր սրբավայրերից մեկն էր: Յուրաքանչյուր չորս տարին մեկ տասնյակ հազարավոր ուխտագնաց էր հավաքվում այնտեղ: Եվ գալիս էին ոչ միայն Հունաստանի բնակիչները: Ողջ գարունն ու ամառը դեպի Օլիմպոս էին լողում նավեր նաև Իտալիայից, Սիցիլիայից, Փոքր Ասիայի ափամերձ քաղաքներից, Էգեյան ծովի կղզիներից:

Օլիմպոսի գլխավոր սրբությունը գերագույն աստծո՝ Զևսի տաճարն էր: Տաճարի խորքում խոյանում էր Զևսի վիթխարի արձանը՝ փառաբանված որպես հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը: Հունաստանում դժբախտ էին համարում այն մարդուն, որը չէր տեսել Ֆիդասի այդ հանճարեղ ստեղծագործությունը:

«Մարդկանց և աստվածների թագավոր» Զևսը նստած էր հոյակապ ու ճոխ զարդարված գահին: Նրա մարմնի վերին մասը մերկ էր, ներքևի մասը՝ փաթաթված թանկարժեք թիկնոցով: Զևսը մի ձեռքում պահում էր Նիկե աստվածուհու արձանը, մյուսում՝ գավազանը, որը պսակված էր նրա սրբազան թռչունի՝ արծվի պատկերով: Ձիթենու ճյուղերից պսակը զարդարում էր աստծո գլուխը:

Զևսի հսկայական արձանի վրա Ֆիդասի հետ աշխատող աշակերտներին սարսափեցնում էին արձանի ահռելի չափերը: Արձանը տաճարի ներքին տարածության մեկ երրորդն էր զբաղեցնում: Գահին նստած Զևսի գլուխը համարյա կպչում էր առաստաղին:

Նրա հագուստը, գլխի պսակն ու ժապավենները, ձեռքի Նիկեի հագուստն ու հաղթական պսակը պայծառ, շողշողացող ոսկուց էին: Զևսի գլուխն ու մարմինը, Նիկեի ամբողջ կերպարանքը փղոսկրից էին: Փղոսկրի ջերմ, դեղնավարդագույն երանգը Զևսի պատկերին զարմանալի կենդանություն էր տալիս:

Զևսի պատկերը դիտողի համար տպավորիչ էր ոչ միայն իր վեհությամբ: Դեմքին մի արտասովոր հմայք կար՝ խաղաղության ու բարության զգացում: Եվ միևնույն ժամանակ աստվածային հզորություն էր դրոշմված նրա ողջ կերպարի վրա: Ում հաջողվել էր տեսնել Ֆիդասի Զևսին, պնդում էր, որ ինքը ոչ թե արձան, այլ իսկական աստվածությունն է տեսել:

372. Նախադասությունները հնարավոր ձևերով կետադրիր այնպե՛ս, որ տարբեր իմաստներ ունենան:

Բերեցի շան համար կեր:

Շահ ունենա սիրտը կնվիրի այս տղան:

Դու մեր ձորերից չես հեռանա չէ:

Երկնքում շողացող աստղերից մեկն ընկնում է:

Ով է տվել Քեզ այդ նամակը:

373. Ընդգծված բառերն ու բառակապակցությունները ուղղի՛ր:

Բացի աղջիկը, բոլորն ուզում էին ուրիշ քաղաք տեղափոխվել:

Սիրահարված եմ ձեր երկրի վրա:

Հալվում, մաշվում էր հարազատ տան ու ընկերների կարոտով:

Կարոտում էր անգամ իրենց փողոցի ծառերը:

Ի՞նչ է նշանակում ընկերությունը դավաճանել:

Խոսքը վերաբերվում է քեզ ու քո ցանկություններին:

Ինչպե՞ս ես վերաբերում նրանց:

Քույրս երրորդ դասարան է:

Բաժակը դեռքն էր, որ մտավ:

Մարսը աղքատ է ջրով:

Շատ լավ է տիրապետում անգլերենը:

Բացի դա, ազատ ժամանակն ու արձակուրդն անցկացնում էր պրոֆեսորին ոչ սազական եղանակով:

Մուգ ակնոցներիդ պատճառով աչքերդ չեմ տեսնում:

374. Սխալ կազմված բայաձևերը ճշտի՛ր:

Ինչ-որ մութ մարդկանց հետ էր կապնվել:

Տղաները վիճվում էին բակում, ու վեճը կատակի նման չէր:

Դեռ շատ կտուժվես՝ ինձ չլսելով:

Խոսքս քեզ չի վերաբերվում:

375. Տեքստը համառոտ փոխադրի՛ր և հետևություննե՛ր արա:

Եթե մեկը հայտնվի և լրջորեն պնդի, թե երկրի միջուկը մարմելադից է, միանգամից կասենք, որ բնության մեջ մարմելադ չի լինում, դա մարդկային խոհանոցի արդյունք է, ու դրա գոյությունը ենթադրում է մրգատու ծառերի, դրանց պտուղների առկայություն: Կասենք, որ մարդիկ չգիտեն էլ, թե ինչպե՛ս կարելի է բուսականությունն ու խոհանոցային արվեստը երկրի ընդերք տեղափոխել: Հետո էլ հետազոտություններ կատարելու և պարզելու փոխարեն, թե արդյո՞ք երկրի միջուկն իսկապես մարմելադից է, հարց կտանք, թե այդ ի՞նչ մարդ է, որ նման միտք է հղացել: Կամ հենց իրեն կհարցնենք, թե դա որտեղի՞ց է նրան հայտնի դարձել: Իսկ մարմելադի մասին դժբախտ վարկածի հեղինակը խորապես կվիրավորվի և մեզ կմեղադրի, թե կեղծ գիտական նախապաշարմունքի պատճառով մերժում ենք իր պնդումն ու չենք կարողանում օբյեկտիվորեն գնահատել:

376. Կետադրի՛ր:

Կա մի գյուղ Դրմբոն ճանապարհից հեռու:

Ընկերներս գլխաբաց չթե հասարակ շապիկով երկու տղա քայլում էին գետափով:

Ես ու իմ ընկերը Անդոն հաց ենք տանում նրա հոր բրուտ Ավագի համար:

Կարմիր շորերով աղջիկը այդ բարձրահասակ երեխան հեռացավ կտուրից ու մոտեցավ աղջիկներին:

Մենք ես ու Ցոլակը մտանք բակ:

Մուխի մեջ երևաց ոսկե ծամիկներով Ազնոն դուստրը իմ վաղեմի ծանոթի:

Քամին աշխարհի հզոր ու անսանձ ոգին վայրագ ուժով խառնեց-պղտորեց գետի անշարժ ջրերը:

Մեր երեխաներիս աչքը չէր հեռանում արագիլներից:

Ամենավերին աստիճանին կանգնած էր իմ բարեկամը Բաֆուտի Ֆոնը:

Ծառերից հազարամյա կաղնիներից կանցնես ու կտեսնես փնտրածդ հյուղակը:

Հովտի մեջ հենց առվակի մոտ երկնագույն երերացող սյուն էր կանգնած:

Վիթխարի ծառի տակ նրա տախտականման արմատների մեջ ինձ անծանոթ միջատների կույտ կար:

Մեր տանն ապրելու ընթացքում մանավանդ հիվանդանալուց հետո այդ սկյուռը մարդամոտ էր ու շփվող:

Հաջորդ տարի աշնան առաջին օրերին մեր գազանանոցը մի հյուր էլ ունեցավ աֆրիկյան ջունգլիներից:

377. Փակագծերում տրված բայը պահանջված ձևով գրի՛ր:

Պարզվում է, որ մարդու առողջական վիճակը նախ և առաջ (կախվել) է մարդկային հարաբերություններից: Նախանձը, օրինակ, ոչ միայն որդի նման (կրծել) մարդու հոգին և (տակնուվրա անել) էությունը, այլև (առաջացնել) ստամոքսի խոց ու արյան ճնշման հիվանդություններ: Ահա թե ինչու են ասում. «Եթե (չցանկանալ) տառապել, մի՛ նախանձիր»: Զրպարտությունը, վիրավորանքը, շողոքորթությունը, անտաշ վերաբերմունքն ու հայհոյանքը նիկոտինի ու ալկոհոլի նման (թունավորել) նաև մարդու օրգանիզմը:

Երկրում առաջին ծխողները եգիպտական փարավոններն (լինել): Մ.թ.ա. երկրորդ հազարամյակին վերաբերող մի թանգարանում հնագետները ծխելու հարմարանքներ (գտնել):

Մենյակները ներկելիս պատուհաններն ու դռները փակ պիտի լինեն, որովհետև միջանցիկ քամին ու խոնավ օդը չեն թողնում, որ ներկը հավասարապես (չորանալ):

378. Տեքստը միայն պարզ նախադասություններով փոխադրի՛ր:

Հազար ինը հարյուր ութսունյոթ թվականի հունվարի մեկից Ֆինլանդիայում կենդանիների պաշտպանության վերաբերյալ նոր օրենք է ընդունվել, ըստ որի երկրի կրկեսներում փղերի ելույթներն արգելված են, քանի որ արևադարձային երկրների այդ հյուրերը վատ են հաղթահարում Սուոմիի ցուրտ կլիման: Փղերը միակ «մերժվածները» չեն. այդ ցուցակում հիշատակվում են նաև ռնգեղջյուրները, զեբրերը, ջայլամները, կոկորդիլոսները և կապիկները: Ֆինլանդիան աշխարհում առաջին երկիրն է, որը նման հակակրկեսային օրենք է ընդունել:

379. Սովորական մի առավոտ նկարագրի՛ր այնպես, որ զգացվի՝

ա) քո առավոտները սիրում ես,

բ) միապաղաղությունը քեզ հոգնեցրել է,

գ) ինչ-որ անակնկալ է սպասվում:

380. Սխալները գտի՛ր.

ա) ըստ կազմված խոսքի՝ կետադրությո՛ւնը ճշտիր,

բ) ըստ կետադրության՝ խո՛սքը ճշտիր:

Մի անգամ, ուշ երեկոյան, Ռեզերֆորդը մտավ լաբորատորիա: Թեև ուշ էր, բայց նրա բազմաթիվ աշակերտներից մեկը հակված էր գործիքների վրա ու ինչ-որ բան էր անում:

-Ի՞նչ եք անում այսքան ուշ,- հարցրեց գիտնականը:

- Աշխատում եմ,- հետևեց պատասխանը:

Ռեզերֆորդը զարմացավ, ինչո՞ւ, ցերեկն ի՞նչ էիք անում:

-Աշակերտը պատասխանեց,- որ ցերեկն էլ է աշխատում:

- Վաղ առավոտյան էլ ե՞ք աշխատում:

- Այո՛, պրոֆեսո՛ր,- հաստատեց աշակերտը՝ հայտնի գիտնականի շուրթերից գովեստի խոսքեր լսելու հույսով:

Ռեզերֆորդը մռայլվեց ու զայրացավ հարցրեց, թե իսկ ե՞րբ եք մտածում:

381. Երկու նոր տեքստ ստացիր՝

ա) բարդ նախադասությունները դերբայական կապակցությամբ նախադասությունների վերածելով,

բ) բարդ նախադասությունները երկուական նախադասություններ դարձնելով:

Ժամանակին մարդը հրաժեշտ կտա ցամաքային այն միջավայրին, որտեղ ինքը մարդ դարձավ: Արեգակնային լույսով ողողված հարթավայրերից ու բլուրներից կտեղափոխվի ծովի խորքը, որպեսզի ջրային էակների նման բնակվի ծովի հատակին կառուցված տներում: Մարդկությանն այդպիսի ապագա է գուշակում օվկիանոսագետ Ժակ Իվ Կուստոն, որը համաշխարհային հռչակ է ձեռք բերել:

Չնայած որ հնագույն ժամանակներից նավերն ակոսում են օվկիանոսի մակերեսը, ջրային տարերքը մարդուն խորթ է մնացել: Պրոֆեսոր Պիկարի որդին՝ Ժակ Պիկարը, որն իջավ օվկիանոսի ամենախոր-անդունդ Մարիանյան իջվածքը, ծովի անդորրը խռովող միակ հանդուգն էր: Իսկ Կուստոն պնդում է, թե մարդը ջրի տակ ապրելուն կարող է վարժվել:

382. Կետադրի՛ր:

Պլատոնի Ատլանտիդան ամենազարմանալի ու հանելուկային լեգենդներից մեկը ավելի քան երկու հազար տարի հուզում է մարդկությանը երկուսուկես հազարամյակ շարունակ վեճեր և ծավալվում Ատլանտիդսյի այդ առեղծվածային «երկրի» շուրջ որտեղ հավանաբար պետք է փնտրել Արեելքի և Արևմուտքի խոշորագույն քաղաքակրթությունների արմատները սակայն այդ հեռավոր անցյալում Հին Եգիպտոսի պատմության առաջին հայտնի շրջանից էլ 4-5 հազարամյակ առաջ ամեն ինչ անէանում է անգիտության մշուշում այդտեղ թափանցելը դեռևս անհնարին է օվկիանոսների ստորջրյա խորությունները նույնիսկ քսանմեկերորդ դարի նախաշեմին շարունակում են մնալ մեր մոլորակի ամենաթույլ ուսումնասիրված բնագավառներից սակայն հետազոտությունների շրջանակը աստիճանաբար նեղանում է քանի որ ծովային երկրաբաններն ավելի ու ավելի ակտիվորեն են թափանցում այնտեղ գլխավորն

իհարկե դեռ առջևում է չնայած Ատլանտյան օվկիանոսի երկրաբանական տարեգրության որոշ էջեր արդեն ընթերցված են Պլատոնը գրում է որ Ատյանտիդայի մասին լսել է իր պապից Կրիտիոսից իսկ վերջինս «իմաստունների իմաստուն» Սոլոնից դարավոր գաղտնիքը Սոլոնին են հաղորդել Նեղոսի դելտայում գտնվող Սաիս քաղաքի քուրմերը դեռևս մ. թ. ա. վեցերորդ դարում Սաիսի տաճարում պահպանված քրմական գրքերում գրառումներ են եղել մարդկության պատմության վաղեմի իրադարձությունների վերաբերյալ որոնց մասին Հելլադայում չգիտեին կամ գուցե արդեն մոռացել էին այնտեղ եղել են գրառումներ նաև Հերակլեսյան սյուներից այն կողմ գտնվող ատլանտների հզոր տերության Ջիբրալթարի նեղուցի ատլանտների ու հին հելլենների միջև եղած պատերազմների Ատլանտիդայի կործանման մասին: